

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ | ՀԱՄԱԽԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՄՏԲԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Ս. Գալստյան, Հ. Գ. Մարգարյան

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Ուսումնական ձեռնարկ

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016**

ՀՏԴ 330.8(07)

ԳՄԴ 65.02 ց7

Գ 206

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Գիտական խմբագիր՝

տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան

Գ. Ս. Գալստյան, Հ. Գ. Մարգարյան

Գ-206 Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ/ Գ. Ս. Գալստյան, Հ. Գ. Մարգարյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 136 էջ:

Ուսումնական ձեռնարկը կազմվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասավանդվող «Տնտեսագիտական մտքի պատմություն» դասընթացի ծրագրին համապատասխան: Նախատեսված է «Տնտեսագիտության տեսություն», «Կառավարում» և հարակից մասնագիտությունների ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար:

ՀՏԴ 330.8(07)

ԳՄԴ 65.02 ց7

ISBN 978-5-8084-2115-8

© ԵՊՀ հրատ., 2016

© Գ. Ս. Գալստյան, Հ. Գ. Մարգարյան, 2016

Քովանդակություն

Ներածական խոսք «Տնտեսագիտական մտքի պատմություն»	
գիտակարգի մասին	7
Թեմա 1. Ներածություն: Տնտեսագիտական մտքի պատմության առարկան և խնդիրները	17
Բաժին Ա. Տնտեսագիտական միտքը ավանդական հասարակություններում	18
Թեմա 2. Տնտեսագիտական միտքը Հին աշխարհում	18
Թեստային առաջադրանքներ	19
Թեստ N 2.ա Անտիկ աշխարհի տնտեսագիտական ուսմունքները	19
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	20
Թեմա 3. Տնտեսագիտական պատկերացումները Միջին դարերում	23
Թեստային առաջադրանքներ	24
Թեստ N 3.ա Միջնադարի տնտեսագիտական պատկերացումները	24
Թեստ N 3. բ Հայ տնտեսագիտական միտքը Միջին դարերում Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	26
Բաժին Բ. Անցման հասարակության տնտեսագիտական միտքը	28
Թեմա 4. Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները	28
Թեստային առաջադրանքներ	29
Թեստ N 4.ա Սոցիալ-ուտոպիական ուսմունքների առաջացումը	29
Թեստ N 4.բ Քաղաքատնտեսության առևտրային՝ մերկանտիլիստական համակարգի տեսական դրույթները	30
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	31
Թեմա 5. Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում և Ֆրանսիայում	34
Թեստային առաջադրանքներ	35
Թեստ N 5.ա Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում և Ֆրանսիայում	35
Թեստ N 5.բ Ֆիզիոկրատների դպրոցը և Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակը	36

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	37
Թեմա 6. Ադամ Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը	40
Թեստային առաջադրանքներ	41
Թեստ N 6.ա Սմիթը և նրա «Ազգերի հարստություն» աշխատությունը	41
Թեստ N 6.բ Արժողության, շահույթի և ռենտայի սմիթյան տեսությունը	43
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	44
Բաժին Գ. Վերելքի փուլի տնտեսագիտական տեսությունները	47
Թեմա 7. Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը. Ժ. Բ. Սեյ, Թ. Ռ. Մաթուս	47
Թեստային առաջադրանքներ	48
Թեստ N 7.ա Սեյի շուկաների օրենքը	48
Թեստ N 7.բ Մաթուսի իրացման տեսությունը	49
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	50
Թեմա 8. Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը	52
Թեստային առաջադրանքներ	53
Թեստ N 8.ա Տնտեսական աճը և ռենտան՝ ըստ Դավիթ Ռիկարդոյի	53
Թեստ N 8.բ Ռիկարդոյի արժեքի տեսությունը և ժամանակի գործոնը	54
Թեստ N 8.գ Ռիկարդոյի համեմատական առավելությունների սկզբունքը	55
Թեստ N 8.դ Ռիկարդոյի բաշխման տեսությունը	56
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	57
Թեմա 9. Ջոն Ստյուարտ Միլը և նրա «Քաղաքատնտեսության սկզբունքները»	63
Թեստային առաջադրանքներ	64
Թեստ N 9.ա Ջոն Ստյուարտ Միլի «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատությունը	64
Թեստ N 9.բ Ջ. Միլի արժեքի տեսությունը և առաջարկի առաձգականության գաղափարը	65
Թեստ N 9.գ Միլի միջազգային արժողության տեսությունը և պահանջարկի առաձգականությունը	65
Թեստ N 9.դ Միլի եկամուտների տեսությունը. սոցիալիզմ	66

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	67
Թեմա 10. Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը	71
Թեստային առաջադրանքներ	72
Թեստ N 10.ա Կ. Մարքսի «Կապիտալը». կառուցվածքը, դերը տնտեսագիտության զարգացման գործում	72
Թեստ N 10.բ Մարքսի արժեքի տեսությունը	73
Թեստ N 10.գ Հավելյալ արժեքի մարքայան տեսությունը	74
Թեստ N 10.դ Մարքսի աշխատավարձի տեսությունը	74
Թեստ N 10.ե Շահույթի մարքայան տեսությունը	75
Թեստ N 10.զ Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը», կապիտալիզմի ճակատագիրը	76
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	77
Թեմա 11. Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ	83
Թեստային առաջադրանքներ	84
Թեստ N 11.ա Պատմական ուղղության ձևավորումը և էությունը	84
Թեստ N 11.բ Նոր և նորագույն պատմական դպրոցների առանձնահատկությունները	85
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	86
Բաժին Դ. Արագ հասունացման փուլի տնտեսագիտական տեսությունները	88
Թեմա 12. Մարժինալիզմ, սահմանային օգտակարության տեսությունը	88
Թեստային առաջադրանքներ	89
Թեստ N 12.ա Սահմանային օգտակարության սկզբունքը, Գոսենի օրենքները	89
Թեստ N 12.բ Արժողության սահմանային օգտակարության տեսությունը ..	90
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	91
Թեմա 13. Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը	93
Թեստային առաջադրանքներ	94
Թեստ N 13.ա Մարշալի տնտեսագիտական տեսությունը, տնտեսագիտության առարկան	94
Թեստ N 13.բ Գնի մարշալյան տեսությունը	95

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	96
Բաժին Ե. Տնտեսագիտական միտքը նորագույն ժամանակաշրջանում	98
Թեմա 14. Ինստիտուցիոնալիզմ	98
Թեստային առաջադրանքներ	99
Թեստ N 14.ա Ինստիտուցիոնալիզմի ձևավորումը և հիմնարար սկզբունքները	99
Թեստ N 14.բ Վերլենի էֆեկտը և բարեփոխումների տեսությունը	100
Թեստ N 14.գ Ջ. Գելբրեյթ. հավասարակշռող ուժը և բարեկեցությունը...	101
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	102
Թեմա 15. Քեյնսյան տեսությունը	105
Թեստային առաջադրանքներ	106
Թեստ N 15.ա Դասական սկզբունքների քեյնսյան քննադատությունը	106
Թեստ N 15.բ Տնտեսական մեծությունների քեյնսյան համակարգը. բազմարկիչ	107
Թեստ N 15.գ Քեյնսյան քաղաքականության սկզբունքները	108
Թեստ N 15.դ Տոկոսադրույթի քեյնսյան մեկնաբանությունը	109
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	110
Թեմա 16. Նոր պահպանողական տեսությունները	114
Թեստային առաջադրանքներ	115
Թեստ N 16.ա Մոնետարիզմի ձևավորումը, հիմնական սկզբունքները	115
Թեստ N 16.բ Փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանությունը	116
Թեստ N 16.գ Ֆիլիպսի կորը. էմպիրիկ և տեսական հիմնավորումը	117
Թեստ N 16.դ Ֆիլիպսի կորի մոնետարիստական մեկնաբանությունը	118
Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները	119
Գիտելիքների ստուգման հարցաշար դասընթացի բովանդակության շրջանակներում	123
Կուրսային աշխատանքների թեմաներ	129
Ուսումնական և տեղեկատվական գրականություն. դասագրքեր և ծեռնարկներ	133

Ներածական խոսք
«Տնտեսագիտական մտքի պատմություն»
գիտակարգի մասին

Հազիվ թե հանդիպած լինեք ոմն մեկին, որն իր ներկայացրած գիտության և գիտակարգի մասին հայտնի թերաբժևորող տեսակետներ՝ խոսելով այդ ոլորտի անկարևորության և դյուրինության մասին: Որպես կանոն՝ այդ առնչությամբ արված արտահայտությունները լրիվ հակառակ բովանդակության են: Մենք կխոսափենք հետևել այս կարծրատիպին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ տնտեսագիտության մեջ գոյություն չունեն պարզ կանոններ, որոնք թույլ կտան սահմանազատել ճշմարիտ սկզբունքը սխալականից, համապատասխանը՝ անհարիրից: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ լինելով ժամանակակից հասարակական գիտությունների տարեկիցը՝ տնտեսագիտությունը բավականին «ծերունացված» հեղինակների զավակն է: Համոզվելու համար անհրաժեշտ է գրառել բոլոր վաստակաշատ տնտեսագետների (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Ջ. Միլ, Ա. Մարշալ, Ջ. Քեյնս, Մ. Ֆրիդմեն և թեկուզ Կ. Մարքս) ծննդյան և հիմնական աշխատությունների հրապարակման տարեթվերը ու համեմատել այլ ոլորտների ներկայացուցիչների հետ: Ակնհայտ կդառնա, որ տնտեսագիտական որևէ հայեցակարգի ձևակերպումը, գիտելիքից բացի, պահանջել է կենսափորձ, ինչը փաստորեն պարտադիր չէ բանասերի կամ ֆիզիկոսի համար: Բացի այդ՝ կենսափորձն անպայմանորեն արտացոլվել է նրանց շարադրած հայեցակարգերում: Թվարկված հեղինակների շարքում միայն տղամարդիկ են, որի արձանագրումը որևէ խտրականական շարժառիթ չունի իր հիմքում: Պարզապես կանայք, լինելով ավելի ողջամիտ, հավանաբար խոսափել են այդ բարդագույն ոլորտի գլխացավանքներից:

Գաղտնիք չէ, որ մարդկային կենսագործունեության ցանկացած ոլորտում փորձն ավելի շուտ է ի հայտ եկել, քան գիտությունը: Բնության և հասարակության մեջ գործող ուժերի համակարգված ուսումնասիրությունները հաջորդել են գործնական կյանքում այդ ուժերի

կիրառման բազմաթիվ փորձերին: Ուստի զարմանալի էլ չէ, որ տընտեսագիտությունը՝ որպես գիտություն, ծագել է շատ ավելի ուշ, քան տնտեսության վարման մասին դատողությունները՝ տնտեսագիտական միտքն ու տնտեսական մտածողությունը: Վերջիններս (և սա անառարկելի է) մարդ կոչվածի անբաժան ուղեկիցն են եղել նրա արարման ավարտի հենց առաջին ակնթարթից: Հասկանալի է նաև, որ սկզբնապես տնտեսագիտական միտքը ուղղված է եղել տնտեսվարմամբ ծագած խնդիրների լուծմանը: Միայն մտածողական ու գիտելիքի որոշակի պաշարի կուտակումից հետո են արվել տեսական ընդհանրացումների առաջին փորձերը: Հետևաբար «Տնտեսագիտական մտքի պատմությունը» պետք է ուսումնասիրի տնտեսական միտքը և տնտեսագիտական ուսմունքները, դրանց ձևավորումը, զարգացումը և փոխադարձ ազդեցությունը մարդկային հասարակության զարգացման ողջ ընթացքում: «Տնտեսագիտական մտքի պատմություն» գիտակարգն էլ, կոչված լինելով բացահայտել և ուսումնասիրել դեպի ներկայումս ճշմարիտ համարվող սկզբունքները տանող ճանապարհները, նպատակ ունենալով օժանդակել ժամանակակից տնտեսագիտության ձևակերպումների առավել համակողմանի ըմբռնմանը, արդարացիորեն պետք է ներառի մարդկային պատմության ողջ ժամանակահատվածը:

Ալկմիայտ է, որ գործ ունենք պատմականորեն ահռելի ժամանակաշրջանի ու ծավալուն նյութի հետ: Եվ այստեղ, իհարկե, առաջ է գալիս մարդկության պատմական միասնական ընթացքը փուլայնացնելու՝ որոշակի ժամանակահատվածների բաժանելու բազմաբարդ հիմնահարցը: Վերջինս արդյունավետ կլինի, եթե իրականացվի՝ նախ հաշվի առնելով տնտեսագիտության ուսումնասիրության առարկան: Եվ որքան էլ բազմազան թվան տնտեսագիտության առարկայի գոյություն ունեցող սահմանումները՝ հարստության բնույթից և պատճառներից մինչև ինչ-որ վերացական հարաբերությունների ուսումնասիրություն, իրողությունը մեկն է. տնտեսագիտության հիմքում դրված են երկու անժխտելի փաստեր, ռեսուրսների սահմանափակությունը և պահանջմունքների անսահմանությունը, երկրորդ՝ հասարակությունների զարգացման անընդհատության

խզումները: Հատկապես վերջին հանգամանքը շարունակաբար մնում է գիտական և քաղաքական բանավեճերի առարկա: Ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել փուլայնացման ամենահայտնի փորձերը՝ հույս ունենալով, որ մեր ընտրությունը՝ հոգուտ տնտեսական աճի փուլերի տեսության, արդարացի է և առավել չափով հավանումների կարժանանա:

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսությունը, որն երբեմն վերագրվում է Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին, կառուցված էր իրենց նախորդների՝ Սեն-Սիմոնի, Հեգելի, Լ. Հ. Մորգանի հայեցակարգերի հենքի վրա: Միաժամանակ Մարքսն ու Էնգելսը իրենց տեսությունը փորձել էին հիմնավորել՝ բազմաթիվ հղումներ անելով պատմական սկզբնաղբյուրների, ժամանակագրական աղյուսակների, փաստական նյութի վրա: Այնուամենայնիվ, այդ տեսությունը ըստ էության կառուցված է մի կողմից՝ նախորդների և ժամանակակիցների պատկերացումների դրվագային ընկալման, մյուս կողմից՝ իրենց հասարակական քաղաքական դիրքորոշմամբ պայմանավորված մտապատկերային ենթադրությունների կիրառությամբ: Իհարկե, հասարակական-տնտեսական ֆորմացիաների հայեցակարգի առնչությամբ պատմության «օբյեկտիվ» տրամաբանության մասին Մարքսի և Էնգելսի պատկերացումները ևս որոշակի փոփոխություններ են ունեցել:

Այսպես, սկզբում նրանք առաջնորդվում էին Սեն-Սիմոնի տրամաբանությամբ՝ նույնացնելով ստրկատիրությունը և Հին աշխարհը, միջնադարը և ճորտատիրությունը, ազատ (վարձու) աշխատանքը և Նոր ժամանակը: Այնուհետև, որոշ փոփոխություններ կատարելով, փոխ առան Հեգելի՝ համաշխարհային պատմության փուլայնացման տարբերակը. Հին Արևելք՝ ոչ ոք ազատ չէ, Անտիկ աշխարհ՝ որոշ ազատություններ, գերմանական աշխարհ՝ բոլորը ազատ են: Հին Արևելքը նրանց մոտ վերանվանվեց արտադրության ասիական եղանակ, Անտիկ աշխարհը՝ ստրկատիրական հասարակություն, իսկ գերմանական աշխարհը բաժանվեց ճորտատիրության և կապիտալիզմի:

Մարքսյան հայեցակարգում հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմքում ընկած է որոշակի արտադրանական, վերջինս էլ արտադրողական ուժերի (աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ՝ արտադրության միջոցներ և արտադրական հմտություններ ունեցող մարդիկ) և յուրահատուկ հարաբերությունների միասնությունն է: Մարքսը «Կապիտալում» աշխատանքը բնորոշել է հետևյալ կերպ. «Աշխատանքը նախ և առաջ մարդու ու բնության միջև կատարվող պրոցես է, մի պրոցես, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև (Մարքս Կ., Կապիտալ. հ 1, Եր., 1954, էջ 188): Առաջին հայացքից միանգամայն ընդունելի թվացող ձևակերպումը մտածողական լավ քողարկված որոգայթ է պարունակում: Համաձայն մարքսյան այս սահմանման՝ ստացվում է, որ բնության և մարդու միջև նյութավոխանակություն չիրականացնող գործունեության ցանկացած տեսակ, իսկ այդպիսին է ծառայություն ստեղծող մարդկային ջանքը, լինի դա մտավոր թե ֆիզիկական, աշխատանք չէ, հետևաբար նաև հարրստության աղբյուր չէ:

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը որոշվում է աշխատանքի բաժանման աստիճանով, արտադրության միջոցների, ամենից առաջ՝ տեխնիկայի համապատասխան զարգացումով, ինչպես նաև մարդկանց արտադրական հմտությունների և գիտելիքների զարգացման աստիճանով: Արտադրության ընթացքում մարդիկ, ակտիվ փոխներգործելով բնության հետ, միաժամանակ նաև հարաբերությունների մեջ են մտնում իրար հետ: Վերջինիս միջոցով է, որ հնարավոր է դառնում փոխներգործությունը բնության հետ: Եվ այն որոշակի կապերն ու հարաբերությունները, որոնց մեջ մարդիկ, ըստ Մարքսի, «անկախ իրենց կամքից ու գիտակցությունից», մտնում են նյութական արտադրության պրոցեսում, կոչվում են հասարակական-արտադրական կամ տնտեսական հարաբերություններ: Այստեղից էլ հասարակական տնտեսական ֆորմացիան հասարակության զարգացման որոշակի փուլ է, բնորոշվում է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով և դրան համապատասխանող և դրանով

ուղղակիորեն պայմանավորվող արտադրական հարաբերությունների պատմական ձևով: Այսինքն՝ գոյություն չի կարող ունենալ արտադրողական ուժերի զարգացման որևէ ֆորմացիոն փուլ, որին չհամապատասխանի իրենով որոշվող արտադրական հարաբերությունների տեսակ: Յուրաքանչյուր ֆորմացիայի հիմքում ընկած է արտադրության որոշակի եղանակ, վերջինս արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների պատմական կոնկրետ միասություն է:

Ընդ որում, ըստ Մարքսի, արտադրական հարաբերությունների ամբողջությունն է ձևավորում տվյալ ֆորմացիայի էությունը: Ֆորմացիայի տնտեսական հիմքը հանդիսացող տվյալ արտադրական հարաբերությունների համակարգին համապատասխանում է իրավաքաղաքական և գաղափարաբանական վերնաշենք: Ֆորմացիան իր կառուցվածքում ներառում է ոչ միայն տնտեսական, այլև մյուս բոլոր հասարակական հարաբերությունները, ինչպես նաև կենցաղը, ապրելակերպը: Հասարակությունների անցման պատճառը մի փուլից մյուսին հիմնականում պայմանավորվում է արտադրողական ուժերի զարգացմամբ, որի հետևանքով առաջանում է հակասություն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև:

Մարքսի և Էնգելսի հասարակական-տնտեսական ֆորմացիայի տեսությունը ավարտում չէ բազմաթիվ կարևորագույն հարցերն անպատասխան թողնելու պատճառով: Այդուհանդերձ, ելնելով «պատմության օբյեկտիվ տրամաբանությունից», համաշխարհային պատմական ընթացքը նրանք բաժանել են հասարակական տնտեսական հինգ ֆորմացիաների՝ նախնադարյան-համայնական (նախնադարյան կոմունիզմ), ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և կոմունիստական: Ակնհայտորեն եվրոպական պատմությունը արտացոլող մման փուլայնացումը որոշ վերապահումներով կիրառվում էր նաև աշխարհի այլ երկրների նկատմամբ, ինչն ավելի էր մեծացնում տեսության և իրականության խզումը:

Իհարկե, այս հայեցակարգի ձևավորմանը հաջորդած մեկ և կես դարում մարդկանց պատկերացումները համաշխարհային պատմական ընթացքի վերաբերյալ անհամեմատ ընդլայնվել ու խորացել են:

Անառարկելի է, որ մարդկային պատմությունը ակնհայտորեն չի տեղավորվում հասարակության զարգացման ֆորմացիոն տեսության մեջ: Այս անհամապատասխանությունը քննարկվում էր նույնիսկ կոմունիստական գաղափարախոսության միահեծան տիրապետության շրջանում: Համաձայն մարքսյան հայեցակարգի՝ կապիտալիզմին հաջորդափոխած սոցիալիզմը՝ կոմունիստական արտադրանական սկզբնական փուլը, պետք է ապահովեր աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն և արտադրության արդյունավետություն, մարդկանց բարեկեցության ավելի բարձր մակարդակ, ժողովրդավարության ավելի լայն սահմաններ: Սակայն իր գոյության ողջ ընթացքի որևէ հատվածում անգամ ԽՍՀՄ-ում կամ սոցիալիստական որևէ այլ երկրում այդ նվաճումները առկա չէին: Յանկացած հնարքով հաշվարկելու դեպքում էլ ԽՍՀՄ-ի ցուցանիշները էապես զիջում էին միջին զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների համապատասխան տվյալներին:

Այսպիսով, հասարակությունների՝ ըստ ֆորմացիաների զարգացման հայեցակարգը աղավաղված և ըստ էության մեխանիկական կապվածությունների միջոցով համամարդկային առաջընթացը թերի, ուստի և կիրառական տեսանկյունից անպտուղ մեկնաբանելու օրինակ էր: Իսկ դրա ձևակերպումը և տարածումը առավելապես պատճառաբանվում էր գաղափարաբանական ուղղվածությամբ և քաղաքական հավակնություններով, քան գիտական ճանաչողության խորացման մասնագիտական պահանջներով: Իհարկե, երբևէ քննարկման առարկա չի կարող դառնալ այն իրողությունը, որ ցանկացած գիտական հետազոտություն տեսական և գործնական որոշակի նպատակ է հետապնդում: Սակայն, երբ այդ հետազոտությունը ուղղորդվում է հենց այդ նպատակներով, ապա կանխակալ դիրքորոշման հետևանքով իրատեսական արդյունքներ ստանալը գործնականում բացառվում է: Ուստի ցանկացած գիտական ուսումնասիրություն անհրաժեշտաբար պետք է կառուցվի քննվող առարկայի բովանդակությունից ելնելով, ինչից հետևողականորեն խուսափել են մարքսիզմի հիմնադիրները և նրանց հետևորդները:

Տնտեսական աճի փուլերի տեսությունը, որի ծնունդն արձանագրվեց ամերիկյան սոցիոլոգ և տնտեսագետ Ուոլտ Ռոստոուի «Տնտեսական աճի փուլերը: Ոչ կոմունիստական մանիֆեստ» գրքի լույսընծայմամբ, տնտեսագիտության մեջ ինդուստրիալ հայեցակարգի զարգացման արգասիքն էր: Իսկ վերջինիս հիմքերը դրվել էին դեռևս տասնիններորդ դարի վերջերին Թորստեն Վեբլենի աշխատություններում: Զսաներորդ դարի կեսերին, այսպես կոչված, գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով այն կրկին հրատապություն ձեռք բերեց: Իսկ «ինդուստրիալ հասարակության» հայեցակարգի հիմնադիրն էր ավստրիական ծագմամբ ամերիկյան տնտեսագետ Փիթեր Դրաքերը, որն այս հիմնահարցի քննարկմամբ նախորդ դարի քառասունական թվականներին և հետագայում հանդես եկավ մի քանի ծավալուն հետազոտությունների հրատարակմամբ («Ինդուստրիալ մարդու ապագան» (1942 թ.), «Կորպորացիայի տեսություն» (1946 թ.), «Նոր հասարակություն. ինդուստրիալ կարգի անատոմիան» (1949 թ.), «Հետկապիտալիստական հասարակություն» (1993 թ.) և այլն):

Ընդ որում, ինդուստրիալ հասարակության տեսությունը զուտ ամերիկյան «արդյունք» չէր, և դրա զարգացման գործում մեծ ավանդ ունեցան նաև ֆրանսիացի սոցիոլոգներ Ժակ Էյուլը և Ռայմոն Արոնը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հարկադրում է համոզվել, որ տնտեսագիտության բնագավառում իրապաշտական հայեցակարգերը ձևավորվել են անկախ հեղինակների գաղափարաբանական նախասիրություններից և նպատակադրված են եղել բացատրել իրականությունը և ոչ թե ի սկզբանե հերքել այս կամ այն տեսությունը, ինչը շատ հաճախ փորձում են մատնացույց անել ֆորմալիզմ տեսության հետևորդները:

Ի տարբերություն «ինդուստրիալ հասարակության» հայեցակարգի այլ տեսությունների, որոնց կիզակետում առաջընթացի տեխնիկատեխնոլոգիական գործոնն է, Ու. Ռոստոուի տնտեսական աճի փուլերի տեսությունը, մեր համոզմամբ, ավելի ընդգրկուն է, քանի որ որպես սահմանազատող չափանիշ է կիրառում արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը: Իսկ

վերջինս չի պայմանավորվում միայն տեխնիկատեխնոլոգիական գործոններով: Այստեղ էական դեր ունեն հասարակական կյանքի այլ ոլորտները ևս՝ ավանդույթներն ու բարոյականությունը, իրավունքը, քաղաքականությունը և այլն: Իսկ առհասարակ զանազան տեսությունների առկայությունը և նրանցում շարադրված արտաքինապես թվացյալ տարբերությունները առավել չափով պայմանավորված են բոլոր ժամանակներում հատկապես տնտեսագիտությանը բնորոշ համընդգրկուն ախտանիշով, որը երևի մեր գիտության անբաժան ուղեկիցն է:

Հասարակական գիտությունների կապակցությամբ դժվարանում ենք պնդել, բայց տնտեսագիտության բնագավառում բազմաթիվ են միևնույն բովանդակությունը՝ գիտական հասկացությունը, տարբեր տերմիններով (օրինակ՝ արժողություն, արժեք, գին) նշելու դեպքերը: Վերջինս անպտուղ բանավեճերի պատճառ է դառնում, որոնց ընթացքում մոռացության է մատնվում ուսումնասիրության բուն առարկան: Մյուս կողմից, սակավաթիվ չեն նաև բոլորովին տարբեր բովանդակությունները միևնույն տերմինով (օրինակ՝ զուտ արդյունքը, հավելյալ արդյունքը և արժեքը, նորմալ և զուտ (տնտեսական) շահույթները «շահույթ» տերմինով) նշելու դեպքերը, ինչը ավելի է մեծացնում խառնաշփոթը: Իհարկե, այս վտանգները միշտ էլ գիտակցվել և մատնացույց են արվել տնտեսագետների կողմից: Տնտեսագիտության արագ առաջընթացը խոչընդոտող այս հանգամանքի մասին գրել են թե՛ Թ. Մալթուսը տասնիններորդ դարասկզբին, թե՛ Ջ. Միլը նույն դարի կեսերին, թե՛ Ա. Մարշալը նույն դարի վերջերին, և թե՛ գրվել է հետագայում, սակայն այդ իրողությունից անհնարին է եղել խուսափելը:

Ռոստոմի ձևակերպած լուծումը, մեր համոզմամբ, նախ առավել իրատեսորեն և ամբողջական է արտացոլում մինչ այժմ ընթացող զարգացումները, և երկրորդ, հնարավորություն է ընձեռում առավել համակողմանիորեն ախտորոշելու հետկոմունիստական հասարակությունների ներկա կացությունը և նախանշելու մարդկանց բարեկեցության աճի ուղիներն ու պայմանները: Ինչպիսին էլ լինեն ընթացիկ կարգախոսները, միևնույն է, ցանկացած հասարակության իրական նպատակը մարդկանց բարեկեցությունն է՝ բառի ամենաընդգրկուն

իմաստով: Ռոստոուն սահմանազատել է տնտեսական աճի վեց փուլ՝ **I.** Ավանդական հասարակություն, **II.** վերելքի նախադրյալների ձևավորում, **III.** վերելք, **IV.** ընթացք դեպի հասունացումը, **V.** զանգվածային սպառման դարաշրջան, **VI.** կյանքի որակական պայմանների բարելավում:

«Ավանդական հասարակությանը» բնորոշ են ձեռքի պարզագույն տեխնիկան, ձեռքի աշխատանքը և գյուղատնտեսության գերակշռությունը: Այս փուլը ընդգրկում է մարդկային հասարակության ողջ պատմությունը մինչև XVII դարը:

Աճի երկրորդ փուլը «անցման վիճակում գտնվող հասարակությունն է», որում ստեղծվում են վերելքի նախապայմանները: Այս փուլը բնորոշվում է կենտրոնացված ազգային պետությունների ձևավորմամբ: Հասարակության մեջ առանձնանում է «ձեռներեց մարդկանց նոր տեսակը <...>, որոնք ձգտելով շահույթի կամ նորարարության, ցանկանում են հավաքագրել խնայողությունները և իրենց վրա վերցնել ռիսկերը»: Երկրորդ փուլում կազմավորվում են բանկերը, ընդլայնվում են ներդրումները, աշխուժանում է արտաքին և ներքին առևտուրը:

Երրորդ՝ վերելքի փուլը, բնորոշվում է նրանով, որ հասարակության մեջ սկսում են գերակայել տնտեսական առաջընթացի ուժերը: Ջարգացումն ընթանում է ի շահ ողջ հասարակության: Ջարգացած երկրներն այս փուլն անցել են պատմական տարբեր ժամանակահատվածներում՝ Անգլիան՝ XVIII դարի վերջին երկու տասնամյակում, Ֆրանսիան և ԱՄՆ-ն՝ XIX դարի կեսերին:

Չորրորդ փուլին բնորոշ են մշտական առաջընթացը, տեխնիկայի կատարելագործումը, նոր տեխնոլոգիաների տարածումը տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, ազգային արդյունքի աճի գերազանցող տեմպերը բնակչության թվաքանակի համեմատությամբ: Այս ընթացքում միջազգային տնտեսական կապերի ծավալումը համագեցնում է համաշխարհային տնտեսության ձևավորմանը: Հենց այս փուլն էլ Ռոստոուն անվանում է «ինդուստրիալ հասարակություն»:

Հինգերորդ՝ «գանգվածային սպառման դարաշրջանի» բնորոշ առանձնահատկությունը երկարատև օգտագործման սպառողական բարիքների թողարկումն է: Այս փուլում վերափոխվում են հասարակության առաջնությունները: Արտադրությունն իր առաջնային դիրքը զիջում է սպառմանն ու բարեկեցությանը:

Վեցերորդ՝ «կյանքի որակական պայմանների բարելավման դարաշրջանը» բնորոշվում է մարդկության կենսապայմանների որակական փոփոխություններով: Այս փուլում առաջնային նշանակություն են ստանում հոգևոր պահանջմունքների բավարարման հնարավորությունները:

Տնտեսագիտական միտքն էլ կուսումնասիրվի ըստ այս փուլերի՝ հաշվի առնելով, որ ցանկացած տեսություն մի մասով տվյալ ժամանակահատվածի իրողությունների արտացոլումն է, մյուս մասով՝ ճանաչողության և մտածողական զարգացման արդյունք:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Ներածություն: Տնտեսագիտական մտքի պատմության առարկան և խնդիրները **դաս. 1ժ / սեմ. 1ժ**


Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ Տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 9-10:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 1-9.
3. Всемирная история экономической мысли, т. 1, Москва, “Мысль”, 1987 г., стр. 29-33.

Քաժին Ա.
Տնտեսագիտական միտքը ավանդական
հասարակություններում


Թեմա 2. Տնտեսագիտական միտքը Հին աշխարհում

Քսենոֆոն




Ծնվել է՝ մ.թ.ա. 430
Վախճանվել՝ մ.թ.ա. 354
 (76 տարեկանում)

Պլատոն



Ծնվել է՝ մ.թ.ա. 427
Վախճանվել՝ մ.թ.ա. 347
 (80 տարեկանում)

Արիստոտել



Ծնվել է՝ մ.թ.ա. 384
Վախճանվել՝ մ.թ.ա. 322
 (62 տարեկանում)

- | | |
|------------|---|
| 2.1 | Տնտեսագիտական պատկերացումները Հին Արևելքի երկրներում: |
| 2.2 | Քսենոֆոնի տնտեսագիտական պատկերացումները: |
| 2.3 | Տնտեսագիտական գաղափարները Պլատոնի փիլիսոփայական համակարգում: |
| 2.4 | Արիստոտելի տնտեսագիտական գաղափարները: |
| 2.5 | Հին Հռոմի տնտեսագիտական միտքը, տնտեսությունների ռազիոնալ կազմակերպման հիմնահարցերը: |

դաս. 3ժ / սեմ. 3ժ

1/1
 0.5/0.5
 0.5/0.5
 0.5/0.5
 0.5/0.5

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 12-25:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 36-157.

Թեատային առաջադրանքներ

(նշված պատրասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեատ N 2.ա

Անտիկ աշխարհի տնտեսագիտական ուսմունքները

1) Քսենոֆոնի տնտեսագիտական պատկերացումները.

ա. Քսենոֆոնը մեծարում էր արհեստները՝ այն համարելով ազգի բարօրության հիմքը և բոլոր մասնագիտությունների մայրն ու սնուցողը, իսկ երկրագործության նկատմամբ ցուցաբերում էր քամահրական վերաբերմունք:

բ. Ըստ Քսենոֆոնի՝ օգտակարությունը արժեքի չափանիշ չէ:

գ. Ըստ Քսենոֆոնի՝ փողն ունի բացարձակ արժեք:

դ. Քսենոֆոնը հստակորեն տարբերում էր նյութական հարստությունը արժեքային հարստությունից՝ նշելով, որ վերջինս կուտակման սահմաններ չունի:

2) Պլատոնի տնտեսագիտական գաղափարները.

ա. Պլատոնը հասարակությունը բաժանում է երեք խմբի՝ ստորին շերտը կազմում էին զինվորականները, միջին շերտը՝ գյուղացիները, արհեստավորները և ստրուկները, իսկ բարձրագույն շերտը՝ կառավարիչները:

բ. Ըստ Պլատոնի՝ երկրի բարձրագույն խավը պետք է ազատ լինի ապրուստի հոգսերից և սեփականատիրական բնագոյներից:

գ. Պլատոնը քննադատում էր փակ բնատնտեսական հարաբերությունները:

դ. Պլատոնը առևտրով զբաղվելը համարում էր պատվաբեր և հարգի զբաղմունք:

3) Արիստոտելի տնտեսագիտական գաղափարները.

ա. Ըստ Արիստոտելի՝ ստրկությունը տնտեսական անհրաժեշտություն չէ:

բ. Արիստոտելը տարբերակում էր գործունեության երկու տեսակ՝ I. ակտիվ և II. արդյունքաբեր: Առաջինը սպառումն է, որն էլ ստրուկների մենաշնորհն է, իսկ երկրորդը տերերի մենաշնորհն է:

գ. Արիստոտելը, տնտեսագիտությունը տարանջատելով էկոնոմիկայի և քրեմատիստիկայի, նշում էր, որ էկոնոմիկան ընդգրկում է փողի կուտակման հետ կապված հակաբնական երևույթների ուսումնասիրությունը, իսկ քրեմատիստիկան՝ նյութական բարիքների արտադրության հետ կապված բնական երևույթները:

դ. Ըստ Արիստոտելի՝ փոխանակության համար անհրաժեշտ է հավասարություն և համաչափելիություն, որի հիմքը փողն է:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 2.ա

1) Ճիշտ է դ-ն:

Քսենոֆոնը հստակորեն տարբերում էր նյութական հարստությունը արժեքային հարստությունից՝ նշելով, որ վերջինս կուտակման սահմաններ չունի: Նա մեծարում էր գյուղատնտեսությունը, հատկապես երկրագործությունը՝ այն համարելով ազգի բարօրության հիմքը և բոլոր մասնագիտությունների մայրն ու սնուցողը, իսկ արհեստների

նկատմամբ ցուցաբերում էր քամահրական վերաբերմունք դրանց նստակյաց և միօրինակ բնույթի պատճառով: Ըստ Քսենոֆոնի՝ բարիքն ունի երկու հատկություն՝ օգտակարության և փոխանակության: Քսենոֆոնը արժեքի չափանիշ էր համարում օգտակարությունը և ժխտում էր փողի «բացարձակ արժեք» հասկացությունը, որը դարձյալ պայմանավորում էր փողի օգտագործման օգտակարությունը:

2) Ճիշտ է ք-ն:

Պլատոնը հասարակությունը բաժանում է երեք խմբի. ստորին շերտը կազմում էին գյուղացիները և արհեստավորները, միջին շերտը՝ զինվորականները, իսկ բարձրագույն շերտը՝ կառավարիչները, այսինքն՝ փիլիսոփաները և ազնվականները: Պլատոնը, ստորին շերտում ստրուկներին չընդգրկելով, նշում է, որ գյուղացիները և արհեստավորները ստրուկների հետ համատեղ պետք է զբաղվեն բարիքների արտադրությամբ: Ըստ Պլատոնի՝ երկրի բարձրագույն խավը պետք է ազատ լինի ապրուստի հոգսերից և սեփականատիրական բնագոյներից, քանի որ դրանք ստեղծում են խռնրկոտներ կառավարման համար: Պլատոնը, փակ բնատնտեսական հարաբերությունների կողմնակից լինելով, ընդունում էր առևտրի անհրաժեշտությունը, բայց այն համարում էր ամոթալի զբաղմունք և նշում, որ առևտրով պետք է զբաղվեն օտարերկրացիները:

3) Ճիշտ է դ-ն:

Ըստ Արիստոտելի՝ փոխանակության համար անհրաժեշտ է հավասարություն և համաչափելիություն, որի հիմքը փողն է: Արիստոտելի կարծիքով՝ ստրկությունը տնտեսական անհրաժեշտություն է, քանի որ կյանքը բարեկեցության ձգտում է, իսկ նյութական բարիքներն արտադրում են ստրուկները: Արիստոտելը տարբերակում էր գործունեության երկու տեսակ՝ I. ակտիվ և II. արդյունքաբեր: Առաջինը սպառումն է, որն էլ տերերի մենաշնորհն է, իսկ երկրորդը ստրուկների մենաշնորհն է: Արիստոտելը, տնտեսագիտությունը տարանջատելով էկոնոմիկայի և քրեմատիստիկայի, նշում էր, որ էկոնո-

միկան ընդգրկում է նյութական բարիքների արտադրության հետ կապված բնական երևույթների ուսումնասիրությունը, իսկ քրեմատիստիկան՝ փոքրի կուտակման հետ կապված հակաբնական երևույթների ուսումնասիրությունը:

Թեմա 3. Տնտեսագիտական պատկերացումները Միջին դարերում

Թ. Աքվինացի



Ծնվել է՝ 1225

Վախճանվել՝ 1274
(49 տարեկանում)

Մ. Գոշ



Ծնվել է՝ 1120/1130

Վախճանվել՝ 1213
(խոր ծերության
հասակում)

Գ. Տաթևացի



Ծնվել է՝ 1346

Վախճանվել՝ 1409
(63 տարեկանում)

դաս. 3ժ / սեմ. 3ժ

- | | | |
|------------|---|---------|
| 3.1 | Կանոնականների տնտեսագիտական հայացքները: Թովմա Աքվինացի: | 0.5/0.5 |
| 3.2 | Մխիթար Գոշի տնտեսագիտական պատկերացումներն ըստ Դատաստանագրքի: | 1/1 |
| 3.3 | Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական մեկնաբանությունները: | 1/1 |
| 3.4 | Ֆեոդալական ժամանակաշրջանի տնտեսագիտական գաղափարներն արաբական երկրներում. Իբն Խալդուն: | 0.5/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 26-40:
2. Всемирная история экономической мысли, т. 1, Москва, “Мысль”, 1987 г., стр. 304-307, 312-316, 322-339.

Թեստային առաջադրանքներ

(նշված պատրասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 3.ա Միջնադարի տնտեսագիտական պատկերացումները

1) Կանոնականների տնտեսագիտական հայացքները.

ա. Վաղ կանոնականության ներկայացուցիչ Օկտավիանոս Երանելին դրական էր վերաբերվում վաշխառությանը, արհեստներին, առևտրին և ընդհանրապես դրամական հարաբերություններին:

բ. Թ. Աքվինացու կարծիքով՝ ֆիզիկական աշխատանքը կրոնավորների և ազնվականության մենաշնորհն է, իսկ մտավոր աշխատանքը՝ ցածր խավի մենաշնորհը:

գ. Թ. Աքվինացին մերժում էր ճորտությունը, բնատնտեսությունը նորմալ և բնականոն երևույթ չէր համարում, դրական էր վերաբերվում առևտրին և վաշխառությանը:

դ. Թ. Աքվինացու «արդարացի գնի» տեսության համաձայն՝ փոխանակությունն իրականացվում է երկու սկզբունքով՝ I. գինը փոխհատուցում է ծախսերը, II. գինը գերազանցում է ծախսերն այն չափով, որքան անհրաժեշտ է վաճառողի ավանդույթ դարձած սպառման մակարդակի ապահովման համար:

2) Իբն Խալդունի տնտեսագիտական մեկնաբանությունները.

ա. Ըստ Ի. Խալդունի՝ աշխատանքի արդյունքները չեն փոխանակվում ըստ արժեքի հավասարեցման:

բ. Ի. Խալդունը նույնացնում էր արժեքը և շուկայական գինը:

գ. Ի. Խալդունի կարծիքով՝ հողի սեփականության իրավունքը պատկանում էր մարդկանց:

դ. Ըստ Ի. Խալդունի՝ արդյունաբերական շահույթը գոյանում է ի հաշիվ գործատուի կողմից վարձված մարդկանց անհամարժեք վարձատրության, իսկ առևտրային շահույթը՝ ի հաշիվ էժան գնման և քանկ վաճառքի:

Թեստ N 3. ք Հայ տնտեսագիտական միտքը Միջին դարերում

1) Մխիթար Գոշի տնտեսագիտական պատկերացումները.

ա. Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» հիշատակվում էր հողային ռենտայի երկու ձև:

բ. Աշխատավարձի մակարդակը բնորոշելիս Գոշը նշում էր, որ վարձատրությունը պետք է բարձր լինի բերքառատ ժամանակ և ցածր՝ սակավ բերքի դեպքում:

գ. Մխիթար Գոշը, տարբերակելով վաշխը և տոկոսը (բազմապատիկ աճը), անվերապահորեն մերժում էր տոկոսը:

դ. Մխիթար Գոշը առևտրական շահը անօրինական եկամուտ էր համարում:

2) Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական մեկնաբանությունները.

ա. Գ. Տաթևացին մարդկանց բոլոր տեսակի հարաբերությունների չափանիշ է համարում արդարությունը:

բ. Գ. Տաթևացու կարծիքով՝ ապրանքների գների մեծությունը պայմանավորված է դրանց քանակով և պահանջով:

գ. Ըստ Գ. Տաթևացու՝ «մարդն ինքնաբավ է և արտադրելու համար փոխադարձ օգնության կարիք չունի»:

դ. Գ. Տաթևացին ընդունում է աշխատանքային գործունեության անփոփոխության պատճենյան դրույթը:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 3.ա

1) Ճիշտ է դ-ն:

Թ. Աբվինացու «արդարացի գնի» տեսության համաձայն՝ փոխանակությունն իրականացվում է երկու սկզբունքով՝ I. գինը փոխհատուցում է ծախսերը, II. գինը գերազանցում է ծախսերն այն չափով, որքան անհրաժեշտ է վաճառողի ավանդույթ դարձած սպառման մակարդակի ապահովման համար: Թ. Աբվինացին անտիկ իմաստասիրությունից փոխ էր առել մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության սկզբունքը: Նրա կարծիքով՝ ֆիզիկական աշխատանքը, որի նպատակը գոյամիջոցների հայթայթումն է, ցածր խավի մենաշնորհն է, իսկ մտավոր աշխատանքը՝ կրոնավորների և ազնվականության մենաշնորհը: Ստրկության և ճորտության բնական հիմքերի կողմնակիցը չլինելով՝ նա հիմնավորել է ճորտության օգտակարությունը: Թ. Աբվինացին բնատնտեսությունը համարում էր նորմալ և բնականոն երևույթ՝ որպես մարդկանց բարօրության հիմք, բացասական էր վերաբերվում վաշխառությանը և առևտրին՝ վերջինիս որոշ տեսակներ ազնիվ համարելով: Օկտավիանոս Երանելին բացասական էր վերաբերվում վաշխառությանը, արհեստների, առևտրին և ընդհանրապես դրամական հարաբերություններին:

2) Ճիշտ է դ-ն:

Ըստ Ի. Խալլունի՝ արդյունաբերական շահույթը գոյանում է ի հաշիվ գործատուի կողմից վարձված մարդկանց անհամարժեք վարձատրության, իսկ առևտրային շահույթը՝ ի հաշիվ էժան գնման և թանկ վաճառքի: Ի. Խալլունի կարծիքով՝ հողի սեփականության իրավունքը պատկանում էր Ալլահին, իսկ մարդկանց տրված էր տնօրինման և օգտագործման իրավունքը: Ըստ Ի. Խալլունի՝ արդյունքներում պարունակվում է աշխատանք, և այն դրսևորում է արժեքի տեսքով: Հետևաբար աշխատանքի արդյունքները գնվում են ըստ արժեքի՝ դրանց համարժեքային փոխանակմամբ: Նա չէր նույնաց-

նում արժեքը և շուկայական գինը՝ նշելով, որ պերճանքի առարկաների քիչ քանակով պայմանավորված՝ դրանց շուկայական գինը գերազանցում է արժեքը:

Թեևս N 3.բ

1) Ճիշտ է գ-ն:

Մ. Գոշը, տարբերակելով վաշխը և տոկոսը (բազմապատիկ աճը), անվերապահորեն մերժում էր տոկոսը: Գոշի «Դատաստանագրքում» հիշատակվում էր հողային ռենտայի երեք ձև՝ I. աշխատավարձային (կոռ), II. բնամթերային (բահրա) և III. փողային: Աշխատավարձի մակարդակը բնորոշելիս Գոշը նշում էր, որ վարձատրությունը պետք է բարձր լինի սակավ բերքի ժամանակ և ցածր՝ առատ բերքի դեպքում: Այս դատողությունների հիմքը աշխատավարձի իրական մակարդակի պահպանումն է: Գոշը առևտրական շահը համարում էր օրինական եկամուտ՝ խրախուսելով դրա բազմապատիկ աճը: Պատճառն այն էր, որ այդ ժամանակաշրջանում առևտրի դերը Հայաստանի տնտեսական կյանքում շատ մեծ էր:

2) Ճիշտ է ա-ն:

Գ. Տաթևացին մարդկանց բոլոր տեսակի հարաբերությունների չափանիշ է համարում արդարությունը՝ տնտեսական ոլորտում մատնանշելով արդարության հետևյալ դրսևորումները՝ չափեր և կշիռներ, արժեք, նիհն հասարակաց: Տաթևացին ապրանքների գների մեծությունը չի պայմանավորում դրանց քանակով և պահանջով՝ գուգակցելով արդարացի գինը արդարացի շահի հետ: Ըստ Տաթևացու՝ աշխատանքը մարդու բնածին հատկությունն է և ունի հասարակական բովանդակություն, հետևաբար «մարդն ինքնաբավ չէ և արտադրելու համար փոխադարձ օգնության կարիք ունի»: Տաթևացին մերժում է աշխատանքային գործունեության անփոփոխության պլատոնյան դրույթը՝ պնդելով, որ մարդն ազատ է և կարող է ընտրություն կատարել գործունեության տեսակներում:

Քաժին Բ.

Անցման հասարակության տնտեսագիտական միտքը

Թեմա 4. Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները

Թ. Մոր



Ծնվել է՝ 1478
Վախճանվել՝ 1535
(57 տարեկանում)

Թ. Կամպանելա



Ծնվել է՝ 1568
Վախճանվել՝ 1639
(70 տարեկանում)

Թ. Մեն



Ծնվել է՝ 1571
Վախճանվել՝ 1641
(70 տարեկանում)

դաս. 3ժ / սեմ. 3ժ

- | | | |
|------------|--|---------|
| 4.1 | Անցման ժամանակաշրջանի սոցիալական հիմնախնդիրները և սոցիալ-ուտոպիական ուսմունքների առաջացումը 16-17-րդ դարերում: | 0.5/0.5 |
| 4.2 | Քաղաքատնտեսության առևտրային՝ մերկանտիլիստական համակարգի հիմնական տեսական դրույթները: | 0.5/0.5 |
| 4.3 | Մերկանտիլիզմ, փողային հաշվեկշռի քաղաքականությունը: | 0.5/0.5 |
| 4.4 | Մերկանտիլիզմ, առևտրային հաշվեկշռի քաղաքականությունը: | 0.5/0.5 |
| 4.5 | Մերկանտիլիստական քաղաքականությունը քեյնսյան մեկնաբանությամբ: | 1/1 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 41-49:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД” 1994, стр. 9-21.
3. Всемирная история экономической мысли, т. 1, Москва, “Мысль”, 1987г., стр. 372-377, 378-427.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 4.ա Սոցիալ-ուտոպիական ուսմունքների առաջացումը

1) Անցման ժամանակաշրջանի սոցիալական հիմնախնդիրները.

ա. Անցման ժամանակաշրջանում ձևավորված սոցիալ-ուտոպիական բազմաթիվ ուսմունքներ արտահայտում էին ունևոր խավի իդեներն ու նկրտումները, ցանկություններն ու պատկերացումները՝ պաշտպանելով տիրող կարգերը:

բ. Սոցիալ-ուտոպիական ուսմունքները գովերգում էին նոր ձևավորվող կապիտալիզմը և կապիտալիստական հարաբերությունները:

գ. Սոցիալ-ուտոպիական ուսմունքները առաջարկում էին մարդկանց միջև փոխօգնության և համագործակցության միջավայրը փոխարինել մրցակցային պայմաններով:

դ. Սոցիալ-ուտոպիական ուսմունքները քննադատում էին նոր ձևավորվող կապիտալիզմը և կապիտալիստական հարաբերությունները, ժխտում՝ մասնավոր սեփականության և ձևավորվող մրցակցային մթնոլորտի բարերար ազդեցությունը:

2) Ուտոպիստ սոցիալիստներ Թ. Մորի և Թ. Կամպանելայի տնտեսագիտական պատկերացումները

ա. Թ. Կամպանելայի «Ոսկե գիրքը» հրատարակվել է 1516 թվականին:

բ. Կապիտալիզմի առաջին քննադատ Թ. Մորի կարծիքով՝ աղքատության և շահագործման սկզբնական պատճառը մասնավոր սեփականությունն է:

գ. Թ. Կամպանելան, մասնավոր սեփականությունը հասարակական դժբախտությունների պատճառ չհամարելով, գտնում էր, որ հասարակական սեփականությունը պետք է փոխարինվի մասնավոր սեփականությամբ, իսկ սպառումը պետք է մասնավոր բնույթ կրի:

դ. Ուտոպիստները իրատեսորեն քննադատելով տիրող կարգերը՝ կարողացան նաև ցույց տալ ապագա հասարակություն տանող ուղիները:

Թեստ N 4.բ Քաղաքատնտեսության առևտրային՝ մերկանտիլիստական համակարգի տեսական դրույթները

1) Փողային հաշվեկշռի քաղաքականությունը.

ա. Փողային հաշվեկշռի քաղաքականությունը զուտ օրենսդրական ճանապարհով դրամական հարստության նվազեցման քաղաքականությունն է:

բ. Ներմուծված ապրանքների վաճառքից ստացած հասույթներն օտարերկրյա վաճառականները կարող էին դուրս բերել երկրից:

գ. Արտասահմանից սեփական երկիր փող ներգրավելու նպատակով պետությունը կանխամտածված փչացնում էր ազգային մետաղադրամը՝ այն դարձնելով թերարժեք:

դ. Փողային հաշվեկշռի քաղաքականությունից արդյունք կարող էին ստանալ բոլոր երկրները:

2) Առևտրային հաշվեկշռի քաղաքականությունը.

ա. Առևտրային հաշվեկշռի քաղաքականության համաձայն՝ պետությունը դառնում է այնքան հարուստ, որքան մեծ էր արտաքին առևտրի դրական մնացորդը:

բ. Դրական առևտրային հաշվեկշիռ ապահովելու նպատակով առաջարկում էին մեծացնել գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը և դրանց սպառումը՝ մերժելով հովանավորչական քաղաքականությունն արտաքին առևտրում:

գ. Դրական առևտրային հաշվեկշիռ ապահովելու նպատակով առաջարկում էին մեծացնել հումքի արտահանումը:

դ. Դրական առևտրային հաշվեկշիռ ապահովելու նպատակով առաջարկում էին արտաքին շուկաները գրավել՝ հարաբերականորեն թանկ ապրանքներ վաճառելով և միջնորդ (տրանզիտային) առևտուր ծավալելով:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 4.ա

1) Ճիշտ է դ-ն:

Սոցիալ-ուտոպիական ուսմունքները քննադատում էին նոր ձևավորվող կապիտալիզմը և կապիտալիստական հարաբերությունները, ժխտում՝ մասնավոր սեփականության և ձևավորվող մրցակցային մթնոլորտի բարերար ազդեցությունը: Այդ ուսմունքներն առաջարկում էին ձևավորվող մրցակցային պայմանները փոխարինել մարդկանց միջև փոխօգնության և համագործակցության միջավայրի հաստատմամբ: Անցման ժամանակաշրջանում ձևավորված բազմաթիվ սոցիալ-ուտոպիական ուսմունքներ, քննադատելով և մերժելով տիրող կարգերը, արտահայտում էին ընչազուրկ և ունեզրկված խավի իդեերն ու նկրտումները, ցանկություններն ու պատկերացումները:

2) Ճիշտ է ք-ն:

Կապիտալիզմի առաջին քննադատ Թ. Մորի «Ոսկե գիրքը» հրատարակվել է 1516 թ.-ին: Նրա կարծիքով՝ աղքատության և շահագործման սկզբնական պատճառը մասնավոր սեփականությունն է: Իտալացի հոգևորական Թ. Կամպանելան իր «Արևի քաղաք» երկ-խոսության մեջ նշում էր՝ հասարակական դժբախտությունների պատճառը մասնավոր սեփականությունն է, մասնավոր սեփականությունը պետք է փոխարինվի հասարակական սեփականությամբ, սպառումը պետք է հասարակական բնույթ կրի: Ուտոպիստները, իրատեսորեն քննադատելով տիրող կարգերը, անկարող եղան իրատեսորեն ցույց տալ ապագա հասարակություն տանող ուղիները:

Թեսո N 4.ք

1) Ճիշտ է գ-ն:

Արտասահմանից սեփական երկիր փող ներգրավելու նպատակով պետությունը կանխամտածված փչացնում էր ազգային մետաղադրամը՝ այն դարձնելով քերարժեք: Փողային հաշվեկշռի քաղաքականությունը զուտ օրենսդրական ճանապարհով դրամական հարստության մեծացման քաղաքականությունն է: Ներմուծված ապրանքների վաճառքից ստացած հասույթները օտարերկրյա վաճառականները պետք է ծախսեին երկրի ներսում՝ գնելով տեղական արտադրության ապրանքներ: Այդ նպատակով ստեղծվում էին «պահեստավորման վայրեր»: Փողի փչացման քաղաքականությունից արդյունք կարող էր ստանալ միայն առաջինը կիրառող երկիրը:

2) Ճիշտ է ա-ն:

Առևտրային հաշվեկշռի քաղաքականության համաձայն՝ պետությունը դառնում է այնքան հարուստ, որքան մեծ էր արտաքին առևտրի դրական մնացորդը: Դրական առևտրային հաշվեկշիռ ապահովելու նպատակով առաջարկում էին սահմանափակել գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը և կրճատել ներմուծվող ապրանքների սպառումը: Փոխարենը խոպան հողերի մշակման և արտաքին առևտրում հովանավորչական քաղաքականության միջո-

ցով մեծացնել հայրենական ապրանքների սպառումը: Այս նպատակով արգելում էին հումքի արտահանումը՝ պատճառաբանելով, որ վերամշակված հումքի վաճառքից եկամուտները կավելանան ավելի մեծ չափով և կբացվեն լրացուցիչ աշխատատեղեր: Ուշ մերկանտիլիստներն առաջարկում էին արտաքին շուկաները գրավել՝ հարաբերականորեն էժան ապրանքներ վաճառելով, մաս զբաղվել միջնորդ (տրանզիտային) առևտրով, որը համարվում էր գլխավորը:

Թեմա 5. Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում և Ֆրանսիայում

Վ.Պետի



Ծնվել է՝ 1623
Վախճանվել՝ 1687
(64 տարեկանում)

Պ.Բուազիլեր



Ծնվել է՝ 1646
Վախճանվել՝ 1714
(68 տարեկանում)

Ֆ.Բենե



Ծնվել է՝ 1694
Վախճանվել՝ 1774
(80 տարեկանում)

դաս. 3ժ / սեմ. 3ժ

- | | | |
|------------|--|---------|
| 5.1 | Դասական քաղաքատնտեսության ծագումը և զարգացման փուլերը: | 1/1 |
| 5.2 | Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում. Վ.Պետի: | 0.5/0.5 |
| 5.3 | Դասական քաղաքատնտեսության սկիզբը Ֆրանսիայում. Պ.Բուազիլեր: | 0.5/0.5 |
| 5.4 | Ֆիզիոկրատների տնտեսագիտական ուսմունքի ձևավորումը, հիմնական տեսական դրույթները: | 0.5/0.5 |
| 5.5 | Ֆ. Բենեի տնտեսական աղյուսակը: | 0.5/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 50-63:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 - е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 21-25.
3. Всемирная история экономической мысли, т. 1, Москва, “Мысль”, 1987г., стр. 429-465.

Թեատային առաջադրանքներ

(նշված պարամետրերից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 5.ա Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում և Ֆրանսիայում

1) Վ. Պետիի տնտեսագիտական պատկերացումները.

ա. Վ. Պետին արժեքի աշխատանքային տեսության հիմնադիրն է:

բ. Վ. Պետին զարգացրեց իր նախորդների ձևակերպած քաղաքական թվաբանության դրույթները:

գ. Ըստ Վ. Պետիի՝ հողի գինը երեք սերունդների համատեղ կյանքի տևողության տարեկան ռենտաների գումարն է:

դ. Ըստ Վ. Պետիի՝ առաջնային են արդյունաբերական շահույթը և փոխառվական տոկոսը, հետևաբար ռենտան, ինչպես նաև հողի արժեքը ածանցյալ են արդյունաբերական շահույթից և փոխառվական տոկոսից:

2) Պ. Բուագիլքերի տնտեսագիտական պատկերացումները.

ա. Պ. Բուագիլքերի տնտեսական բարեփոխումների ծրագիրը նախատեսում էր համամասնական կամ թույլ պրոգրեսիվ հարկերը փոխարինել ռեգրեսիվ հարկմամբ:

բ. Պ. Բուագիլքերը տնտեսական աճի ապահովման նպատակով առաջարկում էր ազատել ներքին առևտուրն արգելքներից:

գ. Պ. Բուագիլքերը տնտեսական աճի ապահովման նպատակով պահանջում էր սահմանել ամրագրված գներ հացահատիկի շուկայում:

դ. Պ. Բուագիլքերի կարծիքով՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ընդլայնումը խոչընդոտ է ընդհանուր տնտեսական աճի համար:

Թեստ N 5.բ Ֆիզիոկրատների դպրոցը և Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակը

1) Ֆիզիոկրատների հիմնական տեսական դրույթները.

ա. Ըստ ֆիզիոկրատների՝ գյուղատնտեսության մեջ կիրառվող աշխատանքն անարտադրողական է, իսկ մնացյալ ոլորտներում կիրառվող աշխատանքը՝ արտադրողական:

բ. Ֆիզիոկրատների կարծիքով՝ զուտ արդյունքը՝ թողարկված արտադրանքի ավելցուկը ծախսերից, ստեղծվում էր միայն գյուղատնտեսությունում, իսկ արդյունաբերության մեջ ձևափոխվում և գումարվում էին արդեն ստեղծված արժեքները:

գ. Ֆ. Քենեն, հասարակական արդյունքի ստեղծման և վերաբաշխման գործընթացում սոցիալական խմբերի մասնակցությունը հիմք ընդունելով, հասարակությունը բաժանեց հինգ դասակարգի:

դ. Ըստ Քենեի՝ ստերիլ դասակարգը գոյատևում է արտադրողների (ֆերմերների) դասակարգի կողմից վճարված եկամուտների հաշվին:

2) Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակը.

ա. Արդյունքի և եկամտի շրջապտույտը լուսաբանող Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակում վերլուծության ելակետ է գյուղատնտեսական տարվա սկիզբը:

բ. Ստերիլ դասակարգի կողմից տնօրինվող հիմնական միջոցների (մախասկզբնական ավանսի) արժեքը 10 մլրդ լիվր է, իսկ հիմնական միջոցների օգտագործման արժեքը՝ 2 մլրդ լիվր (ամորտիզացիան՝ 10% կամ 0.1):

գ. Արդյունքի և եկամտի շրջապտույտը ենթադրում է յոթ գործարք:

դ. Գործարքների արդյունքում իրացվում է 3 մլրդ լիվր արժողությամբ գյուղատնտեսական արտադրանք (I, III և V գործարքներ), 2 մլրդ լիվր արժողությամբ արդյունաբերական արտադրանք (II և IV գործարքներ):

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 5.ա

1) Ճիշտ է գ-ն:

Ըստ Վ. Պետիի՝ հողի գինը երեք սերունդների համատեղ կյանքի տևողության տարեկան ռենտաների գումարն է: Վ. Պետիի ձևակերպումը՝ «Աշխատանքը հարստության հայրն է և ակտիվ սկիզբը, իսկ հողը՝ նրա մայրը», ըստ էության ներկայացնում է արժեքի ծախսային տեսությունը: Կ. Մարքսի կողմից այն կանխակալորեն գնահատվեց որպես արժեքի աշխատանքային տեսության գործում դրսևորված հանճարեղ թյուրընկալում, և Կ. Մարքսը նրան վերագրեց այդ տեսության հայտնագործումը: Վ. Պետին իրականում մերկանտիլիզմի ներկայացուցիչ էր: Նա համարվում է քաղաքական թվաբանության հիմնադիրը: Ի դեպ, այս բնագավառի անվանումը՝ վիճակագրություն, ձևավորվեց մեկ դար անց: Կարևորելով հողը որպես

մարդկային աշխատանքի ներդրման հիմնական օբյեկտ՝ Վ. Պետին համարում էր, որ հողային ռենտան առաջնային է, իսկ արդյունաբերական շահույթը և փոխատվական տոկոսը բխում են ռենտայից:

2) Ճիշտ է ր-ն:

Պ. Բուազիլբերը տնտեսական բարեփոխումների նպատակով առաջարկում էր ազատել ներքին առևտուրն արգելքներից: Արդյունքում ձևավորված ներքին միասնական շուկան, ապահովելով աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժ, ինչպես նաև խորացնելով աշխատանքի բաժանումը, ըստ նրա՝ կաշխուժացներ առևտուրը: Այս ամենը կհանգեցներ նորմալ կամ համամասնական գների հաստատմանը: Վերջինս տնտեսական աճի պայմանն է: Պ. Բուազիլբերի տնտեսական բարեփոխումների ծրագրի համաձայն՝ անհրաժեշտ էր եկամուտների ռեգրեսիվ հարկումը փոխարինել համամասնական կամ թույլ պրոգրեսիվ հարկմամբ: Բացի այդ՝ նա պահանջում էր ազատականացնել հացահատիկի շուկան՝ չխոչընդոտելով նույնիսկ հացի գների աճը, քանի որ ամրագրված գները չէին փոխհատուցում արտադրության ծախքերը՝ բացառելով աճի հնարավորությունները: Պ. Բուազիլբերի կարծիքով՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ընդլայնման հնարավորությունները կխթանեին տնտեսական աճը:

Թեստ N 5.բ

1) Ճիշտ է ր-ն:

Ֆիզիոկրատների կարծիքով՝ գուտ արդյունքը՝ թողարկված արտադրանքի ավելցուկը ծախքերից, ստեղծվում էր միայն գյուղատնտեսությունում, իսկ արդյունաբերության մեջ ձևավոխվում էին արդեն ստեղծված արժեքները: Հետևաբար գյուղատնտեսության մեջ կիրառվող աշխատանքն արտադրողական է, իսկ մնացյալ ոլորտներում կիրառվող աշխատանքը՝ անարտադրողական: Ֆ. Քեմեն, հասարակական արդյունքի ստեղծման և վերաբաշխման գործընթացում սոցիալական խմբերի մասնակցությունը հիմք ընդունելով, հասարակությունը բաժանեց երեք դասակարգի՝ I. արտադրողներ (ֆերմերներ), II. հողի սեփականատերեր և III. ստերիլ (անպտուղ) դասա-

կարգ: Արտադրողները ապահովում են ազգի հարստության ամենամյա աճը՝ մշակելով հողը, կանխավճարելով գյուղատնտեսական աշխատանքների ծախսերը, վճարելով ամենամյա եկամուտներ հողատերերին: Հողի սեփականատերերը (միապետերը, հողատերերը, հարկահավաքները) գոյատևում են ֆերմերներից ստացած ամենամյա եկամուտներով: Ստերիլ դասակարգի (մնացած բոլոր աշխատանքներով զբաղված անձանց) ծախսերը վճարվում են ֆերմերների և հողատերերի կողմից:

2) Ճիշտ է դ-ն:

Արդյունքի և եկամտի շրջապատույտը Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակում ենթադրում է հինգ գործարք (յուրաքանչյուրը 1 մլրդ լիվր արժողությամբ), որոնց արդյունքում իրացվում է 3 մլրդ լիվր արժողությամբ գյուղատնտեսական արտադրանք (I, III, V գործարքներ), 2 մլրդ լիվր արժողությամբ արդյունաբերական արտադրանք (II, IV գործարքներ)՝ ապահովելով պարզ վերարտադրություն: Արդյունքի և եկամտի շրջապատույտը լուսաբանող Ֆ. Քենեի տնտեսական աղյուսակում վերլուծության ելակետ է գյուղատնտեսական տարվա վերջը: Գյուղատնտեսական համախառն արտադրանքը 5 մլրդ լիվր է, որից 1 մլրդ լիվրը հիմնական կապիտալի (նախասկզբնական ավանսի) օգտագործման արժեքն է (ամորտիզացիան՝ 10% կամ 0.1), իսկ շրջանառու կապիտալը (տարեկան ավանսը՝ աշխատավարձը, սերմերը և նյութերը) 2 մլրդ լիվր է: Հետևաբար զուտ արդյունքը թողարկված 5 մլրդ լիվր արտադրանքի ավելցուկը 3 մլրդ լիվր ծախսերից ($3=1+2$) կազմում է 2 մլրդ լիվր: Ստերիլ դասակարգն արտադրել է 2 մլրդ լիվր արժողությամբ արտադրանք, հետևաբար ազգային արդյունքը կազմում է 7 մլրդ լիվր ($7=5+2$): Ի դեպ, աղյուսակում անտեսվում է այն հանգամանքը, որ ստերիլ դասակարգը տնօրինում է հիմնական միջոցներ: Հինգ գործարքների իրականացումն ապահովվում է հողատերերի մոտ գտնվող 2 մլրդ լիվր փողով, որը՝ որպես վարձավճար, նրանք ստացել են ֆերմերներից նախորդ տարվա բերքի իրացման արդյունքում:

**Թեմա 6. Ադամ Սմիթը և նրա «Ազգերի հարստության
բնույթի և պատճառների ուսումնասիրություն»
աշխատությունը**

Ա. Սմիթ



Ծնվել է՝ 1723

Վախճանվել՝ 1790

(67 տարեկանում)

դաս. 4ժ / սեմ. 5ժ

- | | | |
|------------|---|---------|
| 6.1 | Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը. կառուցվածքը և բովանդակությունը: | 1/0.5 |
| 6.2 | Ամերիկայի ծնունդը՝ շուկայական մեխանիզմի մեկնաբանությունը: | 0.5/1 |
| 6.3 | Աշխատանքի բաժանումը և հարստության աճը: | 0.5/0.5 |
| 6.4 | Արժույթի խնդրի լուծումը: | 0.5/1 |
| 6.5 | Աշխատանքի վարձատրության մեկնաբանությունները: | 0.5/1 |

6.6	Շահույթի և ռենտայի սմիթյան տեսությունը:	0.5/0.5
6.7	Արտադրողական և անարտադրողական աշխատանքի տեսությունը:	0.5/0.5

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ռուսոմնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 64-77:
2. Блауг М. Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 32-61.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 6.ա Սմիթը և նրա «Ազգերի հարստություն» աշխատությունը

1) Աշխատության կառուցվածքը և բովանդակությունը.

ա. Աշխատությունը լույս տեսավ 1776թ. և իր կենդանության օրոք այլևս չվերահրատարակվեց:

բ. Ա. Սմիթի «Ազգերի հարստություն» աշխատությունը կազմված է հինգ գրքից:

գ. Աշխատությունում Սմիթի կողմից ընդունվել են մերկանտիլիզմի և ֆիզիոկրատների բոլոր դրույթները:

դ. Սմիթն իր նախորդ աշխատություններում ներկայացրած անձնական շահի վերաբերյալ հեղվեցիության պատկերացումները փոխարինեց «էմպատիայի սկզբունքով»:

**2) Արտադրողական և անարտադրողական աշխատանքի սմի-
քյան տեսությունը.**

ա. Անարտադրողական աշխատանքը մեծացնում է ստեղծվող բարիքի արժեքը, իսկ արտադրողականը՝ ոչ (արտադրողական աշխատանքի առարկայացման հատկանիշ):

բ. Անարտադրողական աշխատանքը առարկայացվում (ամրացվում) է թողարկվող ապրանքի մեջ, իսկ արտադրողականը՝ ոչ (արտադրողական աշխատանքի արժեքային հատկանիշ):

գ. Ըստ Սմիթի՝ արտադրողական է այն աշխատանքը, որի գնման համար կապիտալ է ծախսվում, իսկ անարտադրողական աշխատանքը վարձատրվում է եկամտից:

դ. Արտադրողական և անարտադրողական աշխատանքի սմիքյան տեսությունը տնտեսագիտության հիմնարար հայեցակարգերից է:

3) Աշխատանքի բաժանումը և հարստության աճն ըստ Ա. Սմիթի.

ա. Ըստ Սմիթի՝ ժողովուրդների հարստության չափը պայմանավորված է արտադրողական աշխատանքով զբաղված մարդկանց թվաքանակով և աշխատանքի արտադրողականությամբ:

բ. Ըստ Սմիթի՝ աշխատանքի բաժանման՝ մասնագիտացման արդյունքում, աշխատանքի արտադրողականությունը կաճի աշխատողների մասնագիտական հմտությունների նվազման հետևանքով:

գ. Ըստ Սմիթի՝ մասնագիտացման արդյունքում աշխատանքի արտադրողականությունը կաճի աշխատանքի մի տեսակից մյուսին անցնելու համար անհրաժեշտ ժամանակի ավելացման հաշվին:

դ. Ըստ Սմիթի՝ աշխատանքի բաժանման արդյունքում աշխատանքի արտադրողականությունը կաճի, եթե չստեղծվեն պայմաններ աշխատանքի գործիքների կատարելագործման և մեքենաների ստեղծման համար:

Թեւստ N 6.բ Արժողութեան, շահույթի և ռենտայի սմիթթյան տեսութիւնը

1) Արժողութեան խնդրի լուծումը.

ա. Ապրանքների փոխանակային արժեքը չի կարող որոշվել աշխատանքային ծախսումներով վաղ կամ պրիմիտիվ հասարակութիւնում՝ միագործոն տնտեսութիւնում:

բ. Ապրանքների փոխանակային արժեքը կարող է որոշվել աշխատանքային ծախսումներով միայն կապիտալիստական տնտեսակարգում:

գ. Իրական կյանքում ապրանքների փոխանակային արժեքը (բնական կամ իրական գինը) որոշվում է ապրանքի արտադրութեան վրա կատարված փողային ծախսումներով՝ ռենտայի, շահույթի և աշխատավարձի գումարով:

դ. Ա. Սմիթը ձևակերպել է արժեքի աշխատանքային տեսութիւնը:

2) Շահույթի և ռենտայի սմիթթյան տեսութիւնը.

ա. Ըստ Սմիթի՝ շահույթի մեծութիւնը կախված է ոչ թէ կանխավճարված կապիտալի չափերից, այլ կառավարման և վերահսկման աշխատանքների քանակից, ծանրութիւնից և բարդութիւնից:

բ. Կապիտալի կուտակման ընթացքում աշխատավարձն աճում է, իսկ շահույթը նվազում՝ մրցակցութեան խորացմամբ և նվազող հատույցով պայմանավորված:

գ. Ըստ Սմիթի՝ տնտեսական աճը հանգեցնում է շահույթի նորմի աճին:

դ. Ըստ Սմիթի՝ տնտեսական աճը հանգեցնում է ռենտայի նվազմանը:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 6.ա

1) Ճիշտ է ք-ն:

Ա. Սմիթի «Ազգերի հարստություն» աշխատությունը լույս է տեսել 1776թ. և հեղինակի օրոք վերահրատարակվել է հինգ անգամ: Այս աշխատությունում Սմիթը քննադատում էր մերկանտիլիզմը, հերքում՝ ֆիզիոկրատների մի շարք դրույթներ: Սմիթն իր մախորդ աշխատություններում ներկայացրած «համակրանքի սկզբունքը» փոխարինեց անձնական շահի վերաբերյալ հելվեցիոսյան պատկերացումներով: Այս աշխատությունը կազմված է հինգ գրքից: Առաջին գրքում քննարկվում են արժեքի, շահույթի և ռենտայի հիմնահարցերը: Երկրորդ գրքում վերլուծվում է կապիտալի բնույթը, դրա կուտակումն ու կիրառումը: Երրորդ գրքում շարադրված է Եվրոպայի տնտեսական պատմությունը, իսկ չորրորդում՝ քաղաքատնտեսության պատմությունը: Հինգերորդ գիրքը, որն ի դեպ ամենաժամպալունն է, նվիրված է պետական ֆինանսներին:

2) Ճիշտ է գ-ն:

Արտադրողական և անարտադրողական աշխատանքի սմիթյան տեսությունը տնտեսագիտության ամենաչարադետ տեսություններից է: Ա. Սմիթը ձևակերպել է արտադրողական աշխատանքի երկու հատկանիշ՝ I. արժեքային հատկանիշ՝ արտադրողական աշխատանքը մեծացնում է ստեղծվող բարիքի արժեքը, իսկ անարտադրողականը՝ ոչ, II. առարկայացման հատկանիշ՝ արտադրողական աշխատանքը առարկայացվում (ամրացվում) է թողարկվող ապրանքի մեջ, իսկ անարտադրողականը՝ ոչ: Անարտադրողական աշխատանքը, ըստ Սմիթի, «ծառայություններն են, որոնք անհայտանում են հենց դրանք մատուցելու պահին»: Ա. Սմիթի կարծիքով՝ արտադրողական է այն աշխատանքը, որի գնման համար կապիտալ է ծախս-

վում, իսկ անարտադրողական՝ այն աշխատանքը, որը վարձատրվում է եկամտից:

3) Ճիշտ է ա-ն:

Ըստ Սմիթի՝ ժողովուրդների հարստության չափը առաջին հերթին պայմանավորված է արտադրողական աշխատանքով զբաղված մարդկանց թվաքանակով, երկրորդ հերթին՝ աշխատանքի արտադրողականությամբ: Ըստ Սմիթի՝ աշխատանքի բաժանման՝ մասնագիտացման արդյունքում, աշխատանքի արտադրողականությունը կաճի՝ ի հաշիվ աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացման, աշխատանքի մի տեսակից մյուսին անցնելու համար անհրաժեշտ ժամանակի կրճատման, ինչպես նաև աշխատանքի գործիքների կատարելագործման և մեքենաների ստեղծման պայմանների:

Թեստ N 6.բ

1) Ճիշտ է գ-ն:

Ապրանքների փոխանակային արժեքը կարող է որոշվել աշխատանքային ծախսումներով միայն վաղ կամ պրիմիտիվ հասարակությունում՝ միագործոն տնտեսությունում, քանի որ ապրանքի արտադրությանը մասնակցում է միայն մեկ գործոն (աշխատանքը) կապիտալի և հողի սեփականության բացակայության պայմաններում: Իրական կյանքում ապրանքի արտադրությանը մասնակցում են նաև կապիտալը և հողը, հետևաբար ապրանքի փոխանակային արժեքը (բնական կամ իրական գինը) որոշվում է ապրանքի արտադրության վրա կատարված փողային ծախսումներով՝ ռենտայի, շահույթի և աշխատավարձի գումարով: Ա. Սմիթը ընդամենը ձևակերպել է արժեքի արտադրության գործոնների տեսությունը, հետևաբար արժեքի աշխատանքային տեսության վերագրումը Ա. Սմիթին ճիշտ չէ:

2) Ճիշտ է բ-ն:

Կապիտալի կուտակման ընթացքում աշխատավարձն աճում է, իսկ շահույթը նվազում՝ մրցակցության խորացմամբ և նվազող հա-

տույցով պայմանավորված: Ըստ Սմիթի՝ «շահույթը» և «կառավարչի վարձատրությունը» տարբեր հասկացություններ են: Ի դեպ, շահույթի մեծությունը կախված է կանխավճարված կապիտալի չափերից, իսկ կառավարչի վարձատրությունը՝ կառավարման և վերահսկման աշխատանքների քանակից, ծանրությունից և բարդությունից: Ըստ Սմիթի՝ տնտեսական աճը հանգեցնում է շահույթի նորմի նվազմանը և ռենտայի աճին: Ի դեպ ռենտան, ըստ Սմիթի, մի դեպքում գործոն է, որը որոշում է գինը, մեկ այլ դեպքում՝ գնով որոշվող եկամուտ:

Բաժին Գ.

Վերելքի փուլի տնտեսագիտական տեսությունները

Թեմա 7. Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը. Ժ. Բ. Սեյ, Թ. Ռ. Մալթուս

Ժ. Սեյ



Ծնվել է՝ 1767

Վախճանվել՝ 1832

(65 տարեկանում)

Թ. Մալթուս



Ծնվել է՝ 1766

Վախճանվել՝ 1834

(68 տարեկանում)

դաս. 3ժ / սեմ. 3ժ

- | | | |
|-----|--|---------|
| 7.1 | Սեյի շուկաների օրենքը, Սեյի հավասարումը: | 1/1 |
| 7.2 | Սեյի նույնությունը և փողի քանակական տեսությունը: | 0.5/0.5 |
| 7.3 | Մալթուսի իրացման տեսությունը: | 1/1 |
| 7.4 | Մալթուսի ազգաբնակչության օրենքը: | 0.5/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 78-89:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД” 1994, стр. 62-71, 136-163.

Թեստային առաջադրանքներ

(նշված պատրասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 7.ա Սեյի շուկաների օրենքը

1) Սեյի շուկաների օրենքի մեկնաբանությունը բարտերային տնտեսությունում.

ա. Յուրաքանչյուր ճյուղի արտադրանքի պահանջարկը նվազում է այն դեպքում, երբ բոլոր ճյուղերի առաջարկն աճում է:

բ. Բարտերային տնտեսությունում չի բացառվում բոլոր ապրանքների գերարտադրությունը:

գ. Ամբողջական առաջարկը չի կարող գերազանցել ամբողջական պահանջարկը:

դ. Ամբողջական առաջարկը կարող է գերազանցել ամբողջական պահանջարկը:

2) Սեյի շուկաների օրենքի մեկնաբանությունը ժամանակակից տնտեսությունում.

ա. Ապրանքները չեն կարող գեր կամ թեր արտադրվել փողի նկատմամբ:

բ. Ժամանակակից (փողային) տնտեսության պայմաններում հնարավոր է ապրանքների ընդհանուր ավելցուկային առաջարկ:

գ. Փողի պահանջարկը միշտ կարող է լինել ավելցուկային:

դ. Փողի պահանջարկը միշտ չի կարող լինել ավելցուկային:

Թեստ N 7.բ Մալթուսի իրացման տեսությունը

1) Մալթուսի իրացման տեսության մեկնաբանությունը կոշտ տարբերակով.

ա. Թերսպառման տեսությունը Մալթուսի կատարած վերլուծության հիմքը չէ:

բ. Մալթուսի վերլուծության հիմնական սկզբունքի համաձայն՝ կապիտալի կուտակումը չի հանգեցնի երկարաժամկետ ստագնացիայի անարտադրողական սպառողների էկզոգեն ծախսերի բացակայության պայմաններում:

գ. Վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է շահույթի և ռենտայի որոշակի մասն ուղղել պերճանքի առարկաների և անարտադրողական ծառայությունների ձեռքբերմանը:

դ. Ըստ Մալթուսի՝ իրացման տեսության կոշտ տարբերակի՝ սպառումը և ներդրումները հավասար են ամբողջական առաջարկին:

2) Մալթուսի իրացման տեսության մեկնաբանությունը մեղմ տարբերակով.

ա. Իրացման տեսության մեղմ տարբերակի համաձայն՝ արտադրության և եկամտի տրված ծավալները պահպանվում են այնքան ժամանակ, քանի դեռ ներդրումները լրացնում են եկամտի և սպառման տարբերությունը:

բ. Իրացման տեսության մեղմ տարբերակի համաձայն՝ ներդրումների կրճատմամբ պայմանավորված եկամտի աճը վերահաստատում է հավասարակշռությունը՝ մեծացնելով արտադրական կարողությունների ավելցուկը:

գ. Ըստ Մալթուսի՝ թերսպառման հիմքում ընկած չէ գերխնայողությունը:

դ. Հարատև գերարտադրության հնարավորությունները բացառելու համար սպառումը և ներդրումները չպետք է աճեն:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 7.ա

1) Ճիշտ է գ-ն:

Բարտերային տնտեսությունում ամբողջական առաջարկը չի կարող գերազանցել ամբողջական պահանջարկը: Սեյի շուկաների օրենքի համաձայն՝ «ապրանքները վճարվում են ապրանքների դիմաց» ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտրում: Ըստ Սեյի՝ կոնկրետ ճյուղի արտադրանքի պահանջարկը որոշվում է մյուս ճյուղերում ստեղծված եկամտի մեծությամբ և ոչ երբեք տվյալ ճյուղի առաջարկով: Հետևաբար յուրաքանչյուր ճյուղի արտադրանքի պահանջարկն աճում է այն դեպքում, երբ բոլոր ճյուղերի առաջարկն աճում է, քանի որ այդ առաջարկն է ստեղծում տվյալ ճյուղի արտադրանքի պահանջարկը: Բարտերային տնտեսությունում հնարավոր չէ բոլոր ապրանքների գերարտադրություն՝ չնայած այն փաստին, որ կոնկրետ ապրանքը կարող է մյուս բոլոր ապրանքների նկատմամբ ավելցուկով արտադրվել:

2) Ճիշտ է դ-ն:

Փողի պահանջարկը միշտ չի կարող լինել ավելցուկային, քանի որ դա համապատասխանում է անհավասարակշռության իրավիճակին: Ժամանակակից (փողային) տնտեսության պայմաններում ապրանքները կարող են գեր կամ թեր արտադրվել հենց փողի նկատմամբ: Հետևաբար ժամանակակից պայմաններում հնարավոր է ապրանքների ընդհանուր ավելցուկային առաջարկ, քանի որ դա պարզապես ենթադրում է փողի ավելցուկային պահանջարկի առկայություն:

Թեսո N 7.բ

1) Ճիշտ է գ-ն:

Մալթուսի կատարած վերլուծության հիմքում դրված է թեր-սպառման տեսությունը: Մալթուսի վերլուծության հիմնական սկզբ-բունքի համաձայն՝ առանց անարտադրողական սպառողների էկզո-գեն ծախսերի կապիտալի կուտակումը կհանգեցնի երկարաժամկետ ստագնացիայի: Ըստ Մալթուսի՝ իրացման տեսության կոշտ տարբե-րակի՝ սպառումը և ներդրումները հավասար չեն ամբողջական առա-ջարկին, և սպառողների մեծ մասը, վարձու աշխատողներ լինելով, չեն կարող գնել իրենց իսկ կողմից արտադրված ապրանքները, քանի որ դրանց արժեքը գերազանցում է նրանց աշխատավարձի մեծու-թյունը: Հետևաբար վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է շահույթի և ռենտայի որոշակի մասն ուղղել պերճանքի առարկաների և անարտադրողական ծառայությունների ձեռքբերմա-նը:

2) Ճիշտ է ա-ն:

Ըստ Մալթուսի՝ թերսպառման հիմքում ընկած է գերխնայողու-թյունը: Իրացման տեսության մեղմ տարբերակի համաձայն՝ յուրա-քանչյուր պահի ամբողջական եկամուտը հավասար է արտադրու-թյան բոլոր գործոնների ծախսերի գումարին, և քանի դեռ ներդրում-ները լրացնում են եկամտի և սպառման տարբերությունը, արտադ-րության և եկամտի տրված ծավալներն անփոփոխ են: Բայց ներդ-րումները, եկամտից բացի, ստեղծում են նաև արտադրական նոր կա-րողություններ, և եթե հաջորդ ժամանակահատվածում սպառումը և ներդրումները չեն ավելանում, ապա գոյանում է արտադրական կա-րողությունների ավելցուկ՝ նվազեցնելով հետագա ներդրումները: Ար-դյունքում, ներդրումների կրճատմամբ պայմանավորված, եկամտի անկումը վերահաստատում է հավասարակշռությունը՝ դուրս մղելով արտադրական կարողությունների ավելցուկը: Ըստ Մալթուսի՝ հա-րատն գերարտադրության հնարավորությունները բացառելու համար սպառումը և ներդրումները պետք է աճեն համամասնորեն:

**Թեմա 8. Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական
համակարգը**

Դ. Ռիկարդո



Ծնվել է՝ 1772

Վախճանվել՝ 1823

(51 տարեկանում)

		դաս. 3ժ / սեմ. 2.5ժ
8.1	Տնտեսական աճի մեկնաբանությունը և ռենտան:	0.5/0.5
8.2	Ռիկարդոյի արժեքի տեսությունը և ժամանակի գործոնը:	1/1
8.3	Համեմատական առավելությունների սկզբունքը:	1/0.5
8.4	Ռիկարդոյի բաշխման տեսությունը:	0.5/0.5

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 90-97:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 82-100.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 8.ա Տնտեսական աճը և ռենտան՝ ըստ Դավիթ Ռիկարդոյի

1) Տնտեսական աճի հեռանկարը.

ա. Տնտեսական աճի հնարավորությունները անսահման են:

բ. Տնտեսական աճը կանգ է առնելու, քանի որ արդյունավետ պահանջարկը անբավարար է:

գ. Տնտեսական աճը կասեցվելու է ռեսուրսների անբավարարության պատճառով:

դ. Տնտեսական աճը կանգ է առնելու, քանի որ աշխատանքը դուրս է մղվում կապիտալի կողմից:

2) Ռենտայի մեկնաբանությունը.

ա. Ռենտան հողի պարզևն է և ստացվում է վատորակ հողերից:

բ. Միջին և սահմանային արդյունքների տարբերությունն է:

գ. Մոնոպոլ գնի տարր է:

դ. Առաջացման պատճառը գյուղատնտեսական բանվորների թերի վարձատրությունն է:

Թեստ N 8.բ Ռիկարդոյի արժեքի տեսությունը և ժամանակի գործոնը

1) արժեքի տեսությունը.

ա. Ըստ Ռիկարդոյի՝ արժեքը որոշվում է և՛ ծախսերով, և՛ օգտակարությամբ:

բ. Համաձայն Ռիկարդոյի տեսության՝ ապրանքի արժեքը հավասար է աշխատանքային ծախսումների և կիրառվող կապիտալի արտադրյալին:

գ. Համաձայն Ռիկարդոյի տեսության՝ ապրանքի արժեքի մեծությունը պայմանավորող գործոն է նաև օգտակարությունը:

դ. Համաձայն Ռիկարդոյի տեսության՝ ապրանքի արժեքի մեծությունը հավասար է աշխատանքային ծախսումների և աշխատանքի վարձատրության դրույքաչափի արտադրյալին:

2) Արժեքի աշխատանքային տեսությունը և գները.

ա. Իրականում հարաբերական գների մակարդակները ևս հիմնականում որոշվում են աշխատանքային ծախսումներով:

բ. Ժամանակի գործոնը հաշվի առնելու դեպքում, նույնիսկ միագործոն տնտեսության պայմաններում, անավարտ արտադրանքից և պատրաստի ապրանքներից կազմված արդյունքի արժեքը պետք է հավասար լիներ վճարված աշխատավարձի և շրջանառու կապիտալի տոկոսի գումարին:

գ. Տոկոսի առաջացման պատճառով ժամանակային խզումը չէ արտադրանքի թողարկման և իրացման ժամկետների միջև:

դ. Համաձայն Ռիկարդոյի տեսության՝ անավարտ արտադրանքից և պատրաստի ապրանքներից կազմված արդյունքի արժեքը պետք է հավասար լինի վճարված աշխատավարձի, շահույթի և ռենտայի գումարին:

Թեստ N 8.գ Ռ-ի կարդույի համեմատական առավելությունների սկզբունքը

1) Բացարձակ և համեմատական առավելությունների շահավետությունը.

ա. Երկրի մասնակցությունը միջազգային առևտրին հնարավոր է, եթե միայն տվյալ ապրանքի արտադրության ծախսերը ավելի ցածր են միջազգային գնից:

բ. Երկրի մասնակցությունը միջազգային առևտրին հնարավոր է, եթե միայն տվյալ ապրանքի արտադրության ծախսերը ավելի ցածր են ներմուծող երկրի համապատասխան ծախսերից:

գ. Միջազգային գնից բարձր արտադրության ծախսեր ունեցող ապրանքների արտադրությունը և արտահանումը կարող է նաև փոխշահավետ լինել:

դ. Միջազգային գնից բարձր արտադրության ծախսեր ունեցող ապրանքների արտադրությունը և արտահանումը կարող է փոխշահավետ չլինել:

2) Համեմատական առավելությունը.

ա. Երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի արտադրության գծով, որի ծախսերի մեծության հարաբերակցությունը միջազգային գնի համեմատ իր համար առավել շահավետ է:

բ. Երկիրը համեմատական առավելություն ունի, երբ տվյալ ապրանքի արտադրության գծով իր ծախսերը համեմատականորեն մոտ են միջազգային գնին:

գ. Երկիրը համեմատական առավելություն ունի, երբ որևէ ապրանքի գծով իր ծախսերի հարաբերությունը մյուս երկրի ծախսերի համեմատ իր համար համեմատականորեն ամենափոքրն է և չի գերազանցում մյուս երկրների համապատասխան ծախսերի մեծությունը:

դ. Երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի գծով, որի արտադրության ծախսերի հարաբերությունը մյուս երկրի

ծախսերի նկատմամբ իր համար ավելի բարենպաստ է, քան մյուս ապրանքների գծով:

Թեստ N 8.դ Ռ-ի կարդոյի բաշխման տեսությունը

1) Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան՝ ըստ Ռ-ի կարդոյի

ա. Ըստ Ռ-ի կարդոյի՝ քաղաքատնտեսության առարկան հարըստության բնույթի ու պատճառների ուսումնասիրությունն է:

բ. Քաղաքատնտեսության ուսումնասիրության առարկան, ըստ Ռ-ի կարդոյի, թողարկված արդյունքի արտադրությանը մասնակցած դասակարգերի միջև բաշխումը որոշող օրենքներն են:

գ. Սահմանափակ ռեսուրսների արդյունավետ կառավարումն է:

դ. Մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության հանձնարարականների մշակումն է:

2) Եկամուտները և դրանց բաշխումը.

ա. Ըստ Ռ-ի կարդոյի՝ աշխատավարձը և շահույթը փոփոխվում են նույն ուղղությամբ:

բ. Ռենտան, ըստ Ռ-ի կարդոյի, ապրանքի արժեքի ավելցուկն է աշխատավարձից և շահույթից ու ստացվում է միջին և վատորակ հողերից:

գ. Հասարակության զարգացմանը զուգընթաց, ըստ Ռ-ի կարդոյի, ռենտան աճում է, իրական աշխատավարձը մնում է անփոփոխ, իսկ շահույթը նվազում է:

դ. Ըստ Ռ-ի կարդոյի՝ շահույթի նորմը ունի աճի միտում:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 8.ա

1) Ճիշտ է գ-ն:

Ի տարբերություն Ա. Սմիթի՝ տնտեսական աճի անսահման հնարավորությունները փաստարկող պնդումների (կապիտալի աճն առաջացնում է աշխատանքի աճող պահանջարկ, և բարձր աշխատավարձը ոչ միայն տնտեսական աճի հետևանք է, այլև դրա անհրաժեշտ պայման, բնակչության աճն ակնհայտ սոցիալական բարիք է, և ավելացած ազգաբնակչության համար սննդամթերքի հայթայթումը դժվարություն չի հարուցում)՝ Դ. Ռիկարդոն պնդում է, որ տնտեսական աճը վաղ թե ուշ կասեցվելու է բնական ռեսուրսների անբավարարության պատճառով: Ըստ Ռիկարդոյի՝ բնակչության թվաքանակի ավելացմամբ պահանջվող սննդամթերքի լրացուցիչ քանակը ստացվում է ավելի շատ աշխատանք ծախսելով (անվանական աշխատավարձն աճում է՝ ապահովելով իրական աշխատավարձի անփոփոխությունը), ռենտան աճում է (հողերը յուրացվում են լավից դեպի վատը հաջորդականությամբ), իսկ շահույթը՝ նվազում: «Արդյունավետ պահանջարկ» հասկացությունը տնտեսագիտության մեջ ներմուծվել է Ջ. Քեյնսի կողմից:

2) Ճիշտ է բ-ն:

Ըստ Ռիկարդոյի՝ ինչպես հողի էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ մշակման դեպքում ռենտան որոշվում է հատույցը նվազեցնող գործոններով և հավասար է միջին արդյունքի (ստացվում է հող հաստատուն գործոնի դիմաց) և սահմանային արդյունքի (ստացվում է աշխատանք և կապիտալ միասնական փոփոխուն գործոնի դիմաց) տարբերությամբ: Ռիկարդոն ռենտան չի համարում ապրանքների գնի բաղկացուցիչ մաս և գտնում է, որ ռենտա են ապահովում միայն միջին և լավորակ հողերը (կախված դրանց բերրիության և տեղադիրքի տարբերություններից): Նա ռենտան որոշում է որպես ապրան-

քի արժեքի ավելցուկ աշխատավարձից (բանվորի և նրա ընտանիքի անդամների կենսամիջոցների արժեքից) և շահույթից:

Թեսո N 8.բ

1) Ճիշտ է դ-ն:

Ըստ Ռ-իկարոյի՝ եկամուտների բոլոր տեսակների սկզբնաղբյուրը աշխատանքն է. «Աշխատանքը ցանկացած արժեքի հիմքն է»: Հետևաբար ապրանքի արժեքը որոշվում է աշխատանքային ծախսումների և աշխատանքի վարձատրության դրույքաչափի արտադրյալով: Ռ-իկարոյի կարծիքով՝ օգտակարությունը, լինելով փոխանակային արժեքի անհրաժեշտ պայման, արժեքի չափանիշ չէ: Արժեքը որոշվում է ծախսերով և օգտակարությամբ՝ ըստ Ա. Մարշալի: Օգտակարությունը միացնելով ծախսերին՝ Մարշալը ստեղծեց ծախսերն ու արդյունքները համադրող ընդհանուր տեսություն:

2) Ճիշտ է բ-ն:

Իրականում արտադրանքի թողարկման և իրացման ժամկետների միջև առկա է ժամանակային խզում, որը տոկոսի գոյացման հիմքն է, հետևաբար մույնիսկ միագործոն տնտեսության պայմաններում անավարտ արտադրանքից և պատրաստի ապրանքներից կազմված արդյունքի արժեքը պետք է հավասար լիներ վճարված աշխատավարձի և կանխավճարված կապիտալի տոկոսի գումարին: Արժեքի արտադրության գործոնների տեսությունը (անավարտ արտադրանքից և պատրաստի ապրանքներից կազմված արդյունքի արժեքը պետք է հավասար լինի վճարված աշխատավարձի, շահույթի և ռենտայի գումարին) ձևակերպել է Ա. Սմիթը:

Թեսո N 8.գ

1) Ճիշտ է գ-ն:

Բացարձակ առավելությունների առկայության դեպքում, ինչի մասին խոսել է Ա. Սմիթը, յուրաքանչյուր երկիր պետք է մասնագիտանա այն ապրանքի արտադրության մեջ, որն ավելի էժան է արտադրում այլ երկրների համեմատ, այսինքն՝ տվյալ ապրանքի ար-

տաղրությունը կատարվում է ամենափոքր ծախսերով: Սակայն իրականում նկատվում էր, որ տարբեր երկրների միջև առևտրի ժամանակ փոխանակվում են ապրանքներ, որոնց գծով բոլորովին սկնհայտորեն չեն դրսևորվում բացարձակ առավելությունները: Այսինքն՝ միջազգային գնից բարձր արտադրության ծախսեր ունեցող ապրանքների արտադրությունը և արտահանումը կարող են մաս փոխաշահավետ լինել: Այս հարցի պատասխանը տվեց համեմատական առավելությունների տեսության հեղինակ Դ. Ռիկարդոն:

2) Ճիշտ է դ-ն:

Դ. Ռիկարդոն պատասխանեց այն հարցին, թե ինչու կարող են արտահանվել ապրանքներ, որոնց գինը ավելի բարձր է արտահանող երկրում: Երկրների միջև միշտ գոյություն ունեն արտադրության ծախսերի տարբերություններ, ինչը չի բացառում համեմատական առավելության առկայությունը: Ըստ համեմատական առավելության տեսության՝ արտադրության համախառն ծավալը կլինի առավելագույնը այն դեպքում, երբ յուրաքանչյուր ապրանք արտադրվի այն երկրի կողմից, որտեղ ցածր են այլընտրանքային ծախսերը: Այսպիսով՝ երկիրը համեմատական առավելություն ունի այն ապրանքի գծով, որի արտադրության ծախսերի հարաբերությունը մյուս երկրի ծախսերի նկատմամբ իր համար ավելի բարենպաստ է, քան մյուս ապրանքների գծով: Դավիթ Ռիկարդոյի համեմատական առավելությունների սկզբունքի լուսարանումը մաթեմատիկորեն:

	Աշխատանքային ծախսումները		Հավասարակշռված միջազգային գինը
	Ամերիկա աշխարհամաս	Եվրոպա աշխարհամաս	
Միավոր սնունդ	a_1	a_3	$(a_1 + a_3)/2$
Միավոր հագուստ	a_2	a_4	$(a_2 + a_4)/2$

Դիցուք, Ամերիկյան ունի բացարձակ առավելություն և՛ սննդի ($a_3 > a_1$), և՛ հագուստի ($a_4 > a_2$) արտադրության մեջ, սակայն Ամերիկայում հագուստի արտադրությունը սննդի համեմատ ավելի քանկ է, քան Եվրոպայում ($a_2/a_1 > a_4/a_3$): Հետևաբար Ամերիկյան համեմատական առավելություն ունի սննդի, իսկ Եվրոպան՝ հագուստի արտադրության մեջ: Համեմատական առավելությունների սկզբունքի համաձայն՝ մասնագիտացման արդյունքում միավոր սննդի և միավոր հագուստի սպառումը յուրաքանչյուր աշխարհամասում կապահովվի ավելի ցածր աշխատանքային ծախսումներով:

Այդ նպատակով յուրաքանչյուր աշխարհամասի համար պետք է համեմատվեն աշխատանքային ծախսումները մասնագիտացումից առաջ և հետո: Աշխատանքային ծախսումները մինչև մասնագիտացումը Ամերիկայում հավասար են՝ $a_1 + a_2$ (գների հարաբերությունը՝ $P_u/P_h = a_1/a_2$), իսկ Եվրոպայում՝ $a_3 + a_4$ (գների հարաբերությունը՝ $P_u/P_h = a_3/a_4$):

Մասնագիտացումից հետո, երբ գների հարաբերությունը հավասար է՝ $P_u/P_h = (a_1 + a_3)/(a_2 + a_4)$, Ամերիկայում աշխատանքային ծախսումները հավասար են՝ $a_1 + a_1(a_2 + a_4)/(a_1 + a_3)$, որտեղ a_1 աշխատանքային ծախսումն ապահովում է միավոր սննդի արտադրությունը ներքին շուկայի համար, իսկ $a_1(a_2 + a_4)/(a_1 + a_3)$ աշխատանքային ծախսումն ապահովում է այնքան սննդի արտադրություն, որը միջազգային շուկայում ձևավորված գների հարաբերության պայմաններում՝ $P_h = P_u(a_2 + a_4)/(a_1 + a_3)$, կարող է փոխանակվել միավոր հագուստի հետ:

Նույն տրամաբանությամբ մասնագիտացումից հետո Եվրոպայում աշխատանքային ծախսումները հավասար են՝ $a_4 + a_4(a_1 + a_3)/(a_2 + a_4)$, որտեղ a_4 աշխատանքային ծախսումն ապահովում է միավոր հագուստի արտադրությունը ներքին շուկայի

համար, իսկ $a_4(a_1 + a_3)/(a_2 + a_4)$ աշխատանքային ծախսումն ապահովում է այնքան հագուստի արտադրություն, որը միջազգային շուկայում ձևավորված գների հարաբերության պայմաններում՝ $P_u = P_h(a_1 + a_3)/(a_2 + a_4)$, կարող է փոխանակվել միավոր սննդի հետ:

Մաթեմատիկորեն պետք է հիմնավորել, որ տրված պայմաններում.

1. Ամերիկա աշխարհամասի համար՝

$$a_1 + a_2 > a_1 + a_1(a_2 + a_4)/(a_1 + a_3),$$

2. Եվրոպա աշխարհամասի համար՝

$$a_3 + a_4 > a_4 + a_4(a_1 + a_3)/(a_2 + a_4):$$

Հիմնավորում՝

$$\begin{aligned} 1. \quad a_1 + a_2 > a_1 + a_1(a_2 + a_4)/(a_1 + a_3) &\Rightarrow a_2 > a_1(a_2 + a_4)/(a_1 + a_3) \Rightarrow \\ \Rightarrow a_2(a_1 + a_3) > a_1(a_2 + a_4) &\Rightarrow a_1a_2 + a_2a_3 > a_1a_2 + a_1a_4 \Rightarrow \\ \Rightarrow a_2a_3 > a_1a_4 &\Rightarrow a_2/a_1 > a_4/a_3 \end{aligned}$$

$$\begin{aligned} 2. \quad a_3 + a_4 > a_4 + a_4(a_1 + a_3)/(a_2 + a_4) &\Rightarrow a_3 > a_4(a_1 + a_3)/(a_2 + a_4) \Rightarrow \\ \Rightarrow a_3(a_2 + a_4) > a_4(a_1 + a_3) &\Rightarrow a_2a_3 + a_3a_4 > a_1a_4 + a_3a_4 \Rightarrow \\ \Rightarrow a_2a_3 > a_1a_4 &\Rightarrow a_2/a_1 > a_4/a_3 \end{aligned}$$

Թեոս N 8.դ

1) Ճիշտ է ք-ն:

Դ. Ռիկարդոն իր հիմնական՝ «Քաղաքատնտեսություն և հարկային համակարգի սկզբունքներ» աշխատությունում հստակ ձևակերպել է՝ քաղաքատնտեսության ուսումնասիրության առարկան թողարկված արդյունքի արտադրությանը մասնակցած դասակարգերի միջև բաշխումը որոշող օրենքներն են: Քաղաքատնտեսության ուսումնասիրության առարկան հարստության բնույթի ու պատճառների ու ուսումնասիրությունն է՝ ըստ Ա. Սմիթի, սահմանափակ ռեսուրս-

ների արդյունավետ կառավարումն է՝ ըստ Փ. Սամուելսոնի և Կ. Մաքքոնելի, մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության հանձնարարականների մշակումն է՝ ըստ Ջ. Զեյնսի:

2) Ճիշտ է գ-ն:

Ըստ Ռիկարդոյի՝ աշխատավարձը և շահույթը փոփոխվում են տարբեր ուղղություններով: Ռենտան ապրանքի արժեքի ավելցուկն է աշխատավարձից (բանվորի և նրա ընտանիքի անդամների կենսամիջոցների արժեքից) և շահույթից ու ստացվում է միջին և լավորակ հողերի վրա ներդրված կապիտալի դիմաց: Ռենտան գնագոյացնող գործոն չէ և չի անդրադառնում աշխատավարձի և շահույթի վրա: Շահույթի նորմի անկման միտումը Դ. Ռիկարդոն բացատրում է Թ. Մալթուսի «ազգաբնակչության» և «հողի նվազող բերրիության» օրենքներով:

**Թեմա 9. Ջոն Ստյուարտ Միլը և նրա
«Քաղաքատնտեսության սկզբունքները»**

Ջ. Միլ



Ծնվել է՝ 1806

Վախճանվել՝ 1873

(66 տարեկանում)

դաս. 2ժ / սեմ. 2ժ

- | | | |
|------------|---|---------|
| 9.1 | «Քաղաքատնտեսության սկզբունքները»
աշխատության կառուցվածքը և բովանդակությունը: | 0.5/0.5 |
| 9.2 | Միլի արժեքի տեսությունը և առաջարկի
էլաստիկության գաղափարը: | 0.5/0.5 |
| 9.3 | Միջազգային արժողության տեսությունը և
պահանջարկի էլաստիկությունը: | 0.5/0.5 |
| 9.4 | Ջ. Միլի եկամուտների տեսությունը, սո-
ցիալիզմ: | 0.5/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 98-104:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 164-206.

Թեստային առաջադրանքներ

(նշված պատասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 9.ա Ջոն Ստյուարտ Միլի «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատությունը

1) Աշխատության կառուցվածքը և բովանդակությունը.

ա. Գիրքը լույս է տեսել 1848 թ. և անցկատ է մնացել:

բ. Գրքում փորձ է արվել արժեքի աշխատանքային տեսությունը լրացնել օգտակարության վրա հիմնվող նոր գաղափարներով:

գ. Երբեք բուհական դասագիրք չի եղել:

դ. Գրքում ժխտվում են Դ. Ռիկարդոյի հիմնարար սկզբունքները:

2) Հասարակության տնտեսական զարգացման օրենքների դասակարգումը.

ա. Գրքում Միլը արտադրության օրենքները տարանջատեց բաշխման օրենքներից՝ դրանով իսկ մատնանշելով կապիտալիզմի բարեփոխման հնարավորությունները:

բ. Մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը բացարձակացվեց:

գ. Արտադրության օրենքները ամբողջապես չսահմանազատեց բաշխման օրենքներից:

դ. Իր նախորդների նման բացառեց շուկայական տնտեսության բարեփոխման հնարավորությունը:

Թեստ N 9.բ Ձ. Միլի արժեքի տեսությունը և առաջարկի առաձգականության գաղափարը

1) Ապրանքի արժեքի չափանիշը.

ա. Արժեքի չափանիշը ապրանքի օգտակարությունն է:

բ. Արժեքը որոշվում է և՛ ծախսերով, և՛ օգտակարությամբ:

գ. Արժեքը որոշվում է բոլոր ռեսուրսների ծախսերով:

դ. Ապրանքի արժեքի չափանիշը աշխատանքն է, այն հարաբերական հասկացություն է և որոշվում է մյուս ապրանքների նկատմամբ նրա գնողունակությամբ:

2) Արժեքի մեծությունը որոշող օրենքները.

ա. Գոյություն չունի արժեքի մեծությունը որոշող որևէ օրենք:

բ. Առանց ծախքերի ավելացման՝ անսահման բազմապատկման նկատմամբ զգայուն ապրանքների արժեքը որոշվում է պահանջարկով:

գ. Անսահման բազմապատկման նկատմամբ զգայուն, բայց ոչ առանց ծախքերի ավելացման ապրանքների արժեքը որոշվում է արտադրության վատագույն պայմաններում ծախսերի մեծությամբ:

դ. Արտադրության ծախսերով է որոշվում սահմանափակ առաջարկով ապրանքների արժեքը:

Թեստ N 9.գ Միլի միջազգային արժողության տեսությունը և պահանջարկի առաձգականությունը

1) Արտաքին առևտուրը և պահանջարկի առաձգականության սահմանումը.

ա. Արտահանվող բարիքները Միլը դասակարգում է չորս խմբում՝ կախված դրանց պահանջարկի գնային առաձգականությունից:

բ. Ըստ Միլի՝ ներմուծման հարկերը նպաստում են տնտեսության զարգացմանը:

գ. Ըստ Միլի՝ ներմուծման հարկերը տնտեսության վրա թողնում են նույն զսպող ազդեցությունը, ինչ արտահանման հարկերը:

դ. Պահանջարկի առաձգականությունը Միլը բնորոշում է պահանջարկի հարաբերական մեծության փոփոխություններով:

2) Արտահանվող ապրանքային խմբերի դասակարգումը՝ ըստ պահանջարկի առաձգականության մակարդակների.

ա. Միավոր առաձգականություն ունի այն բարիքների պահանջարկը, որոնց ողջ հասույթը մնում է անփոփոխ, քանի որ գինը նվազում է ավելի մեծ հարաբերությամբ, քան աճում է պահանջարկը:

բ. Միավոր առաձգականություն ունի այն բարիքների պահանջարկը, որոնց գները նվազում են նախորդ ժամանակահատվածի նկատմամբ:

գ. Միավոր առաձգականությունն ունի այն բարիքների պահանջարկը, որոնց ողջ հասույթը մնում է անփոփոխ, քանի որ պահանջարկը աճում է նույն հարաբերությամբ, ինչ էժամացումն է:

դ. Պակաս առաձգական է կայուն գներ ունեցող բարիքների պահանջարկը:

Թեստ N 9.դ Միլի եկամուտների տեսությունը. սոցիալիզմ

1) Եկամուտների տեսությունը.

ա. Միլը բաժանում էր Ռիկարդոյի այն տեսակետը, որ շահույթը և աշխատավարձը հակադիր են:

բ. Ըստ Միլի՝ շահույթը կապիտալի հատույցն է:

գ. Ըստ Միլի՝ շահույթը ձեռնարկատիրական ունակության հատույցն է:

դ. Ըստ Միլի՝ շահույթը գազվածության փոխհատուցումն է:

2) Սոցիալիզմ.

ա. Ըստ Միլի՝ շահույթի պատճառն այն է, որ աշխատանքն արտադրում է ավելին, քան անհրաժեշտ է իր վերականգնման համար:

բ. Ըստ Միլի՝ կապիտալիզմի օրոք գոյություն ունեցող սոցիալական արատների հիմքում ընկած է մասնավոր սեփականությունը:

գ. Ըստ Միլի՝ առանց մասնավոր սեփականության վերացման անհնարին է բարեփոխել կապիտալիզմը:

դ. «Սոցիալիզմ» գիտական հասկացությունը առաջինը ձևակերպել է Մարքսը:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 9.ա

1) Ճիշտ է ք-ն:

Ջ. Միլի «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատությունը լույս է տեսել 1848 թ. և նրա կենդանության օրոք վերահրատարակվել է յոթ անգամ՝ մինչև դարավերջ ծառայելով որպես քաղաքատնտեսության բուհական դասագիրք: **Ջ.** Միլը գրքում փորձ է արել արժեքի աշխատանքային տեսությունը լրացնել օգտակարության վրա հիմնվող նոր գաղափարներով՝ համակցելով Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի հիմնարար սկզբունքները նոր ձևավորվող ոչ դասական սկզբունքներին:

2) Ճիշտ է ա-ն:

Գրքում Միլը, արտադրության օրենքները ամբողջապես սահմանազատելով բաշխման օրենքներից, եզրակացնում է, որ տնտե-

սական աճը զարգացած երկրներում անխուսափելիորեն հանգեցնում է վերաբաշխման հետ կապված հիմնախնդիրների առաջացմանը և կարևորում է շուկայական տնտեսության բարեփոխման հնարավորությունը պետության կողմից: Միլը, սեփականության ինստիտուտի առաջացումը վերլուծելով, հերքում է ժառանգման իրավունքի նորմը, եթե սեփականությունը բռնագանձումների և պատահականությունների արդյունք է, համարում է թույլատրելի, եթե սեփականությունը (հողակտորները) որակական փոփոխության է ենթարկվել մարդկային աշխատանքի արդյունքում:

Թեստ N 9.բ

1) Ճիշտ է դ-ն:

Միլի արժեքի տեսության համաձայն՝ ապրանքի արժեքի չափանիշը աշխատանքն է, այն հարաբերական հասկացություն է և որոշվում է մյուս ապրանքների նկատմամբ նրա գնողունակությամբ: Արժեքի չափանիշը ապրանքի օգտակարությունն է՝ ըստ Քսենոֆոնի, արժեքը որոշվում է և՛ ծախսերով, և՛ օգտակարությամբ՝ ըստ Ա. Մարշալի, արժեքը որոշվում է բոլոր ռեսուրսների ծախսերով՝ ըստ Ա. Սմիթի:

2) Ճիշտ է գ-ն:

Ձ. Միլը արժեքի մեծությունը որոշող օրենքները պարզաբանելու նպատակով բարիքները բաժանում է երեք խմբի՝ 1.«սահմանափակ առաջարկով ապրանքներ», որոնց արժեքը որոշվում է բացառապես պահանջարկով, 2.«առանց ծախքերի ավելացման՝ անսահման բազմապատկման նկատմամբ զգայուն ապրանքներ», որոնց արժեքը որոշվում է արտադրության ծախքերով, 3.«անսահման բազմապատկման նկատմամբ զգայուն, բայց ոչ առանց ծախքերի ավելացման ապրանքներ»՝ արտադրության վատագույն պայմաններում ծախքերի մեծությամբ:

Թեստ N 9.գ

1) Ճիշտ է գ-ն:

Արտահանվող բարիքները Միլը դասակարգում է երեք խմբի՝ կախված դրանց պահանջարկի գնային առաձգականությունից (առաձգական, միավոր առաձգական, ոչ առաձգական): Եթե Δ . Միլի պահանջարկի գնային առաձգականության սահմանման մեջ «հարաբերություն» բառը փոխարինվի «համամասնություն» բառով, ապա կստացվի Ա. Մարշալի ժամանակակից ձևակերպումը: Ըստ Միլի՝ ներմուծման հարկերը տնտեսության վրա թողնում են նույն զսպող ազդեցությունը, ինչ որ արտահանման հարկերը:

2) Ճիշտ է գ-ն:

Ըստ Միլի՝ միավոր առաձգականություն ունի այն բարիքների պահանջարկը, որոնց ողջ հասույթը մնում է անփոփոխ, քանի որ պահանջարկը աճում է նույն հարաբերությամբ, ինչ որ էժանացումն է ($E=1$): Առաձգական պահանջարկ ունեն այն բարիքները, որոնց պահանջարկն աճում է ավելի արագ, քան ընկնում է գինը ($E>1$), իսկ ոչ առաձգական պահանջարկ ունեն այն բարիքները, որոնց հասույթը նվազում է, քանի որ քանակապես պահանջարկն աճում է նվազ հարաբերությամբ, քան ընկնում է գինը ($E<1$):

Թեստ N 9.դ

1) Ճիշտ է դ-ն:

Δ . Միլը հերքում էր Ռիկարդոյի այն տեսակետը, որ շահույթը և աշխատավարձը փոփոխվում են տարբեր ուղղություններով: Միլի կարծիքով տնտեսական աճը հանգեցնում է u' շահույթի, u' աշխատավարձի աճին: Ըստ Միլի՝ շահույթը զսպվածության փոխհատուցումն է: Շահույթը կապիտալի հատույցն է՝ ըստ Ա. Մմիքի: Շահույթը ձեռնարկատիրական ունակության հատույցն է՝ ըստ Ա. Մարշալի:


2) Ճիշտ է ա-ն:

Ըստ Միլի՝ շահույթի պատճառն այն է, որ աշխատանքն արտադրում է ավելին, քան անհրաժեշտ է իր վերականգնման համար:

Նա դասական քաղաքատնտեսության ներկայացուցիչներից առաջինն էր, ով իր աշխատություններում սոցիալական բարեփոխումների իրականացման պահանջներ ներկայացրեց: Նրա կարծիքով՝ մասնավոր սեփականությունը կապիտալիզմի օրոք գոյություն ունեցող սոցիալական արատների պատճառը չէ: Ջ. Սիլը կապիտալիզմի բարեփոխման նպատակով առաջարկում էր բաշխման և վերաբաշխման մեխանիզմների կատարելագործում պետության ակտիվ մասնակցությամբ, մասնավորապես ստեղծել պետական և մասնավոր միասնական կրթական համակարգ:

Թեմա 10. Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը

Կ. Մարքս



Ծնվել է՝ 1818

Վախճանվել՝ 1883

(64 տարեկանում)

դաս. 5ժ / սեմ. 4.5ժ

10.1	Կ. Մարքսի «Կապիտալը». կառուցվածքը, դերը տնտեսագիտության զարգացման գործում:	0.5/1
10.2	Կ. Մարքսի արժեքի տեսությունը:	1/1
10.3	Հավելյալ արժեքի մարքսյան տեսությունը:	1/1
10.4	Աշխատավարձի մարքսյան տեսությունը:	1/0.5
10.5	Շահույթի մարքսյան տեսությունը, մեծ հակասությունը:	1/0.5
10.6	Կ. Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը», կապիտալիզմի ճակատագիրը:	0.5/0.5

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 105-119:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД” 1994, стр. 207-274.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 10.ա Կ. Մարքսի «Կապիտալը». կառուցվածքը, դերը տնտեսագիտության զարգացման գործում

1) Մարքսի իրական նպատակները և «Կապիտալը».

ա. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորի առաջաբանում հայտարարում է, որ իր նպատակն է կապիտալիզմի զարգացման տնտեսական օրենքների ուսումնասիրությունը, և իրականացնում է անաչառ վերլուծություն:

բ. «Կապիտալի» հրատարակմանը հաջորդեց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հրապարակումը:

գ. «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև առկա է անհամապատասխանություն, ինչը նշանակում է հրաժարում առաջին հատորում շարադրված հիմնարար հասկացություններից՝ արժեք, հավելյալ արժեք և այլն:

դ. «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև առկա է անհամապատասխանություն, ինչը չպետք է մեկնաբանվի որպես հրաժարում առաջին հատորում շարադրված հիմնարար հասկացություններից՝ արժեք, հավելյալ արժեք և այլն:

2) «Կապիտալի» բովանդակությունը և դերը տնտեսագիտության զարգացման գործում

ա. «Կապիտալի» առաջին հատորում շարադրված օրենքները և մեխանիզմները ճշմարիտ են լուսաբանում հարաբերական գների մակարդակները:

բ. Ժամանակակից տնտեսագիտության բազմաթիվ հասկացություններ ձևակերպվել են Մարքսի կողմից «Կապիտալում»:

գ. «Կապիտալում» շարադրված մարքսյան հասկացությունները և մեխանիզմները կիրառելի են նաև ժամանակակից պայմաններում:

դ. 1867 թ. լույս տեսավ «Կապիտալի» առաջին հատորը, որում շարադրված դրույթները հեղինակը ծառայեցրել էր «Մանիֆեստում» հայտարարված նպատակների հիմնավորմանը:

Թեստ N 10.բ Մարքսի արժեքի տեսությունը

1) Ապրանքի բնորոշումը.

ա. Ըստ Մարքսի՝ ցանկացած տնտեսական բարիք ապրանք է:

բ. Ըստ Մարքսի՝ ցանկացած սպառողական արժեք ապրանք է:

գ. Ըստ Մարքսի՝ ապրանքը օգտակարություն ունեցող արտաքին իր է, առարկա:

դ. Ըստ Մարքսի՝ ծառայությունները ևս ապրանք են և ունեն արժեք:

2) Արժեքի սահմանումը.

ա. Համաձայն Մարքսի՝ արժեքը ապրանքում առարկայացած բոլոր ռեսուրսների ծախսումներն է:

բ. Համաձայն Մարքսի՝ ապրանքատեղծ աշխատանքն ունի եռակի բնույթ:

գ. Համաձայն Մարքսի՝ արժեքը ապրանքում առարկայացած կոնկրետ աշխատանքն է:

դ. Համաձայն Մարքսի՝ արժեքը ապրանքում առարկայացած արստրակտ աշխատանքն է:

Թեստ N 10.զ Հավելյալ արժեքի մարքայան տեսությունը

1) Հավելյալ արժեք հասկացության ձևակերպումը.

ա. Մարքսը կանխավճարված կապիտալը բաժանեց հիմնականի ու փոփոխունի:

բ. Հիմնական կապիտալը նոր արժեքի ձևավորման պայմանն է:

գ. Կապիտալը բաժանեց հաստատունի ու շրջանառուի:

դ. Հաստատուն կապիտալը նոր արժեքի ձևավորման պայմանն է:

2) Հավելյալ արժեքի արտադրությունը.

ա. Նոր արժեքի աղբյուրը կանխավճարված կապիտալն է:

բ. Հաստատուն կապիտալով ձեռք է բերվում աշխատուժը:

գ. Նոր արժեքի աղբյուրը փոփոխուն կապիտալն է:

դ. Փոփոխուն կապիտալով ձեռք է բերվում աշխատանքը:

Թեստ N 10.դ Մարքսի աշխատավարձի տեսությունը

1) Աշխատավարձը և աշխատանքը.

ա. Ըստ Մարքսի՝ աշխատանքը ապրանք է, և բանվորը վաճառում է իր աշխատանքը:

բ. Աշխատանքի ապրանք դառնալու պայմանը բանվորի իրավական ազատությունն է:

գ. Ըստ Մարքսի՝ աշխատանքը ապրանք չէ, քանի որ այն գոյություն չունի նախքան իր վաճառքը և արժեքի աղբյուր չէ:

դ. Ըստ Մարքսի՝ աշխատանքը ապրանք չէ, քանի որ այն գոյություն չունի նախքան իր վաճառքը և արժեքի օրենքի գործողության պայմաններում շահույթ չէր ստացվի:

2) Աշխատանքը և աշխատուժը.

ա. Ըստ Մարքսի՝ աշխատուժը մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունների ամբողջությունն է, որը նա օգտագործում է որևէ բարիք արտադրելուց, և ապրանք է:

բ. Ըստ Մարքսի՝ աշխատուժը մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունների ամբողջությունն է, որը նա օգտագործում է որևէ բարիք արտադրելուց, և ապրանք չէ:

գ. Աշխատավարձն աշխատանքի արժեքի փոխակերպված արտահայտությունն է:

դ. Ըստ Մարքսի՝ աշխատանքը և աշխատուժը նույնական հասկացություններ են:

Թեստ N 10.6 Շահույթի մարքայան տեսությունը

1) Արժեքը և արտադրության գինը.

ա. Մարքսը «Կապիտալի» երրորդ հատորում հավաստում է, որ կապիտալիզմի պայմաններում գործում է արժեքի օրենքը, այսինքն՝ փոխանակությունը կատարվում է ըստ արժեքի՝ համարժեքության սկզբունքին համաձայն:

բ. Հավասարամեծ կապիտալներից ավելի մեծ շահույթ է ապահովում այն կանխավճարված կապիտալը, որում ավելի մեծ է փոփոխում կապիտալը:

գ. Արժեքը և արտադրության գինը քանակապես համընկնում են:

դ. Արտադրության գինը հավասար է արտադրության կապիտալիստական ծախսերի և միջին շահույթի գումարին:

2) Հավելյալ արժեքը և շահույթը.

ա. Ներճյուղային մրցակցության արդյունքում ձևավորվում է ապրանքի արտադրության գինը:

բ. Միջճյուղային մրցակցության արդյունքում ձևավորվում է շուկայական արժեքը:

գ. Միջճյուղային մրցակցության արդյունքում արժեքը փոխակերպվում է արտադրության գնի, հավելյալ արժեքը՝ շահույթի:

դ. Շահույթի նորմն ունի աճի միտում:

Թեստ N 10.գ Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը», կապիտալիզմի ճակատագիրը

1) Կապիտալիզմի հակասությունները.

ա. Ըստ Մարքսի՝ կապիտալիստական հասարակության զարգացման ներուժը շարունակաբար վերականգնվում է:

բ. Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը» բնութագրում է հասարակական հարստության և մարդկանց բարեկեցության միջև գոյություն ունեցող ուղիղ կապը:

գ. Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը» բնութագրում է հասարակական հարստության և մարդկանց բարեկեցության միջև գոյություն ունեցող հակադարձ կապը:

դ. Ըստ Մարքսի՝ կապիտալիզմի զարգացման հակասությունները կարող են լուծվել նաև խաղաղ ճանապարհով:

2) Կապիտալիզմի ապագան.

ա. Համաձայն Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքի»՝ հասարակական հարստության աճին համընթաց բանվոր դասակարգի դրությունը բարելավվում է:

բ. Համաձայն Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքի»՝ հասարակական հարստության աճին համընթաց բանվոր դասակարգի դրությունը վատթարանում է հարաբերականորեն:

գ. Համաձայն Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքի»՝ հասարակական հարստության աճին համընթաց բանվոր դասակարգի դրությունը վատթարանում է բացարձակորեն:

դ. Համաձայն Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքի»՝ հասարակական հարստության աճին համընթաց բանվոր դասակարգի դրությունը վատթարանում է և՛ բացարձակորեն, և՛ հարաբերականորեն:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 10.ա

1) Ճիշտ է գ-ն:

Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորի առաջաբանում հայտարարում է, որ իր նպատակը կապիտալիզմի զարգացման տրմտեսական օրենքների ուսումնասիրությունն է, բայց նա իր իրական նպատակն արտահայտել էր 1848 թ. հրատարակված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում». դա մասնավոր սեփականության վերացումն էր և կապիտալիզմի հեղափոխական վերափոխումը: «Կապիտալի» առաջին և երրորդ հատորների միջև առկա է անհամապատասխանություն, ինչը նշանակում է հրաժարում առաջին հատորում շարադրված հիմնարար հասկացություններից՝ արժեք, հավելյալ արժեք և այլն:

2) Ճիշտ է դ-ն:

«Կապիտալի» առաջին հատորը լույս տեսավ 1867 թ., որում շարադրված դրույթները հեղինակը ծառայեցրել էր «Մանիֆեստում» հայտարարված նպատակների հիմնավորմանը: «Կապիտալի» առաջին հատորում շարադրված օրենքները և մեխանիզմները ճշմարիտ չեն լուսաբանում հարաբերական գների մակարդակները: Այդ աշխատությունում շարադրված մարքսյան հասկացությունները և մեխանիզմները կիրառելի չեն ժամանակակից պայմաններում:

Թեստ N 10.բ

1) Ճիշտ է գ-ն:

Ըստ Մարքսի՝ ապրանքը օգտակարություն ունեցող արտաքին իր է, առարկա, որը բավարարում է որևէ պահանջմունք և նախանշված է առուծախի միջոցով փոխանակվելու համար: Հետևաբար, որպեսզի իրը դառնա ապրանք, պետք է օժտված լինի երկու հատկու-

թյամբ՝ 1.օգտակարության՝ ունենա սպառողական արժեք, 2.փոխանակության՝ ունենա փոխանակային արժեք: Ըստ Մարքսի՝ ծառայությունները ապրանք համարվել չեն կարող:

2) Դիշտ է դ-ն:

Ըստ Մարքսի՝ փոխանակվող ապրանքներն ունեն տարբեր օգտակարություններ՝ սպառողական արժեքներ, հակառակ դեպքում փոխանակությունը անիմաստ կլիներ: Ի դեպ, ապրանքի սպառողական արժեքը կոնկրետ աշխատանքի, այսինքն՝ որոշակի օգտակար ձևով ծախսված աշխատանքի արդյունք է: Փոխանակվող ապրանքների ընդհանուր օբյեկտիվ հատկությունը միայն դրանց արտադրության վրա ծախսված հասարակական աշխատանքն է: Հետևաբար արժեքը ապրանքում առարկայացած աբստրակտ աշխատանքն է, որը մարդկային աշխատուժի ծախսում է՝ անկախ դրա կոնկրետ ձևից, հասարակական աշխատանքի մի մասնիկը: Համաձայն Մարքսի՝ ապրանքատեղծ աշխատանքն ունի երկակի բնույթ. 1. կոնկրետ՝ ձևավորում է ապրանքի սպառողական արժեքը և 2. աբստրակտ՝ ձևավորում է ապրանքի փոխանակային արժեքը:

Թեստ N 10.գ

1) Դիշտ է դ-ն:

Հաստատուն կապիտալը նոր արժեքի ստեղծման պայմանն է: Մարքսը կանխավճարված կապիտալը բաժանեց երկու մասի՝ 1. հաստատուն կապիտալ (փոխակերպվում է արտադրության միջոցների և արտադրության ընթացքում չի փոխում իր արժեքը) և 2. փոփոխուն կապիտալ (փոխակերպվում է աշխատուժի և արտադրության ընթացքում փոխում է իր արժեքը): Տնտեսագիտության մեջ ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիր Ֆ. Քենեն կապիտալը բաժանեց նախասկզբնական և տարեկան ավանսների, որոնք հետագայում Ա. Սմիթի կողմից համապատասխանաբար վերանվանվեցին հիմնական և շրջանառու կապիտալների:

2) Ճիշտ է գ-ն:

Ըստ Մարքսի՝ նոր արժեքի աղբյուրը փոփոխություն կապիտալն է: Հաստատուն կապիտալը (c) արժեքի ստեղծման պայման է, այլ ոչ թե աղբյուր, քանի որ աշխատանքի ընթացքում այն իր արժեքը չի փոփոխում, իսկ փոփոխություն կապիտալի (v) արժեքն անընդհատ փոփոխվում է. բանվորն աշխատանքի ընթացքում ստեղծում է նոր արժեք ($v+m$), որը հավասար է աշխատուժի արժեքին (v) գումարած որոշակի ավելցուկ (m): Այսպիսով՝ հավելյալ արժեքի աղբյուրը փոփոխություն կապիտալի հավելանն է:

Թեսս N 10.դ

1) Ճիշտ է դ-ն:

Ըստ Մարքսի՝ աշխատանքը ապրանք չէ, քանի որ այն գոյություն չունի նախքան իր վաճառքը և արժեքի օրենքի գործողության պայմաններում շահույթ չէր ստացվի: Մարքսի աշխատավարձի տեսության համաձայն՝ ապրանք է ոչ թե աշխատանքը, այլ աշխատուժը, հետևաբար բանվորը վաճառում է իր միակ սեփականությունը՝ աշխատուժը: Աշխատուժն ապրանք է դառնում հետևյալ երկու հանգամանքներով պայմանավորված՝ 1.բանվորի (աշխատուժի տիրոջ) իրավական ազատությամբ, և 2.արտադրամիջոցներից ու գոյամիջոցներից զուրկ բանվորը հարկադրված է որոշ ժամանակով վաճառել իր աշխատուժը: Աշխատուժը՝ որպես ապրանք, ունի սպառարժեք և արժեք: Աշխատուժի սպառողական արժեքը աշխատանքի ընթացքում սեփական արժեքը գերազանցող արժեք ստեղծելու ունակությունն է, իսկ փոխանակային արժեքը կամ արժեքը՝ աշխատուժի նորմալ վերարտադրության համար անհրաժեշտ կենսամիջոցների արժեքը:

2) Ճիշտ է ա-ն:

Ըստ Մարքսի՝ աշխատուժը մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունների ամբողջությունն է, որը նա օգտագործում է որևէ բարիք արտադրելուց, և ապրանք է: Մարքսի կարծիքով՝ աշխատանքը

և աշխատուժը նույնական հասկացություններ չեն, իսկ աշխատավարձը աշխատանքի արժեքի փոխակերպված արտահայտությունը (զինը) չէ: Քանի որ կապիտալիստը աշխատավարձի ձևով փոխհատուցում է բանվորի ստեղծած արժեքի այն մասը, որը համարժեք է նրա աշխատուժի արժեքին: Այսպիսով՝ աշխատավարձը համարժեք է բանվորի և նրա ընտանիքի գոյության համար անհրաժեշտ բարիքների քանակությանը:

Թեոս N 10.է

1) Ճիշտ է դ-ն:

Շահույթի մարքսյան տեսության համաձայն՝ արտադրության զինը (Z) հավասար է արտադրության կապիտալիստական ծախքերի ($k=c+v$) և միջին շահույթի ($p_{միջ}$) գումարին: Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորում նշում է, որ կապիտալիզմի պայմաններում գործում է արժեքի օրենքը, այսինքն՝ փոխանակությունը կատարվում է ըստ արժեքի՝ համարժեքության սկզբունքի համաձայն: Այստեղից հետևություն, որ հավասարամեծ կապիտալներից ավելի մեծ շահույթ է ապահովում այն կանխավճարված կապիտալը, որում ավելի մեծ է փոփոխում կապիտալը: Սակայն իրական կյանքում հավասարամեծ կապիտալներն ապահովում են հավասար շահույթներ: Ըստ Կ. Մարքսի՝ կապիտալիստական արտադրության անմիջական նպատակ հանդիսացող շահույթը արտադրության ծախքերի նկատմամբ ավելցուկ եկամուտն է, հավելյալ արժեքի փոխակերպված ձևը և դրա դրամական արտահայտությունը կամ իրացված հավելյալ արժեքը: «Կապիտալի» երրորդ հատորում մեկնաբանելով շահույթի և արժեքի փոխակերպման գործընթացները՝ համապատասխանաբար միջին շահույթի և արտադրության զնի՝ Կ. Մարքսը նշում է, որ ապրանքները վաճառվում են ոչ թե ըստ արժեքի, այլ ըստ արտադրության զնի ($Z=k+p_{միջիս}$): Արժեքը ($W=c+v+m$) և արտադրության զինը ($Z=k+p_{միջիս}$) քանակապես համընկնում են ($Z=W$) միայն այն ճյուղերում, որոնք ունեն կապիտալի միջին օրգանական կազմ (c/v): Կապիտալի բարձր օրգանական կազմ ունեցող ճյուղերում արտադրության

գինը գերազանցում է արժեքը ($Z > W$), իսկ կապիտալի ցածր օրգանական կազմ ունեցող ճյուղերում արտադրության գինը փոքր է արժեքից ($Z < W$):

2) Դիշտ է գ-ն:

Ըստ Կ. Մարքսի՝ միջնուղային մրցակցության արդյունքում արժեքը փոխակերպվում է արտադրության գնի, հավելյալ արժեքը՝ շահույթի: Տնտեսության տարբեր ճյուղերում շահույթի նորմի տարբերությունները հանգեցնում են միջնուղային մրցակցության, որն իր հերթին հանգեցնում է նրան, որ արդյունքում հավասարամեծ կապիտալներն ապահովում են հավասար շահույթներ: Արդյունքում ձևավորվում է շահույթի միջին նորմը՝ վերաբաշխելով հավելյալ արժեքը տարբեր ճյուղերի կապիտալիստ ձեռնարկատերերի միջև: Ըստ Մարքսի՝ ներճյուղային մրցակցության արդյունքում ձևավորվում է ապրանքի շուկայական արժեքը, և կապիտալիզմի զարգացմանը գույճընթաց շահույթի նորմն անկման միտում է դրսևորում:

Թեստ N 10.գ

1) Դիշտ է գ-ն:

Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքը» բնութագրում է հասարակական հարստության և մարդկանց բարեկեցության միջև գոյություն ունեցող հակադարձ կապը: Ըստ Մարքսի՝ կապիտալիստական հասարակության զարգացման ներուժը ինքնասպառվելու է, իսկ կապիտալիզմի զարգացման հակասությունները կարող են լուծվել հեղափոխական ճանապարհով:

2) Դիշտ է դ-ն:

Համաձայն Մարքսի «կապիտալի կուտակման ընդհանրական օրենքի», հասարակական հարստության աճին համընթաց բանվոր դասակարգի դրությունը վատթարանում է և՛ բացարձակորեն, և՛ հարաբերականորեն: Ըստ Մարքսի՝ կապիտալի կուտակման գործընթացը հասարակության մի բևեռում հանգեցնում է կապիտալի համա-

կենտրոնացման աստիճանի աճի: Արդյունքում մի կողմից սրվում է կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրության հասարակական բնույթի և դրա արդյունքների յուրացման մասնավոր բնույթի միջև, մյուս կողմից արտադրությունը կորցնում է իր տարերային բնույթը, և արտադրության հսկողությունը կենտրոնանում է խոշոր մասնավոր կապիտալի ձեռքում: Այդ իրավիճակում, Մարքսի կարծիքով, հասարակական արտադրությունը տեխնիկապես և կազմակերպական առումով պատրաստ է հասարակական հսկողության, ինչպես նաև տնտեսական համակարգի փոխարինման (սոցիալիզմին անցնելու) համար:

Թեմա 11. Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ

Ֆ. Լիստ



Ծնվել է՝ 1789

Վախճանվել՝ 1846

(57 տարեկանում)

դաս. 1Ժ / սեմ. 1Ժ

11.1 Քաղաքատնտեսության պատմական դպրոցի ձևավորումը Գերմանիայում և զարգացման փուլերը

1/1

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 120-123:
2. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер. с англ., Москва, «Прогресс», 1968г., стр. 23-55.

Թեստային առաջադրանքներ
(նշված պատասխաններից ճիշտ է միայն մեկը)

**Թեստ N 11.ա Պատմական ուղղության ձևավորումը
և էությունը**

1) Պատմական ուղղության ձևավորումը.

ա. Պատմական ուղղության ներկայացուցիչները ընդունում էին միասնական շուկայական համակարգի գոյության հնարավորությունը:

բ. Շեշտը դնում էին հիմնականում տնտեսական շարժառիթների վրա:

գ. Չէին ընդունում հասարակության զարգացման օրենքների գոյությունը և պնդում էին, որ յուրաքանչյուր երկիր զարգանում է առանձնահատուկ ձևով:

դ. Ժխտում էին ազգային տնտեսագիտության լինելիության հնարավորությունը:

2) Պատմական դպրոցի առանձնահատկությունները.

ա. Ընդունում էին Ա. Սմիթի կողմից հիմնավորված laissez faire սկզբունքը:

բ. Տնտեսական առաջընթացի անհրաժեշտ պայման էին համարում ազատականությունը:

գ. Հիմնավորում էին, որ ոչ ազատական տնտեսական համակարգերը ևս կարող են կենսունակ լինել:

դ. Բարոյականությունը, քաղաքականությունը, ավանդույթները և այլն համարում էին ածանցվող տնտեսական առաջընթացից:

Թեստ N 11.բ Նոր և նորագույն պատմական դպրոցների առանձնահատկությունները

1) Նոր և նորագույն պատմական դպրոցների ձևավորումը.

ա. Նոր պատմական դպրոցը սկզբնավորվել է տասնիններորդ դարի քառասունական թվականներին:

բ. Նորագույն պատմական դպրոցը սկզբնավորվել է տասնիններորդ դարի քառասունական թվականներին:

գ. Նորագույն պատմական դպրոցը սկզբնավորվել է տասնիններորդ դարի վերջին:

դ. Նոր պատմական դպրոցը սկզբնավորվել է քսաներորդ դարի առաջին քառորդում:

2) Հիմնական դրույթները.

ա. Ժխտում էին հին պատմական դպրոցի սկզբունքներն ու ավանդույթները:

բ. Բացառում էին զարգացող կապիտալիզմի հարմարեցման հնարավորությունը պահպանվող մինչկապիտալիստական կարգերին ու հարաբերություններին:

գ. Պատմական առաջընթացի հիմքը համարում էին նյութական արտադրության զարգացումը:

դ. Հավաքագրում էին պատմական տվյալներ, կազմակերպում էին քննարկումներ՝ փորձելով համակողմանի պատասխաններ տալ առաջ քաշված վարկածներին:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 11.ա

1) Ճիշտ է գ-ն:

Գերմանիայում ձևավորված պատմական ուղղության ներկայացուցիչները չէին ընդունում հասարակության զարգացման օրենքների գոյությունը և պնդում էին, որ յուրաքանչյուր երկիր զարգանում է առանձնահատուկ ձևով: Քաղաքատնտեսական այս նոր ուսմունքը հերքում էր բնական օրենքների անփոփոխության դրույթը և չէր ընդունում միասնական շուկայական համակարգի գոյության հնարավորությունը: Պատմական դպրոցը քննադատում էր դասական քաղաքատնտեսությունն այն պատճառով, որ տնտեսագիտության ուսումնասիրություններում դասականները շեշտադրում էին հիմնականում տնտեսական շարժառիթները՝ անտեսելով հասարակական կյանքի մյուս բնագավառները: Պատմական դպրոցի կայացմամբ ընդլայնվեց տնտեսագիտության ուսումնասիրության ոլորտը: Այս ուղղության հիմնարար սկզբունքից մեկի համաձայն՝ ազգերի էվոլյուցիան ընթանում է նրանց բնորոշ սկզբունքներին և օրենքներին համապատասխան, հետևաբար յուրաքանչյուր երկրին հատուկ է ազգային տնտեսագիտությունը:

2) Ճիշտ է գ-ն:

Պատմական դպրոցի ներկայացուցիչները հիմնավորում էին, որ ոչ ազատական տնտեսական համակարգերը ևս կարող են կենսունակ լինել, չէին ընդունում Ա. Սմիթի կողմից հիմնավորված *laissez faire* սկզբունքը՝ կարևորելով ազգի ներսում արտադրողական ուժերի զարգացման հիմքերի բացահայտումը: Եթե դասականների պընդմամբ բարոյականությունը, քաղաքականությունը, ավանդույթները և այլն ածանցյալ են տնտեսական առաջընթացից, ապա պատմական դպրոցի ներկայացուցիչները հակառակն էին պնդում. տնտեսական

աճն ու զարգացումը կախված են մնացյալ բնագավառների զարգացման մակարդակից:

Թեսո N 11.բ

1) Ճիշտ է գ-ն:

Գերմանիայի պատմական դպրոցի ձևավորման և զարգացման փուլերը երեքն են: Առաջին փուլը հայտնի է «Հին պատմական դրպրոց» (19-րդ դարի 40-60-ական թթ.), երկրորդ փուլը՝ «Նոր պատմական դպրոց» (19-րդ դարի 70-ականներից մինչև դարավերջ), երրորդ փուլը՝ «Նորագույն պատմական դպրոց» (19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարի առաջին քառորդ):

2) Ճիշտ է դ-ն:

Պատմական դպրոցի զարգացման երկրորդ փուլում հավաքագրում էին պատմական տվյալներ, կազմակերպում էին քննարկումներ, իսկ երրորդ փուլում ամփոփման միջոցով առաջ քաշված վարկածներին տրվում էին համակողմանի պատասխաններ: Նոր և նորագույն պատմական դպրոցները չէին ժխտում հին պատմական դպրոցի սկզբունքներն ու ավանդույթները, չէին բացառում զարգացող կապիտալիզմի հարմարեցման հնարավորությունը պահպանվող մինչկապիտալիստական կարգերին ու հարաբերություններին: Այս դպրոցի ներկայացուցիչների կարծիքով՝ նյութական արտադրության զարգացումը կախված է պատմական առաջընթացից:

**Բաժին Դ.
Արագ հասունացման փուլի տնտեսագիտական
տեսությունները**

**Թեմա 12. Մարժինալիզմ, սահմանային
օգտակարության տեսությունը**

Հ. Գոսեն



Ծնվել է՝ 1810
Վախճանվել՝ 1858
(47 տարեկանում)

Կ. Մենգեր



Ծնվել է՝ 1840
Վախճանվել՝ 1921
(81 տարեկանում)

դաս. 2ժ / սեմ. 1ժ

- | | | |
|-------------|--|-------|
| 12.1 | Սահմանային օգտակարության սկզբ-
բունքը, Գ. Գոսենի օրենքները: | 1/0.5 |
| 12.2 | Արժողության սահմանային օգտակա-
րության տեսությունը: | 1/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 124-129:
2. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер. с англ., Москва, «Прогресс», 1968г., стр. 145-233.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշդ է միայն մեկը)

Թեստ N 12.ա Սահմանային օգտակարության սկզբունքը, Գոտենի օրենքները

1) Բնական և սահմանային օգտակարությունները.

ա. Մարժինալիստները տնտեսագիտական հետազոտությունների ծանրության կենտրոնը տեղաշարժեցին արդյունքներից դեպի ծախսերը:

բ. Սահմանային օգտակարությունը կախված է տվյալ բարիքի քանակից և նրա պահանջարկի ինտենսիվությունից:

գ. Սահմանային օգտակարությունը կախված է տվյալ բարիքի որակից և նրա պահանջարկի ինտենսիվությունից:

դ. Սահմանային օգտակարությունը կախված է տվյալ բարիքի որակից և նրա քանակից:

2) Գոտենի օրենքները.

ա. Փոխանակությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ չեն հավասարվել տնօրինվող երկու բարիքների վերջին միավորների օգտակարությունները:

բ. Սպառվող բարիքի քանակության ավելացմանը համընթաց տվյալ բարիքի սահմանային օգտակարությունը աճում է:

գ. Սպառվող բարիքի քանակության ավելացմանը համընթաց տվյալ բարիքի ընդհանուր օգտակարությունը նվազում է:

դ. Սպառման օպտիմալ կառուցվածքը հաստատվում է գնի նկատմամբ սպառվող բարիքների սահմանային օգտակարությունների հավասարեցման դեպքում:

Թեստ N 12.բ Արժողության սահմանային օգտակարության տեսությունը

1) «Արժեք» և «ապրանք» հասկացությունների նոր մեկնաբանությունը.

ա. Արժեքի սահմանային օգտակարության տեսությունը ձևակերպվել է Մարքսի աշխատանքային տեսությամբ հակադրվելու նպատակով:

բ. Ըստ Մենգերի՝ տնտեսական բարիք են այն բարիքները, որոնց պահանջարկը տվյալ պահին հավասար է դրանց քանակին:

գ. Ըստ Մենգերի՝ տնտեսական բարիք են այն բարիքները, որոնց պահանջարկը տվյալ պահին գերազանցում է դրանց քանակը:

դ. Ըստ Մենգերի՝ տնտեսական բարիք են այն բարիքները, որոնց պահանջարկը տվյալ պահին փոքր է դրանց քանակից:

2) Արժողության չափանիշը և մեծությունը.

ա. Արժեքը իրի ներքին օբյեկտիվ հատկությունն է:

բ. Ապրանքի արժեքի մեծությունը կախված չէ տվյալ բարիքի միջոցով պահանջմունքների բավարարման կարևորությունից և հագեցվածության աստիճանից:

գ. Արժողությունը դատողություն է, որն անում են տնտեսվարող մարդիկ իրենց կյանքի և բարեկեցության ապահովման համար բարիքի օգտակարության մասին:

դ. Գոյություն ունի նյութական բարիքի միայն սուբյեկտիվ արժողություն:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 12.ա

1) Ճիշտ է բ-ն:

Ըստ մարժինալիստների՝ սահմանային օգտակարությունը կախված է տվյալ բարիքի քանակից՝ հազվագյուտությունից, և նրա պահանջարկի՝ անհատի սպառման ինտենսիվությունից: Մարժինալիստները տնտեսագիտական հետազոտությունների ծանրության կենտրոնը տեղաշարժեցին ծախսերից դեպի արդյունքները՝ ելակետ ընդունելով ոչ թե օբյեկտիվ գործոններն ու ուժերը օբյեկտիվ չափերով, այլ անհատի տնտեսական վարքագծի սուբյեկտիվ շարժառիթները: Ըստ մարժինալիստների՝ բարիքի արժեքը որոշվում է սահմանային օգտակարությամբ:

2) Ճիշտ է դ-ն:

Համաձայն «Գոսենի առաջին օրենքի»՝ սպառվող բարիքի քանակության ավելացմանը համընթաց տվյալ բարիքի սահմանային օգտակարությունը նվազում է: Համաձայն «Գոսենի երկրորդ օրենքի»՝ սպառման օպտիմալ կառուցվածքը հաստատվում է գնի նկատմամբ սպառվող բարիքների սահմանային օգտակարությունների հավասարեցման դեպքում:

Թեստ N 12.բ

1) Ճիշտ է գ-ն:

Ըստ Մենգերի՝ տնտեսական բարիք են այն բարիքները, որոնց պահանջարկը տվյալ պահին գերազանցում է դրանց քանակը, հետևաբար բոլոր տնտեսական բարիքներն ունեն արժողություն: Իսկ այն բարիքները, որոնց պահանջարկը տվյալ պահին փոքր է դրանց քանակից, մարդկանց համար արժողություն չունեն և կոչվում են ոչ տնտեսական բարիքներ: Երբեմն փորձում են ներկայացնել այնպես, որ արժեքի սահմանային օգտակարության տեսությունը ձևակերպ-

վել է Մարքսի աշխատանքային տեսությանը հակադրվելու նպատակով: Սակայն դա այդպես չէ, քանի որ առաջին նկատառումները Ու. Ջևոնսի կողմից հրատարակվել են Կ. Մարքսի «Կապիտալ» (1867) աշխատության հրատարակումից չորս տարի առաջ (1863), դրա անգլերեն տարբերակի հրատարակումից քսանչորս տարի առաջ:

2) Ճիշտ է գ-ն:

Արժողությունը դատողություն է, որն անում են տնտեսվարող մարդիկ իրենց կյանքի և բարեկեցության ապահովման համար բարիքի օգտակարության մասին: Արժողության սահմանային օգտակարության տեսության համաձայն՝ գոյություն ունեն նյութական բարիքների երկու արժողություն՝ սուբյեկտիվ (ցույց է տալիս, թե անհատը, իր պահանջմունքներից ելնելով, ինչքան է գնահատում այս կամ այն բարիքը) և օբյեկտիվ (բարիքի շուկայական գինն է, որը գոյություն ունի անհատի կամքից անկախ): Որոշիչ դերը պատկանում է սուբյեկտիվ արժողությանը, որը կախված է տվյալ բարիքի միջոցով պահանջմունքների բավարարման կարևորությունից և հագեցվածության աստիճանից, ինչպես նաև բարիքի քանակից:

Թեմա 13. Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը

Ա. Մարշալ



Ծնվել է՝ 1842

Վախճանվել՝ 1924

(81 տարեկանում)

դաս. 2ժ / սեմ. 2ժ

13.1	Էկոնոմիքս, տնտեսագիտության ուսումնասիրության առարկան:	1/1
13.2	Գնի մարշալյան տեսությունը. օգտակարությունը և պահանջարկը:	0.5/0.5
13.3	Գնի մարշալյան տեսությունը. ծախքերը և առաջարկը:	0.5/0.5

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 130-134:

2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД” 1994, стр. 306-394.
3. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер. с англ., Москва, «Прогресс», 1968г., стр. 296-309.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 13.ա Մարշալի տնտեսագիտական տեսությունը, տնտեսագիտության առարկան

1) Նորդասական տնտեսագիտական վերլուծությունը.

ա. Մարշալն իր «Տնտեսագիտության սկզբունքներում» հիմնավորեց ծախսային և օգտակարության վրա հիմնված հայեցակարգերի անհամատեղելիությունը:

բ. Մարշալն իր «Տնտեսագիտության սկզբունքներում» հիմնավորեց ծախսային սկզբունքի վրա հիմնված հայեցակարգը:

գ. Մարշալն իր «Տնտեսագիտության սկզբունքներում» հիմնավորեց սահմանային օգտակարության սկզբունքի վրա հիմնված հայեցակարգը:

դ. Մարշալը, օգտակարությունը միացնելով ծախքերին, ստեղծեց ծախքերն ու արդյունքները համադրող ընդհանուր տեսություն:

2) Տնտեսագիտության ուսումնասիրության առարկայի մարշալյան բնորոշումը.

ա. Տնտեսագիտությունն ուսումնասիրում է արտադրական հարաբերությունները:

բ. Տնտեսագիտությունն ուսումնասիրում է անհատի վարքագիծը:

գ. Տնտեսագիտությունն ուսումնասիրում է հարստությունը:

դ. Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան գլխավորապես այն շարժառիթներն են, որոնք առավել ուժեղ և կայուն են

ներգործում մարդու վարքագծի վրա, նրա կյանքի տնտեսական ոլորտում:

Թեստ N 13.ք Գ-նի մարշալյան տեսությունը

1) Պահանջարկը.

ա. Սահմանային օգտակարությունները՝ հաշվարկած փողային միավորներով, շուկայում դրսևորվում են որպես հավասարակշիռ գներ, որոնք սպառողները պատրաստ են վճարել այս կամ այն բարիքի համար:

բ. Սահմանային օգտակարությունները՝ հաշվարկած փողային միավորներով, շուկայում դրսևորվում են որպես նվազագույն գներ, որոնք սպառողները պատրաստ են վճարել այս կամ այն բարիքի համար:

գ. Պահանջարկի օրենքը բնորոշում է պահանջարկի մեծության և գնի ուղիղ կապը:

դ. Սահմանային օգտակարությունները՝ հաշվարկած փողային միավորներով, շուկայում դրսևորվում են որպես առավելագույն գներ, որոնք սպառողները պատրաստ են վճարել այս կամ այն բարիքի համար:

2) Առաջարկը.

ա Առաջարկի մեծության և գնի միջև առկա է հակադարձ կապ:

բ. Աճող կամ նվազող հատույցների դեպքում առաջարկի գինը որոշվում է արտադրության միջին ծախսերով:

գ. Հաստատուն հատույցի դեպքում առաջարկի գինը որոշվում է արտադրության նվազագույն ծախսերով:

դ. Աճող կամ նվազող հատույցների դեպքում առաջարկի գինը որոշվում է արտադրության սահմանային ծախսերով:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 13.ա

1) Ճիշտ է դ-ն:

Ա. Մարշալն իր «Տնտեսագիտության սկզբունքները» (1890) աշխատությունում հիմնավորեց ծախսային և օգտակարության վրա հիմնված հայեցակարգերի համատեղելիությունը և օգտակարությունը միացնելով ծախսերին՝ ստեղծեց ծախսերն ու արդյունքները համադրող ընդհանուր տեսություն՝ գնի ժամանակակից տեսությունը:

2) Ճիշտ է դ-ն:

Ըստ Ա. Մարշալի՝ տնտեսագիտությունն ուսումնասիրում է մարդկանց անհատական և հասարակական գործունեությունների այն ոլորտը, որը սերտորեն կապված է բարեկեցության նյութական հիմքերի ստեղծման և օգտագործման հետ: Հետևաբար այն մի կողմից հետազոտում է հարստությունը, իսկ մյուս կողմից մարդու ուսումնասիրության մաս է կազմում: Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան գլխավորապես այն շարժառիթներն են, որոնք առավել ուժեղ և կայուն են ներգործում մարդու վարքագծի վրա, նրա կյանքի տնտեսական ոլորտում: Ի դեպ, տնտեսական կյանքի գլխավոր շարժառիթների դրսևորման ուժը չափվում է փողով:

Թեստ N 13.բ

1) Ճիշտ է դ-ն:

Սահմանային օգտակարությունները՝ հաշվարկված փողային միավորներով, շուկայում դրսևորվում են որպես առավելագույն գներ, որոնք սպառողները պատրաստ են վճարել այս կամ այն բարիքի համար: Ըստ Ա.Մարշալի՝ հավասարակշիռ գինը հաստատվում է պահանջարկի և առաջարկի կորերի հատման կետում: Պահանջարկի գինը առավելագույն գինն է, որը գնորդը պատրաստ է վճարել բարիքի դիմաց և որոշվում է օգտակարությամբ: Առաջարկի գինը նվա-

զագույն գինն է, որով վաճառողը պատրաստ է վաճառել բարիքը, և որոշվում է արտադրության ծախսերով:

2) Դիշտ է դ-ն:

Աճող հատույցի (իրավիճակ, երբ արտադրության ծավալն աճում է ավելի արագ, քան ընդհանուր ծախսերը, հետևաբար արտադրության միջին ծախսերը նվազում են) կամ նվազող հատույցի (իրավիճակ, երբ ընդհանուր ծախսերն աճում են ավելի արագ, քան արտադրության ծավալը, հետևաբար արտադրության միջին ծախսերն աճում են) դեպքում առաջարկի գինը որոշվում է արտադրության սահմանային ծախսերով: Հաստատուն հատույցի (իրավիճակ, երբ արտադրության ծավալը և ընդհանուր ծախսերն աճում են նույն տեմպերով, հետևաբար արտադրության միջին ծախսերը հաստատուն են) դեպքում առաջարկի գինը որոշվում է արտադրության միջին ծախսերով: Առաջարկի մեծության և գնի միջև առկա է ուղիղ (դրական) կապ:

Քաժին Ե.

Տնտեսագիտական միտքը նորագույն ժամանակաշրջանում

Թեմա 14. Ինստիտուցիոնալիզմ

Թ. ՎԵՐԼԵՆ



Ծնվել է՝ 1857

Վախճանվել՝ 1929

(72 տարեկանում)

Ջ. ԳԵԼՔՐԵՅԻ



Ծնվել է՝ 1908

Վախճանվել՝ 2006

(97 տարեկանում)

դաս. 2ժ / սեմ. 2ժ

- | | | |
|-------------|---|---------|
| 14.1 | Ինստիտուցիոնալիզմի ձևավորումը
և մեթոդաբանական առանձնահատ-
կությունները: | 1/1 |
| 14.2 | Թ. Վեբլենի էֆեկտը և բարեփոխում-
ների տեսությունը: | 0.5/0.5 |
| 14.3 | Ջ. Գելբրեյթ. հավասարակշռող ուժը
և բարեկեցությունը: | 0.5/0.5 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 150-156:
2. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер. с англ., Москва, «Прогресс», 1968г., стр. 56-144.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 14.ա Ինստիտուցիոնալիզմի ձևավորումը և հիմնա- րար սկզբունքները

1) Ինստիտուցիոնալիզմի ձևավորումը.

ա. Թորստեն Վեբլենը տնտեսական ակտիվության գլխավոր շարժառիթ էր համարում նաև անձնական շահը:

բ. Ըստ Վեբլենի՝ տնտեսական ձեռնբերեցության ու ազատ ընտ-
րության հիմքը մասնավոր սեփականությունն է:

գ. Վեբլենը ընդունում էր շուկայական համակարգի ինքնակար-
գավորման հայեցակարգը:

դ. Թորստեն Վեբլենը տնտեսական ակտիվության գլխավոր շարժառիթ էր համարում նաև լավ կատարված և արդյունավետ աշ-
խատանքի նկատմամբ մարդու ներքին պահանջը:

2) Ինստիտուցիոնալիզմի հիմնական սկզբունքները.

ա. Ինստիտուցիոնալիստները կենտրոնական խնդիր էին համա-
րում ինքնին հաստատվող հավասարակշռության և պետական մի-
ջամտության բացառման տեսական հիմնավորումը:

բ. Սոցիալ-հոգեբանական (տեխնոկրատական) ուղղության
հիմնադիրն է Ջոն Կոմոնսը:

գ. Ինստիտուցիոնալիստները կենտրոնական խնդիր էին համարում անհավասարակշռության և տնտեսության հասարակական հիմքերի ուսումնասիրությունը:

դ. Ջոն Կոմոնսը կոնյուկտուրա-վիճակագրական ուղղության հիմնադիրն է:

Թեստ N 14.բ Վերլենի էֆեկտը և բարեփոխումների տեսությունը

1) Վերլենի էֆեկտը.

ա. Վերլենի էֆեկտը բնորոշում է մի իրավիճակ, երբ գնի իջեցման դեպքում տվյալ բարիքի պահանջարկը մնում է անփոփոխ:

բ. Վերլենի էֆեկտը բնորոշում է մի իրավիճակ, երբ գնի իջեցման դեպքում տվյալ բարիքի պահանջարկը աճում է:

գ. Վերլենի էֆեկտը բնորոշում է մի իրավիճակ, երբ եկամուտների աճի դեպքում տվյալ բարիքի պահանջարկը կրճատվում է:

դ. Վերլենի էֆեկտը բնորոշում է մի իրավիճակ, երբ գնի իջեցման դեպքում տվյալ բարիքի պահանջարկը կրճատվում է:

2) Բարեփոխումների տեսությունը.

ա. Ինստիտուտները անցյալում եղած գործընթացների արդյունք են, սակայն համապատասխանում են ներկայի պահանջներին:

բ. «Ինդուստրիալ ոլորտը», հեղափոխական ճանապարհով վերացնելով մասնավոր սեփականությունը, իր ձեռքն է վերցնում երկրի արդյունաբերական արտադրության ղեկավարումը:

գ. «Ինդուստրիալ ոլորտը» աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի արդյունաբերական արտադրության ղեկավարումը, իսկ նրանց շարժառիթը փողային եկամուտն է:

դ. «Ինդուստրիալ ոլորտը» աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի արդյունաբերական արտադրության ղեկավարումը, իսկ նրանց շարժառիթը հասարակության շահերին ծառայելն է:

Թեստ N 14.գ Ջ. Գելբրեյթ. հավասարակշռող ուժը և բարեկեցությունը

1) Հավասարակշռող ուժի հայեցակարգը.

ա. Գների և արտադրության ծախսերի հավասարությունը ապահովում է շնորհիվ մրցակիցների գնային քաղաքականության:

բ. Ժամանակակից շուկան մրցակցային է և ապահովում է գների և արտադրության ծախսերի հավասարությունը:

գ. Օլիգոպոլիայի պայմաններում տնտեսության մեջ համաձայնեցված գների հաստատումը կանխում է կառավարության վերահսկողությունը:

դ. Օլիգոպոլիայի պայմաններում որպես զսպող ուժ հանդես են գալիս ոչ թե մրցակիցները, այլ մատակարարները և սպառողները կազմակերպությունները:

2) «Առատության հասարակությունը».

ա. Օլիգոպոլիան խոչընդոտում է գիտատեխնիկական առաջընթացը և իջեցնում արտադրության արդյունավետությունը:

բ. Անհատական և հասարակական բարիքների անհամամասնության վերացման միջոցը մարդուն ուղղված կառավարության ներդրումների աճն է:

գ. Ժամանակակից հասարակությանը բնորոշ է անհատական բարիքների և հասարակական ծառայությունների առատությունը:

դ. Ժամանակակից հասարակությանը բնորոշ է անհատական բարիքների և հասարակական ծառայությունների սակավությունը:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 14.ա

1) Ճիշտ է դ-ն:

Թորսթեն Վեբլենը տնտեսական ակտիվության գլխավոր շարժառիթ էր համարում նաև լավ կատարված և արդյունավետ աշխատանքի նկատմամբ մարդու ներքին պահանջը: Նա չէր ընդունում շուկայական համակարգի ինքնակարգավորման հայեցակարգը և նշում էր, որ հիմքեր չկան ենթադրելու, որ հասարակական կարգ ու կանոնը կարող է ինքնին հաստատվել, մարդկությունը գտնվում է բարոյական կատարելագործման և նյութական բարեկեցության բարձրացման ուղի վրա, բայց հնարավոր է նաև վերադարձ վայրենությանը և տնտեսության ավերմանը: Թ. Վեբլենը առանձնացնում էր տընտեսական ակտիվության երեք շարժառիթ՝ 1.ծնողական զգացումը՝ նվիրվածությունը որևէ խմբին, 2.վարպետության բնագոյը՝ լավ կատարված և արդյունավետ աշխատանքի նկատմամբ մարդու ներքին պահանջը, 3.գուտ հետաքրքրասիրությունը՝ անշահախնդիր ձգտումը դեպի գիտելիքը: Ըստ Վեբլենի՝ մեքենայական դարաշրջանի սկզբից տնտեսական ակտիվության շարժառիթների գործողությունը այլափոխվել է մասնավոր սեփականության ազդեցության տակ:

2) Ճիշտ է գ-ն:

Ինստիտուցիոնալիզմի ներկայացուցիչները, քննադատելով դասական դպրոցի տեսական հիմնավորումները՝ ինքնին հաստատվող հավասարակշռության և պետական միջամտության բացառման վերաբերյալ, կենտրոնական խնդիր էին համարում անհավասարակշռության և տնտեսության հասարակական հիմքերի ուսումնասիրությունը: Ինստիտուցիոնալիզմի ներսում առանձնացնում են երեք ուղղություն՝ 1.Թորստեն Վեբլենի սոցիալ-հոգեբանական (տեխնոկրատական), 2.Վեյլի Միտչելի կոնյուկտուրա-վիճակագրական, 3. Ջոն Կոմոնսի սոցիալ-իրավական:

Թեստ N 14.բ

1) Ճիշտ է դ-ն:

Վերլենի Էֆեկտը բնորոշում է մի իրավիճակ, երբ գնի իջեցման դեպքում տվյալ բարիքի պահանջարկը կրճատվում է: Ըստ Վերլենի՝ ռանտիե սեփականատերերի (արսենթեխտների) համար կարող են գոյություն ունենալ իրենց վարկանիշը խորհրդանշող ապրանքների հատուկ գներ, որոնք չեն բխում պահանջարկի օրենքից: Այսինքն՝ ապրանքի գնի նվազումը գնորդի կողմից ընկալվում է որպես դրա որակի իջեցում կամ վարկանիշի ու արդիականության կորուստ՝ հանգեցնելով ապրանքի պահանջարկի նվազման, և ընդհակառակը՝ ապրանքի գնի բարձրացումը հանգեցնում է պահանջարկի և գնումների ծավալի աճին:

2) Ճիշտ է դ-ն:

«Ինդուստրիալ ոլորտը» աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի արդյունաբերական արտադրության ղեկավարումը, իսկ նրանց շարժառիթը հասարակության շահերին ծառայելն է: Վերլենը, քննադատելով ռանտիեներին, որոնք զբաղված են միայն ֆինանսական գործունեությամբ, առաջարկում է բարեփոխումների ծրագիր՝ նշելով, որ ինստիտուտները անցյալում եղած գործընթացների արդյունք են, հարմարեցված են անցյալի հանգամանքներին և ամբողջապես չեն համապատասխանում ներկայի պահանջներին: Ըստ Վերլենի՝ նոր կարգերի հաստատմամբ, երբ «Ինդուստրիալ ոլորտը» (մտավորականությունը, բանվորները, տեխնիկները և արտադրության այլ մասնակիցները) աստիճանաբար իր ձեռքը վերցնի երկրի արդյունաբերական արտադրության ղեկավարումը, ինդուստրիալ համակարգը կդադարի ծառայել արսենթեխտ սեփականատերերի շահերին:

Թեսո N 14.գ

1) Ճիշտ է դ-ն:

Օլիգոպոլիայի պայմաններում որպես զսպող ուժ հանդես են գալիս ոչ թե մրցակիցները, այլ մատակարարները և սպառողների կազմակերպությունները, քանի որ օլիգոպոլ շուկայում բարձրագույն տեխնիկայի կիրառության շնորհիվ ապահովվում է տնտեսության բավարար արդյունավետություն: Ըստ Ջ. Գելբրեյթի՝ ժամանակակից շուկան (փոքրաթիվ գնորդների և վաճառողների առկայության պայմաններում) մրցակցային չէ և չի ապահովում գների և արտադրության ծախսերի հավասարությունը: Օլիգոպոլիայի պայմաններում տնտեսության մեջ հաստատվում է համաձայնեցված գների համակարգ, որի նկատմամբ կառավարության վերահսկողությունը նշանակում է խաղի շարունակում գործարարության ոլորտի կանոններով:

2) Ճիշտ է ք-ն:

Ըստ Ջ. Գելբրեյթի՝ անհատական և հասարակական բարիքների անհամամասնության վերացման միջոցը մարդուն ուղղված կառավարության ներդրումների աճն է՝ կրթական, առողջապահական և այլ համակարգերի ընդլայնման միջոցով: Չնայած օլիգոպոլիան խթանում է գիտատեխնիկական առաջընթացը և բարձրացնում արտադրության արդյունավետությունը, բայց ժամանակակից հասարակությանը բնորոշ են անհատական բարիքների առատությունը և հասարակական ծառայությունների սակավությունը: Ըստ Ջ. Գելբրեյթի՝ անհրաժեշտ է հաստատել հավասարակշռություն մասնավոր կարգով սպառվող ապրանքների և հասարակական ծառայությունների միջև:

Թեմա 15. Քեյնսյան տեսությունը

Ջ. Քեյնս



Ծնվել է՝ 1883

Վախճանվել՝ 1946

(62 տարեկանում)

դաս. 5ժ / սեմ. 6ժ

- | | | |
|-------------|--|-------|
| 15.1 | Ջ. Մ. Քեյնսը և նրա «Ընդհանուր տեսություն» աշխատությունը: | 1/1 |
| 15.2 | Դասական սկզբունքների քեյնսյան քննադատությունը: | 1/1 |
| 15.3 | Տնտեսական մեծությունների քեյնսյան համակարգը. բազմարկիչ: | 1/1 |
| 15.4 | Ջ. Քեյնսի մակրոտնտեսական մոդելը. հավասարակշռությունը ոչ լրիվ զբաղվածության պայմաններում: | 1/1 |
| 15.5 | Տնտեսական կայունացման քաղաքականության քեյնսյան սկզբունքները: | 0.5/1 |

15.6 Տոկոսադրույքի քեյսյան մեկնաբանությունը:

0.5/1

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 135-149:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 607-629.
3. Жамс Э., История экономической мысли XX века, Москва, «ИЛ» 1959 г., стр. 235-281.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 15.ա Դասական սկզբունքների քեյսյան քննադատությունը

1) Դասական ուղղության հիմնարար սկզբունքները.

ա. Ապրանքները փոխանակվում են ապրանքների հետ, ուստի ամբողջական առաջարկի և պահանջարկի հավասարությունը պատահականություն է:

բ. Համաձայն դասական հայեցակարգի՝ փողի ավելի կամ պակաս քանակությունը տնտեսական տատանումների պատճառով է:

գ. Համաձայն դասական հայեցակարգի, տնտեսական տարբեր գործոնների միջև առկա են փոխկախվածության հարաբերություններ, ուստի հավասարակշռության ինքնին հաստատումը բացառվում է:

դ. Համաձայն դասական հայեցակարգի՝ տնտեսական տարրեր գործոնների միջև առկա են փոխկախվածության հարաբերություններ, ուստի հավասարակշռությունը հաստատվում է ինքնին:

2) Քեյնսյան մեկնաբանությունը.

ա. Ազգային եկամուտը տրված մեծություն է, և տնտեսագիտության խնդիրը բաշխման օրենքների սահմանումն է:

բ. Տնտեսական ակտիվության տեսանկյունից փողային գործոնները չեզոք են:

գ. Ըստ Քեյնսի՝ ազգային եկամուտը կարևորագույն կախյալ փոփոխական է, որի մակարդակը որոշող գործոնների բացահայտումը տնտեսագիտական հետազոտության ելակետն է:

դ. Ամբողջական պահանջարկը հավասար է արդյունավետ պահանջարկին:

Թեստ N 15.բ Տնտեսական մեծությունների քեյնսյան համակարգը. բազմարկիչ

1) Տնտեսական մեծությունների դասակարգումը.

ա. Համաձայն Քեյնսի՝ զբաղվածությունը աշխատավարձի ֆունկցիան է:

բ. Քեյնսյան մեկնաբանությամբ ամբողջական եկամուտը անկախ փոփոխական է:

գ. Քեյնսյան մեկնաբանությամբ աշխատուժի քանակն ու որակավորումը տրված մեծություններ են:

դ. Քեյնսյան մեկնաբանությամբ ամբողջական եկամուտը ելակետային՝ տրված մեծություն է:

2) Սպառման սահմանային հակումը, բազմարկիչ.

ա. Սպառման սահմանային հակումը հաշվարկվում է որպես սպառողական ծախսերի հարաբերություն խնայողություններին:

բ. Սպառման սահմանային հակման աճի դեպքում բազմարկիչը նվազում է:

գ. Սպառման սահմանային հակման աճի դեպքում բազմարկիչը մնում է անփոփոխ:

դ. Սպառման սահմանային հակման աճի դեպքում բազմարկիչը աճում է:

Թեստ N 15.գ Քեյնսյան քաղաքականության սկզբունքները

1) Գասական դպրոցի հակաճգնաժամային լուծումների քեյնսյան քննությունը.

ա. Աշխատավարձի իջեցումը, ըստ Քեյնսի, կնպաստի արտադրության ծախսերի կրճատմանը և արտադրության ու զբաղվածության աճին:

բ. Տոկոսադրույքի բարձրացումը, ըստ Քեյնսի, խթանելով խնայողությունները, կմեծացնի ներդրումները և արտադրության իրական ծավալը:

գ. Ազատ առևտրի քաղաքականությունը, ըստ Քեյնսի, ապահովում է ռեսուրսների լրիվ և արդյունավետ օգտագործումը:

դ. Աշխատավարձի իջեցումը և տոկոսադրույքի բարձրացումը, ըստ Քեյնսի, կխորացնեն տնտեսության անկումը:

2) Հակաճգնաժամային քաղաքականությունը.

ա. Գների կայուն մակարդակը, ըստ Քեյնսի, տնտեսական աճի պայմանն է:

բ. Ըստ Քեյնսի՝ տնտեսական քաղաքականության նպատակը պետք է լինի արդյունավետ պահանջարկի սահմանափակումը:

գ. Ըստ Քեյնսի՝ տնտեսական քաղաքականության նպատակը պետք է լինի արդյունավետ պահանջարկի խթանումը կայուն փողի քաղաքականության միջոցով:

դ. Տնտեսական քաղաքականության նպատակը, ըստ Քեյնսի, պետք է լինի արդյունավետ պահանջարկի խթանումը տոկոսադրույքի իջեցման, եկամուտների վերաբաշխման, պետական ներդրումների ավելացման ճանապարհով:

Թեստ N 15.դ Տոկոսադրույքի քեյնսյան մեկնաբանությունը

1) Տոկոսադրույքի դասական մեկնաբանության քեյնսյան վերլուծությունը.

ա. Համաձայն դասական տեսության՝ տոկոսադրույքի աճի դեպքում ներդրումները կրճատվում են:

բ. Համաձայն դասական տեսության՝ տոկոսադրույքի աճի դեպքում խնայողությունները կրճատվում են:

գ. Համաձայն քեյնսյան տեսության՝ տոկոսադրույքի աճի դեպքում խնայողությունները աճում են:

դ. Համաձայն դասական տեսության՝ տոկոսադրույքի աճի դեպքում խնայողությունները և ներդրումները աճում են:

2) Քեյնսյան մեկնաբանությունը.

ա. Տոկոսը խնայողության գինն է, և խնայողությունները կարելի է ավելացնել՝ տոկոսադրույքը մեծացնելով:

բ. Խնայողությունները կախված են նրանցից սպասվելիք եկամտից, և դրանք աճում են եկամտի աճին համընթաց:

գ. Տոկոսը գումար է, որը ձեռնարկատերը վճարում է փողատիրոջը, որպեսզի ստիպի նրան հրաժարվել իր միջոցների լիկվիդային մասից, հետևաբար տոկոսը լիկվիդից հրաժարվելու գինն է և կախված է միայն լիկվիդի ավել կամ պակաս գերապատվությունից:

դ. Տոկոսը գումար է, որը ձեռնարկատերը վճարում է փողատիրոջը, որպեսզի ստիպի նրան հրաժարվել իր միջոցների լիկվիդային մասից, հետևաբար տոկոսը լիկվիդից հրաժարվելու գինն է և կախված է լիկվիդի ավել կամ պակաս գերապատվությունից ու շրջանառության մեջ փողի քանակից:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 15.ա

1) Ճիշտ է դ-ն:

Ըստ դասական տեսության՝ տարբեր գործոնների միջև առկա են փոխկախվածության հարաբերություններ, ուստի հավասարակշռությունը հաստատվում է ինքնին: Դասական դպրոցի ներկայացուցիչներն ընդունում էին Սեյի շուկաների հայեցակարգը, ըստ որի՝ ապրանքները փոխանակվում են ապրանքների հետ, ուստի ամբողջական առաջարկը միշտ էլ պետք է հավասար լինի ամբողջական պահանջարկին: Դասականները փողի նշանակությունը՝ որպես տնտեսական ակտիվության վրա ազդող պատճառ, նվազեցնում էին և փողային գործոնի ակտիվությունը ընդունում էին միայն տնտեսական ցնցումների ժամանակ:

2) Ճիշտ է գ-ն:

Ըստ Քեյնսի՝ ազգային եկամուտը կարևորագույն կախյալ փոփոխական է, որի մակարդակը որոշող գործոնների բացահայտումը տնտեսագիտական հետազոտության ելակետն է: Քեյնսը հերքեց փողային գործոնների չեզոքության սկզբունքը՝ ապացուցելով, որ դրանք ազդում են ազգային եկամտի, գործարար ակտիվության և զբաղվածության վրա: Չընդունելով տնտեսական տարբեր գործոնների փոխկապվածությունը՝ նա անցավ դրանց պատճառայնության հարաբերությունների ուսումնասիրությանը: Նա ներմուծեց «արդյունավետ պահանջարկ» հասկացությունը՝ պնդելով, որ ամբողջական պահանջարկը կարող է անբավարար լինել ամբողջական առաջարկը կլանելու համար: Ըստ Քեյնսի՝ ամբողջական պահանջարկը պոտենցիալ բնույթի է, որը դրսևորվում է արդյունավետ պահանջարկի մեծությամբ: Ըստ դասականների՝ ազգային եկամուտը տրված մեծություն է, և տնտեսագիտության խնդիրը բաշխման օրենքների սահմանումն է:

Թեսո N 15.բ

1) Ճիշտ է գ-ն:

Քեյնսյան մեկնաբանությամբ՝ աշխատուժի քանակն ու որակավորումը տրված մեծություններ են: Ըստ Քեյնսի՝ ազգային եկամուտն է պայմանավորում զբաղվածության մակարդակը, որը ոչ թե աշխատավարձի, այլ եկամտի ֆունկցիան է: Համաձայն Քեյնսի՝ տնտեսությունում գոյություն ունեն երեք կարգի մեծություններ՝ 1. ելակետային՝ մեծություններ, որոնք անփոփոխ են համենայն դեպս կարճ ժամանակահատվածի համար (առկա աշխատուժի որակավորումը և քանակը, առկա արտադրության միջոցների որակը և քանակը, տեխնիկական, մրցակցության առկա մակարդակը, սպառողների ճաշակն ու սովորությունները և այլն), 2. կախյալ փոփոխականներ (ազգային եկամտի ծավալը և դրանով պայմանավորված զբաղվածության մակարդակը), 3. անկախ փոփոխականներ՝ մեծություններ, որոնք, պատճառային գործոնների դեր կատարելով, ներգործում են կախյալ փոփոխականների վրա՝ առանց հակադարձ ազդեցության (սպառման հակումը, ներդրումների կամ կուտակման մղումը, տոկոսադրույթը):

2) Ճիշտ է դ-ն:

Սպառման սահմանային հակման աճի դեպքում բազմարկիչը աճում է: Սպառման սահմանային հակումը հաշվարկվում է որպես սպառման հավելաճի հարաբերություն այդ հավելաճն ապահովող եկամտի հավելաճին, իսկ խնայողության սահմանային հակումը՝ որպես խնայողության հավելաճի հարաբերություն այդ հավելաճն ապահովող եկամտի հավելաճին: Սպառման և խնայողության սահմանային հակումների գումարը հավասար է մեկի, իսկ բազմարկիչը հաշվարկվում է որպես խնայողության սահմանային հակման հակադարձ մեծություն: Այսպիսով, երբ սպառման սահմանային հակումն աճում է, խնայողության սահմանային հակումը նվազում է՝ հանգեցնելով բազմարկչի աճին:

Թեսո N 15.գ

1) Ճիշտ է դ-ն:

Աշխատավարձի իջեցումը և տոկոսադրույքի բարձրացումը, ըստ Քեյնսի, կխորացնեն տնտեսության անկումը: Դասական դպրոցի կողմից առաջարկվող ճգնաժամի հաղթահարման այս միջոցները քննադատելով՝ Քեյնսը նշում էր, որ դրանք կունենան հակառակ ազդեցություն: Ըստ Քեյնսի՝ աշխատավարձի իջեցումը կնվազեցնի պահանջարկը՝ չափելով զբաղվածության վրա, իսկ տոկոսադրույքի բարձրացումը նույնպես կնվազեցնի պահանջարկը՝ կրճատելով ներդրումները: Հետևաբար գործազրկությունը պայմանավորված է անբավարար «արդյունավետ պահանջարկով», որը բացատրվում է ներդրումների սահմանափակությամբ և դրանով իսկ զբաղվածության ցածր մակարդակով: Չբաղվածության հիմնախնդրի՝ ռեսուրսների լրիվ և արդյունավետ օգտագործման նպատակով, ըստ Քեյնսի, պետք է կիրառվի հովանավորչական քաղաքականություն:

2) Ճիշտ է դ-ն:

Տնտեսական քաղաքականության նպատակը, ըստ Քեյնսի, պետք է լինի արդյունավետ պահանջարկի խթանումը տոկոսադրույքի իջեցման, եկամուտների վերաբաշխման, պետական ներդրումների ավելացման ճանապարհով: Քեյնսը տնտեսական վերելք սպառնալից «առողջ փողը» գերադասում է «կայուն փողից»՝ առաջարկելով հրաժարվել ոսկու ստանդարտից և անցնել թղթադրամային համակարգին: Տնտեսական ակտիվության աճի նպատակով Քեյնսը առաջարկում էր մեծացնել շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը և տոկոսադրույքի նվազեցման միջոցով խթանել սպառողական և ներդրումային ծախսերը, պետական ներդրումների ավելացման հաշվին փոխհատուցել մասնավոր ներդրումների կրճատման բացասական ազդեցությունը ամբողջական եկամտի վրա, վերաբաշխել եկամուտները սպառման ցածր հակում ունեցող խավերից դեպի բարձր հակում ունեցողները՝ ապահովելով ամբողջական պահանջարկի աճ, ազգային եկամտի և զբաղվածության առավել բարձր մակարդակ:

Թեստ N 15.դ

1) Ճիշտ է դ-ն:

Համաձայն դասական տեսության՝ տոկոսադրույքի աճի դեպքում խնայողությունները և ներդրումները աճում են: Դասականների կարծիքով՝ տոկոսը խնայողության գինն է, իսկ խնայողությունները՝ ներդրումների աղբյուրը: Ըստ Քեյնսի՝ տոկոսը խնայողության գինը չէ, իսկ խնայողությունները՝ որպես սպառման համար նախատեսված միջոցների մնացորդ, կախված են բաշխվող եկամտի մեծությունից և կատարվում են այն ժամանակ, երբ պահանջմունքները արդեն բավարարված են և հնարավոր լրացուցիչ ծախսումները դրանք պակաս չափով կբավարարեն: Հետևաբար խնայողությունները կախված չեն նրանցից սպասվելիք եկամտից, և տոկոսադրույքի աճը չի կարող հանգեցնել խնայողությունների աճի:

2) Ճիշտ է դ-ն:

Ըստ Քեյնսի՝ տոկոսը գումար է, որը ձեռնարկատերը վճարում է փողատիրոջը, որպեսզի ստիպի նրան հրաժարվել իր միջոցների լիկվիդային մասից, հետևաբար տոկոսը ոչ թե խնայողության, այլ լիկվիդից հրաժարվելու գինն է և կախված է լիկվիդի ավել կամ պակաս գերապատվությունից և շրջանառության մեջ փողի քանակից: Այսպիսով՝ տոկոսը առաջին հերթին կախված է հոգեբանական գործոնից՝ կանխիկի ավել կամ պակաս գերադասումից (որն էլ իր հերթին կախված է գործարքի բնույթից, ռիսկից, սպեկուլյատիվ նկատառումներից), իսկ երկրորդ հերթին՝ շրջանառության մեջ փողի քանակից, որի աճը հանգեցնում է տոկոսադրույքի նվազման՝ խթանելով ներդրումները: Ըստ Քեյնսի՝ կանխիկի առաջարկի աճը մի կողմից ներդրումները դարձնում է մատչելի, մյուս կողմից փողի էմիսիան՝ զնաճ առաջացնելով՝ փոքրացնում է լիկվիդային միջոցներ ունենալու մարդկանց ցանկությունը:

Թեմա 16. Նոր պահպանողական տեսությունները

Մ. Ֆրիդմեն



Ծնվել է՝ 1912

Վախճանվել՝ 2006

(94 տարեկանում)

դաս. 6Ժ / սեմ. 6Ժ

- | | | |
|------|---|-----|
| 16.1 | Մոնետարիզմի ձևավորումը, հիմնական սկզբունքները: | 1/1 |
| 16.2 | Փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանությունը: | 1/1 |
| 16.3 | Ֆիլիպսի կորը՝ էմպիրիկ և տեսական հիմնավորումը: | 1/1 |
| 16.4 | Ֆիլիպսի կորի մոնետարիստական մեկնաբանությունը: | 1/1 |
| 16.5 | Ֆիսկալ քաղաքականությունը և մոնետարիզմը: | 1/1 |
| 16.6 | Ռացիոնալ և ադապտիվ սպասումների տեսությունները: | 1/1 |

Գրականության ցանկ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., էջ 157-169:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994, стр. 629-661.

Թեստային առաջադրանքներ

(նշված պարասխաններից ճիշտ է միայն մեկը)

Թեստ N 16.ա Մոնետարիզմի ձևավորումը, հիմնական սկզբունքները

1) Մոնետարիզմի ձևավորումը.

ա. Ըստ Ֆրիդմենի՝ փողի առաջարկի և պահանջարկի գործոնները փոխկախված են:

բ. Ըստ Ֆրիդմենի՝ փողի պահանջարկի ֆունկցիան անկայուն է, բայց կարևոր:

գ. Ըստ Ֆրիդմենի՝ փողի պահանջարկի ֆունկցիան կայուն է և կարևոր:

դ. Ըստ Ֆրիդմենի՝ փողի պահանջարկի ֆունկցիան կայուն է, բայց ոչ կարևոր:

2) Փողի զանգվածի փոփոխության ազդեցության շղթան՝ ըստ մոնետարիստների.

ա. Փողի զանգվածի փոփոխությունը տոկոսադրույքի միջոցով ազդում է միայն ներդրումների վրա:

բ. Փողի զանգվածի փոփոխությունը տոկոսադրույքի միջոցով ազդում է միայն սպառողական ծախսումների վրա:

գ. Փողի զանգվածի փոփոխությունը տոկոսադրույքի միջոցով ազդում է միայն կառավարության գնումների վրա:

դ. Փողի զանգվածի փոփոխությունը ազդում է ամբողջական ծախսումների բոլոր տարրերի վրա:

Թեստ N 16.բ Փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանությունը

1) Փողի քանակական տեսությունը.

ա. Փողի քանակական հավասարումն է $MV=PQ$, որտեղ V -ն փողի զանգվածն է, իսկ P -ն՝ գների մակարդակը:

բ. Փողի քանակական հավասարումն է $MV=PQ$, որտեղ P -ն գների մակարդակն է, V -ն՝ փողի զանգվածը, իսկ Q -ն՝ արտադրության իրական ծավալը:

գ. Համաձայն փողի քանակական տեսության՝ M -ի աճի դեպքում գների մակարդակը համամասնորեն նվազում է:

դ. Փողի քանակական հավասարումն է $MV=PQ$, որտեղ Q -ն արտադրության իրական ծավալն է, իսկ V -ն՝ փողի շրջանառության արագությունը:

2) Մոնետարիստական մեկնաբանությունը.

ա. Համաձայն փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանության, M -ի աճի դեպքում գների մակարդակը և արտադրության իրական ծավալը համամասնորեն աճում են, եթե փողի շրջանառության արագությունը հաստատուն է:

բ. Համաձայն փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանության, քանի որ փողի շրջանառության արագությունը հաստատուն է, M -ի աճի դեպքում գների մակարդակը համամասնորեն աճում է, իսկ արտադրության ծավալը մնում է անփոփոխ:

գ. Համաձայն փողի քանակական տեսության մոնետարիստական մեկնաբանության՝ M -ի աճի դեպքում գների մակարդակը հա-

մամասնորեն աճում է, քանի որ փողի շրջանառության արագությունը հաստատուն է:

դ. Համաձայն փողի քանակական տեսության՝ կարճ ժամանակահատվածում M-ի աճի դեպքում գների մակարդակը մնում է անփոփոխ, իսկ արտադրության իրական ծավալը աճում է:

Թեստ N 16.գ Ֆիլիպսի կորը. էմպիրիկ և տեսական հիմնավորումը

1) Գործազրկությունը և գնաճը՝ ըստ քեյնսականների.

ա. Անվանական աշխատավարձի հավելաճի և գործազրկության մակարդակի միջև առկա է ուղիղ կապ, որն էլ ներկայացնում է Ֆիլիպսի կորը:

բ. Երկար ժամանակահատվածում աշխատավարձի աճը ուղեկցվում է զբաղվածության աճով:

գ. Անվանական աշխատավարձի հավելաճի և գործազրկության մակարդակի միջև բացակայում է որևէ կապ, ինչն էլ լուսաբանում է Ֆիլիպսի կորը:

դ. Գնաճի և գործազրկության մակարդակների միջև առկա է հակադարձ կապ, որն էլ ներկայացնում է Ֆիլիպսի կորը:

2) Ստագֆլյացիան և Ֆիլիպսի կորը.

ա. Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները մեկնաբանում են կորի աջ և ներքև տեղաշարժով:

բ. Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները պատճառաբանում են առաջարկի շոկերով:

գ. Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները ներկայացնում են որպես դրական կապի առկայություն գնաճի և գործազրկության միջև:

դ. Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները ներկայացնում են որպես կապի բացակայություն գնաճի և գործազրկության միջև:

Թեստ N 16.դ Ֆիլիպսի կորի մոնետարիստական մեկնաբանությունը

1) Ստագֆլյացիան և Ֆիլիպսի կորը.

ա. Ըստ մոնետարիստների՝ գործազրկության և գնաճի միջև առկա է բացասական կապ:

բ. Ըստ մոնետարիստների՝ երկարաժամկետ հատվածում գործազրկության ցանկացած մակարդակ համապատասխանում է գործազրկության բնական մակարդակին:

գ. Մոնետարիստները ստագֆլյացիան բացատրում էին Ֆիլիպսի կորի աջ և վերև տեղաշարժով:

դ. Ըստ մոնետարիստների՝ գործազրկության և գնաճի միջև առկա է դրական կապ:

2) Մոնետարիստական մեկնաբանությունը.

ա. Ըստ մոնետարիստների՝ թե՛ երկար և թե՛ կարճ ժամանակահատվածներում գործազրկության և գնաճի միջև բացասական կապը բացակայում է:

բ. Ըստ մոնետարիստների՝ կարճ ժամանակահատվածում գործազրկության և գնաճի միջև բացասական կապը բացակայում է, եթե գնաճի փաստացի տեմպը ցածր է սպասվածից:

գ. Ըստ մոնետարիստների՝ կարճ ժամանակահատվածում գործազրկության և գնաճի միջև բացասական կապը բացակայում է, եթե գնաճի փաստացի տեմպը բարձր է սպասվածից:

դ. Ըստ մոնետարիստների՝ կարճ ժամանակահատվածում գործազրկության և գնաճի միջև առկա է բացասական կապ:

Թեստային առաջադրանքների պատասխանները և մեկնաբանությունները

Թեստ N 16.ա

1) Ճիշտ է գ-ն:

Ըստ Ֆրիդմենի՝ փողի պահանջարկի ֆունկցիան կայուն է և կարևոր, իսկ փողի պահանջարկի և առաջարկի գործոնները անկախ են: Ըստ մոնետարիստների՝ փողի պահանջարկը կայուն է մույնիսկ ամենաանբարենպաստ պայմաններում: Սրանով հաստատվում է դրամաշրջանառության արագության (V) կայունությունը (ի դեպ, կայունությունը չի նշանակում հաստատուն): Դրամաշրջանառության արագության (V) վրա ազդող գործոնները փոփոխվում են աստիճանաբար և կանխատեսելի են, բացի այդ՝ դրամաշրջանառության արագությունը փողի զանգվածի (M) փոփոխությանը համընթաց չի փոփոխվում: Մոնետարիստների կարծիքով՝ մարդիկ հաստատուն պահանջարկ ունեն իրենց ակտիվների մի մասը պահել կանխիկ, որի մեծությունը կախված է ՀՆԱ-ի մակարդակը պայմանավորող գործոններից: Մոնետարիզմի կարգախոսն է՝ «Նշանակություն ունի միայն փողը»:

2) Ճիշտ է դ-ն:

Փողի զանգվածի փոփոխությունը ազդում է ամբողջական ծախսումների բոլոր տարրերի վրա: Ի տարբերություն քեյնսականների (նրանց կարծիքով՝ փողի ազդեցությունը տարածվում է միայն տոկոսադրույքի միջոցով)՝ մոնետարիստները կարծում են, որ փողի զանգվածի փոփոխությունը ազդում է ոչ միայն ներդրումների, այլև ամբողջական ծախսումների մյուս բոլոր տարրերի՝ սպառողական ծախսումների (C), կառավարության գումարների (G) և զուտ արտահանման (X_n) վրա: Միաժամանակ մոնետարիստները գտնում են, որ տնտեսության մասնավոր հատվածը հիմնականում կայուն է, իսկ անկայունության դրսևորումները կառավարության կողմից իրականացվող ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունների ազդեցության հետևանք են:

Թեստ N 16.բ

1) Ճիշտ է դ-ն:

Ըստ Ի. Ֆիշերի՝ փողի քանակական տեսության հիմքը փոխանակային հավասարումն է՝ $MV=PQ$, որտեղ M -ը շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածն է, Q -ն՝ արտադրության իրական ծավալը, P -ն՝ գների մակարդակը, իսկ V -ն՝ փողի շրջանառության արագությունը: Փողի քանակական հավասարումը կապ է հաստատում գների մակարդակի, շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի, փողի շրջանառության արագության և ազգային արդյունքի իրական ծավալի միջև: Համաձայն փողի քանակական տեսության՝ շրջանառության համար անհրաժեշտ է փողի այնպիսի քանակություն, որը կապահովի սպրանքափոխանակության բոլոր գործարքների իրականացումը, և փողի շրջանառության արագության (V) և առևտրական գործարքների ծավալների (Q) անփոփոխ պայմաններում գների (P) փոփոխությունը ուղիղ համեմատական է շրջանառության մեջ գտնվող փողի քանակին (M):

2) Ճիշտ է դ-ն:

Համաձայն փողի քանակական տեսության՝ կարճ ժամանակահատվածում M -ի աճի դեպքում գների մակարդակը մնում է անփոփոխ, իսկ արտադրության իրական ծավալը աճում է: Ըստ մոնետարիստների՝ փողի շրջանառության արագությունը (V) կայուն է, հետևաբար փոխանակային հավասարումից բխում է փողի զանգվածի և անվանական եկամտի միջև կապը ($V = PQ/M$): Անվանական եկամուտը փոփոխվում է փողի զանգվածի փոփոխությունից 6-9 ամիս հետո՝ կարճաժամկետ հատվածում ազդելով արտադրության ծավալի, իսկ երկարաժամկետ հատվածում՝ գների մակարդակի վրա:

Թեսո N 16.գ

1) Ճիշտ է դ-ն:

Գնաճի և գործազրկության մակարդակների միջև առկա է հակադարձ կապ, որն էլ ներկայացնում է Ֆիլիպսի կորը: Օլբան Վիլյամ Ֆիլիպսի գիտական ուսումնասիրության արդյունքում (1958 թ.) բացահայտվեց անվանական (դրամական) աշխատավարձի հավելաճի և գործազրկության մակարդակի միջև հակադարձ կապի առկայությունը: Այդ կապի գծապատկերը տնտեսագիտության տեսության մեջ հայտնի է որպես Ֆիլիպսի կոր: Այս կորը հաստատեց քեյնսյան այն պատկերացումը, որ լրիվ զբաղվածությունը և գների կայունությունը անհամատեղելի են. հնարավոր չէ հասնել լրիվ զբաղվածության՝ առանց գնաճի (ինֆլացիայի):

2) Ճիշտ է բ-ն:

Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները պատճառաբանում են առաջարկի շոկերով: 20-րդ դարի 70-80-ական թթ. զարգացած երկրներում ծավալված իրադարձությունները փաստում էին, որ տնտեսությունում գրանցված գնաճի բարձր տեմպերն ուղեկցվել են ոչ թե գործազրկության մակարդակի նվազմամբ, այլ աճով: Ստագֆլյացիան Ֆիլիպսի կորի կողմնակիցները մեկնաբանում են կորի աջ և վերև տեղաշարժով, որտեղ գործազրկության յուրաքանչյուր մակարդակ ուղեկցվում է առավել բարձր գնաճով կամ գնաճի յուրաքանչյուր մակարդակ՝ առավել բարձր գործազրկությամբ: Գնաճի և գործազրկության միաժամանակյա աճը՝ ստագֆլյացիան, տնտեսագետները բացատրում են ամբողջական առաջարկի նվազմամբ ($AS \downarrow$), որի պատճառը արտադրանքի միավորի հաշվով ծախսերի աճն է ($AC \uparrow$):

Թեսո N 16.դ

1) Ճիշտ է բ-ն:

Ըստ մոնետարիստների՝ երկարաժամկետ հատվածում գործազրկության ցանկացած մակարդակ համապատասխանում է գոր-

ծագրկության բնական մակարդակին: Մոնետարիստները գործազրկության և գնաճի միաժամանակյա աճը՝ ստագֆլյացիան, բացատրելու համար առաջ քաշեցին բնական մակարդակի հիպոթեզը, ըստ որի՝ տնտեսությամբ հատուկ է երկարաժամկետ հավասարակշռությունը գործազրկության բնական մակարդակի պայմաններում: Մոնետարիստների կողմից գնաճի և գործազրկության աճի տեմպերի փոփոխությունները քննարկվում են կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով:

2) Ճիշտ է դ-ն:

Ըստ մոնետարիստների՝ կարճ ժամանակահատվածում գործազրկության և գնաճի միջև առկա է բացասական կապ: Մոնետարիստները ընդունում են Ֆիլիպսի կորը միայն կարճաժամկետ հատվածում և մերժում՝ երկարաժամկետ հատվածում: Ըստ մոնետարիստների՝ կարճ ժամանակահատվածում գործազրկության և գնաճի միջև առկա է բացասական կապ, եթե գնաճի փաստացի տեմպը բարձր է կամ ցածր սպասվածից, իսկ երկարաժամկետ հատվածում Ֆիլիպսի կորը ուղղահայաց է գործազրկության բնական մակարդակի պայմաններում:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Թեմա 1. Տնտեսագիտական մտքի պատմության ներածություն

1. Տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրության առարկան, պարբերացումը և խնդիրները:

Թեմա 2. Տնտեսագիտական միտքը Հին աշխարհում

1. Հին Արևելքի տնտեսությունները և տնտեսագիտական պատկերացումների առանձնահատկությունները:

2. Տնտեսագիտական միտքը Հին Հունաստանում:

3. Տնտեսությունների ռացիոնալ կազմակերպման հիմնահարցերը Հին Հռոմում. տնտեսագիտական մեկնաբանությունները:

Թեմա 3. Տնտեսագիտական պատկերացումները Միջին դարերում

1. Տնտեսագիտական պատկերացումները միջնադարի Արևմտյան Եվրոպայում. կանոնականությունը (սքոլաստներ):

2. Միջնադարի տնտեսագիտական պատկերացումները արաբական երկրներում:

3. Միջնադարի հայ փիլիսոփաների տնտեսագիտական մեկնաբանությունները:

Թեմա 4. Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները

1. Քաղաքատնտեսության առևտրային՝ մերկանտիլիստական համակարգի հիմնական սկզբունքները և մերկանտիլիստական քաղաքականությունը:

2. Մերկանտիլիստական քաղաքականության գործնական արդյունքները և դրանց քեյնսյան մեկնաբանությունը:

Թեմա 5. Դասական քաղաքատնտեսության սկիզբը Անգլիայում և Ֆրանսիայում

1. Դասական քաղաքատնտեսության ձևավորումը Ֆրանսիայում՝ Բուազիլերի տնտեսական բարեփոխումների ծրագիրը:

2. Դասական քաղաքատնտեսության ձևավորումը Անգլիայում. Վ.Պետին և նրա «քաղաքական թվաբանությունը»:

3. Ֆիզիոկրատների տնտեսագիտական պատկերացումները, Ֆ. Բենեի տնտեսական աղյուսակը:

Թեմա 6. Ադամ Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը

1. Ա. Սմիթի «Ազգերի հարստություն» աշխատությունը, «ամերկույթ ձեռքը», ազատական հայեցակարգը:

2. Ա. Սմիթի արժեքի տեսությունը, ծախսային սկզբունքը:

3. Ա. Սմիթի եկամուտների տեսությունը:

4. Աշխատանքի բաժանումը և հարստության աճը: Արտադրողական աշխատանքի սմիթյան բնորոշումը:

Թեմա 7. Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը. Ժ. Բ. Սեյ, Թ. Ռ. Մալթուս

1. Տնտեսական պայմանների և ազգաբնակչության թվաքանակի համապատասխանեցման Մալթուսի մեկնաբանությունը:

2. Շուկայական համակարգի ինքնակարգավորման կանխավարկածը և Մալթուսի իրացման տեսությունը:

3. Սեյի շուկաների հայեցակարգը:

Թեմա 8. Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը

1. Միջազգային առևտուրը և Դ. Ռիկարդոյի համեմատական առավելությունների սկզբունքը:

2. Տնտեսական աճի հեռանկարները և եկամուտների հարաբերակցության մեկնաբանությունն ըստ Դ. Ռիկարդոյի:

3. Դ. Ռիկարդոյի արժեքի տեսության առանձնահատկությունները՝ պահանջարկի և ժամանակի գործոնների ազդեցությունների արտացոլումը:

Թեմա 9. Ջոն Ստյուարտ Միլը և նրա «Քաղաքատնտեսության սկզբունքները»

1. Միլի արժեքի (առաջարկի էլաստիկության գաղափարը) և միջազգային արժողության (պահանջարկի էլաստիկության գաղափարը) տեսությունները:

2. Միլի եկամուտների տեսությունը. սոցիալիզմ:

Թեմա 10. Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը

1. Կ. Մարքսի տնտեսագիտական տեսությունը և դրա ժամանակակից նշանակությունը:

2. Ապրանքի և նրա հատկությունների մարքսյան բնորոշումը, ծառայությունների հիմնախնդիրը:

3. Աշխատանքի մարքսյան բնորոշումը և արժեքի աշխատանքային տեսության բովանդակությունը:

4. «Կապիտալ» հասկացության մարքսյան բնորոշումը, հաստատուն և փոփոխուն կապիտալները:

5. Շահագործման մարքսյան տեսությունը, հավելյալ արժեքը:

6. Ներճյուղային ու միջճյուղային մրցակցությունները և շահույթի միջին նորմի ձևավորումն ըստ Կ. Մարքսի:

7. «Աշխատուժ» հասկացության մարքսյան ձևակերպումը, աշխատանքը և աշխատուժը:

8. Կապիտալիստական հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման հնարավորությունների մարքսյան մեկնաբանությունը:

Թեմա 11. Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ

1. Պատմական դպրոցի ձևավորման նախադրյալները, հիմնական տեսական սկզբունքները: Զարգացման փուլերը:

2. Դասական քաղաքատնտեսության հիմնարար սկզբունքների քննադատությունը պատմական ուղղության հիմնադիրների կողմից. «ազգային տնտեսագիտության» վարկածը:

Թեմա 12. Մարժնալիզմ, սահմանային օգտակարության տեսությունը

1. Բնական (բնածին) ու սահմանային օգտակարությունները՝ սահմանային օգտակարության նվազման օրենքը:

2. Գոտենի օրենքները և արժողության սահմանային օգտակարության տեսությունը:

Թեմա 13. Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը

1. Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան՝ ըստ Ա. Մարշալի «Էկոնոմիքսի սկզբունքների»:

2. Պահանջարկի մարշալյան սահմանումը, պահանջարկի գնային առաձգականությունը, սպառողի ռենտան. հավասարակշիռ գինը:

3. Առաջարկի մարշալյան սահմանումը, ժամանակի գործոնը և արտադրության սահմանային ծախսերը. հավասարակշիռ գինը:

Թեմա 14. Ինստիտուցիոնալիզմ

1. Ինստիտուցիոնալիզմի ձևավորման նախադրյալները (Թ. Վերլեն), դասական հիմնադրությունների քննադատությունը:

2. Ինստիտուցիոնալիզմի հիմնական սկզբունքները և ուղղությունները:

3. Կապիտալիզմի բարեփոխման վերլենյան տեսականը, Վերլենի էֆեկտը:

4. Ջոն Գելբրեյթ, օլիգոպոլ շուկան՝ հավասարակշռող ուժը և բարեկեցությունը:

Թեմա 15. Քեյնսյան տեսությունը

1. Ջ. Մ. Քեյնսը և նրա «Ընդհանուր տեսություն» աշխատությունը:
2. Դասական հայեցակարգի քեյնսյան մեկնաբանությունը:
3. Շուկայական հավասարակշռության հաստատման Մալթուսի և Սեյի հայեցակարգերը քեյնսյան տեսանկյունից:
4. Շուկայի ինքնակարգավորման վարկածի քեյնսյան մեկնաբանությունը:
5. Կախյալ և անկախ փոփոխականները Քեյնսի մակրոտնտեսական մոդելում:
6. Սպառման հակումը, բազմարկման էֆեկտը և քեյնսյան բազմարկիչը:
7. Ոչ լրիվ զբաղվածության պայմաններում հավասարակշռության հաստատման մեխանիզմի քեյնսյան մեկնաբանությունը:
8. Տոկոսի դասական մեկնաբանության քեյնսյան քննադատությունը, կանխիկի գերապատվության քեյնսյան տեսակետը:
9. Տնտեսական անկման կանխարգելման և հաղթահարման քեյնսյան հանձնարարականները:

Թեմա 16. Նոր պահպանողական տեսությունները

1. Մոնետարիզմի ձևավորման նախադրյալները, հիմնական հատկանիշները:
2. Փողի քանակական տեսությունը և դրա մոնետարիստական մեկնաբանությունը:
3. Ֆիլիպսի կորի էմպիրիկ ու տեսական հիմնավորումը և ստագֆլյացիան:
4. Երկարաժամկետ հատվածում գործազրկության և գնաճի կապի մեկնաբանությունը նոր պահպանողական հայեցակարգերում (մոնետարիզմ, ռացիոնալ և ադապտիվ սպասումների տեսություններ):
5. Բանական (ռացիոնալ) և հարմարվողական (ադապտիվ) սպասումների տեսությունները:

Ամփոփում

1. Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան և դրա էվոլյուցիան:

2. Արժողության (գին, արժեք, փոխանակային արժեք) տեսության էվոլյուցիան:

3. Շահույթի (զուտ արդյունք, հավելյալ արդյունք ու արժեք և այլն) տեսության էվոլյուցիան:

4. Շուկայի ինքնակարգավորման վարկածը. կողմ և դեմ փաստարկներ:

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ*

1. Տնտեսական համակարգերի տիպաբանության չափանիշները
2. Հասարակության տնտեսական զարգացման փուլերի սահմանագատման հայեցակարգերը
3. Ինդուստրիալ հասարակության հատկանիշները և հակասությունները
4. Գիտելիքը որպես տնտեսական գործոն
5. Հետինդուստրիալ տնտեսության բնորոշ գծերը և ձևավորման նախադրյալները
6. Հետինդուստրիալ հասարակություն. հիմնական տնտեսական բնութագրերը
7. Ծառայությունների ոլորտի զարգացման միտումները ժամանակակից պայմաններում
8. Ժամանակակից խառը տնտեսության էությունը և բովանդակությունը
9. Շուկայական տնտեսության ձևավորումը արևմտաեվրոպական երկրներում և դրա հիմնական հատկանիշները
10. Կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացի լուսաբանումը Ա. Մմիթի և Կ. Մարքսի կողմից (համեմատական վերլուծություն)
11. Մրցակցության և գների համակարգի դերը շուկայական տնտեսության մեջ
12. Արժեքը և գինը մարքսյան հայեցակարգում
13. Շահույթի (հավելյալ արժեքի) մեկնաբանության էվոլյուցիան
14. Արտադրության ծախսերը և շահույթը
15. «Կապիտալ» հասկացությունը և դրա մեկնաբանության էվոլյուցիան

* Կուրսային աշխատանքների ցանկը կարող է լրացվել նաև ուսանողների առաջարկված թեմաներով:

16. Մարդկային կապիտալ, էությունը և դերը ժամանակակից տնտեսության մեջ

17. Փողի էության և ծագման մեկնաբանությունը Կ. Մարքսի «Կապիտալում»

18. Արժեքի աշխատանքային տեսության ձևավորումը և էվոլյուցիան

19. Արժեքի (գնի) տեսության էվոլյուցիան

20. Դասական տնտեսագիտության կայացումը և զարգացման փուլերը

21. Ընդհանուր հավասարակշռության դասական հայեցակարգը և դրա անկատարությունները

22. Բացարձակ և հարաբերական առավելությունները արտաքին առևտրում

23. Շուկայական ինքնակարգավորման մեխանիզմը և պետությունը. Պիգուի և Քուուզի հայեցակարգերը

24. Շուկայական համակարգում պետության սահմանափակ դերի տեսական հիմնավորումը

25. Տնտեսության պետական հատվածը և նրա դերը զարգացած երկրներում

26. Ժամանակակից շուկայական տնտեսությունները և պետության տնտեսական դերը

27. Զբաղվածության կարգավորման պետական քաղաքականությունը

28. Մեծ դեպրեսիան և մակրոտնտեսական հավասարակշռության քեյնսյան հայեցակարգի ձևավորումը

29. Դասական դպրոցի սկզբունքները և դրանց քեյնսյան մեկնաբանությունները «Ընդհանուր տեսությունում»

30. Սպառման և խնայողությունների կապի քեյնսյան մեկնաբանությունը

31. Խնայողությունների և ներդրումների կապը քեյնսյան հայեցակարգում

32. Բազմարկման (մուլտիպլիկատորի) էֆեկտը քեյնսյան հայեցակարգում

33. Փողի և տոկոսի քեյնսյան տեսությունը
34. Ընդհանուր հավասարակշռության քեյնսյան հայեցակարգը և դրա անկատարությունները
35. ՀՀ տնտեսական իրավիճակի համեմատական վերլուծությունը AD-AS և քեյնսյան հայեցակարգերի միջոցով
36. Նեոդասական և քեյնսյան մակրոտնտեսական մոդելների համեմատական վերլուծությունը
37. Շուկայական մեխանիզմի մեկնաբանությունները նեոդասական և քեյնսյան հայեցակարգերում
38. Անցումային տնտեսության հիմնախնդիրները և քեյնսյան քաղաքականության սկզբունքները
39. Փողի մոնետարիստական տեսությունը
40. Ֆիլիպսի կորը և դրա մոնետարիստական մեկնաբանությունը
41. Փողի էության և գործառույթների հայեցակարգային մեկնաբանությունների համադրումը
42. Տնտեսական աճի հետինդուստրիալ փուլի հայեցակարգը
43. Տնտեսական պարբերաշրջանի և տատանումների հայեցակարգային մեկնաբանությունները
44. Ցիկլային ճգնաժամերը և հակաճգնաժամային քաղաքականությունը
45. Տնտեսական զարգացման երկար ալիքների հայեցակարգը
46. Գործազրկության հայեցակարգային մեկնաբանությունները
47. Գործազրկության և գնաճի կապը (Ֆիլիպսի կոր) անցումային տնտեսության մեջ
48. Զբաղվածության միտումները և հիմնախնդիրները անցումային տնտեսությունում
49. Պետության տնտեսական դերը և գործառույթները անցումային տնտեսությունում
50. Անցումային տնտեսության հիմնախնդիրները և մոնետարիզմը
51. Վերափոխումների «ազատական» և «աստիճանական» եղանակների համեմատական վերլուծությունը

52. Ազատ մրցակցությունը և ՀՀ շուկայական կառուցվածքի առանձնահատկությունները

53. Սպառողի ավելցուկի իրացման հիմնախնդիրները ՀՀ շուկայական կառուցվածքի պայմաններում

54. Արտադրողի ավելցուկի իրացումը և վերաբաշխումը ՀՀ շուկայական կառուցվածքի պայմաններում

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ (ԵՊՀ տնտեսագիտության ֆակ.), «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ.:
2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание, Москва, “Дело ЛТД”, 1994.
3. Всемирная история экономической мысли, т. 1, Москва, “Мысль”, 1987 г.
4. Жамс Э., История экономической мысли XX века, Москва, «ИЛ», 1959 г.
5. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер. с англ., Москва, «Прогресс», 1968 г.

ՕԺԱՆԴԱԿ, ԼՐԱՅՈՒՑԻՉ

1. Թովմասյան Ն., Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը 9-14-րդ դարերում, Երևան, «Հայաստան», 1970 թ.:
2. Գ. Կիրակոսյան, Մ. Թավադյան, Ս. Գրիգորյան, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2004 թ.:
3. Մարտիրոսյան Ա., Տնտեսագիտական մտքի պատմություն, ուսումնառության նյութեր, Երևան, «Ոսկան Երևանցի», 2005 թ.:
4. История экономических учений (современный этап), Под ред. А. Г. Худокормова, Москва, 1998.
5. Galbraith John K., History of Economics, The Past and Present, London, 1987.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

1. www.bea.gov
2. www.google.com
3. www.federalreserve.gov
4. www.conferenceboard.com
5. www.dowjones.com
6. www.opec.org
7. www.worldbank.org
8. www.bls.gov
9. www.wto.org

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գազիկ Սերյոժայի Գալստյան
Հասմիկ Գառնիկի Մարգարյան

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 04.07.2016:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մանուլը՝ 8,5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ԿՐԱՏԱՐԱՎՅՈՒԹՅՈՒՆ
ՆՐԵՎԱՆ 2016
publishing.ysu.am